

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ

ՀԱՅՈՅ ՅԵՂԱՍՊՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ – ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼԵԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ
ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ԴՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ) 52
Ս 850

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության
թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիրներ՝

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սարգիս Հարությունյան
Պատմական գիտությունների դոկտոր Հավրենտի Բարսեղյան
Պատմական գիտությունների թեկնածու Ալեքսանդր Սաֆարյան

ՍՎԱԶԼՅԱՆ Վ. Գ.

Ս 850 Հայոց ցեղասպանությունը և պատմական հիշողությունը
/տմբ.՝ Ս. Բ. Հարությունյան, Լ. Ա. Բարսեղյան, Ա. Վ. Սա-
ֆարյան: ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-
ինստիտուտ - Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2003, 144 էջ:

Աշխատության մեջ ներկայացված են Հայոց ցեղա-
սպանության (1915-1922 թթ.) պատմական իրադարձություն-
ները, որոնք մանրամասնված ու հիմնավորված են հեղինակի
կողմից շուրջ 50 տարիների ընթացքում Հայաստանում և
Սփյուռքում գրառված, ձայնագրված ու տեսագրված ակա-
նատես-վերապրողների հաղորդած ժողովրդական վկայու-
թյուններով:

Ուսումնասիրությանը կցված են ուսերեն, ֆրանսե-
րեն և անգլերեն ամփոփումներ:

Նախատեսվում է պատմաբանների, բանագետների,
իրավագետների, քաղաքագետների և ժողովրդագիտու-
թյամբ հետաքրքրվող ընթերցող լայն շրջանների համար:



Բանասիրական գիտությունների դոկտոր,

ժողովրդագետ Վերժինե Սվազյանը

Հայոց ցեղասպանությունից վերապրած Մարիամ Բաղդիշյանի

(ծնվ. 1909 թ., Մուսա լեռ) հուշերն ու երգերը գրի առնելիս

Ս 0503020913 2003
703(02) - 03

ԳՄԴ 63.3 (2Հ) 52

ISBN 5 - 8080 - 0520 - 5

© Վ. ՍՎԱԶԼՅԱՆ, 2003

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Շուրջ 50 տարիների ընթացքում բառ առ բառ, պատառիկ առ պատառիկ գրի առնելով, ձայնագրելով ու տեսագրելով, ստեղծվել ու ամբողջացվել են սույն ուսումնասիրության սկզբնաղբյուրները՝ ժողովրդական հուշերն ու պատմական բնույթի երգերը:

Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում Հայոց ցեղասպանությունից հրաշքով փրկված այն սերունդներին, որոնք հերոսաբար դիմագրավելով կյանքի դաժան պայմաններին, իրենց հիշողության խորխորատներում անթեղած պահել, պահպանել ու մեզ են հաղորդել իրենց տեսածն ու հիշածը՝ անհետ կորստից փրկելով հայ ժողովրդի պատմական հավաքական հիշողությունը, որպեսզի այն ներկայացվի աշխարհին և մարդկության արդար դատին:

Վ. Ս.

Սույն ուսումնասիրությունն ընդգրկում է Հայոց ցեղասպանությունից վերապրած սերնդից անմիջականորեն գրի առնված ժողովրդական բանավոր վկայություններ, երգեր, որոնք շուրջ 50 տարիների ընթացքում մեծ համբերությամբ ու նվիրվածությամբ գրի է առել բանասիրական գիտությունների դոկտոր Վերծինե Սվազլյանը:

Աշխատությունն ունի հույժ պատմական, անգամ քաղաքական արժեք ու նշանակություն, մասնավորապես այնտեղ գետնեղված Հայոց ցեղասպանության սահմկեցուցիչ տեսարանները պատկերող բազմաթիվ հուշապատումներով և դերգորյան տառապանքներն ու ողբերգական մտորումներն արձանագրող ժողովրդական հայերեն ու թուրքալեզու երգերով:

Կատարված է տքնաջան ու շնորհակալ մեծ աշխատանք Հայոց ցեղասպանությունից վերապրողների (որոնք արդեն չկան) խամրող հիշողությունից և հավերժ մոռացության վտանգից հայ ժողովրդի արևմտահայ հատվածի ողբերգական ու հերոսական պատմության անզուգական հուշերն ու երգերը փրկելու և անմահացնելու ուղղությամբ:

Այդ նյութերն իսկապես պատմական կարևորագույն վավերագրեր են հայոց մեծագույն ողբերգության ցնցող պատկերները ժողովրդական կենդանի լեզվով վերարտադրելու առումով:

Սույն ուսումնասիրության մեջ հեղինակն իր գրառած հարուստ ու բազմազան նյութերը հմտորեն զուգակցել է պատմական ստույգ փաստերի հետ և ժողովրդական այդ նյութերը

դարձել են պատմական ճշմարտությունները հավաստող, հիմնավորող, մանրամասնող ժողովրդական յուրօրինակ վավերագրեր: Հարկ է նշել, որ հեղինակն առաջինն է գիտական շրջանառության մեջ դրել Հայոց ցեղասպանության շուրջ հյուսված հիշյալ նյութերը՝ հատկապես ժողովրդական հուշերն ու թուրքալեզու երգերը:

Աշխատությունը համալրված է վերապրողների լուսանկարներով և ամենակարևորը՝ թուրքալեզու երգերին կցված գրառողի կատարած թարգմանություններով, որոնք մեծապես դյուրացնում են նյութերի ընկալումը:

Ականատեսների այդ հուշերը և մանավանդ թուրքալեզու երգերն ունեն պատմական վավերագրերի արժեք ոչ միայն հայ ժողովրդի ողբերգական այդ շրջանի պատմությունը ճիշտ հասկանալու և ըմբռնելու իմաստով, այլև Հայ Դատի պաշտպանությունն առավել հիմնավորելու և հատկապես թուրք ու թուրքամետ պատմաբաններին ժողովրդական հուշերով և հենց թուրքալեզու երգերով ու նրանցում հնչող մեղադրանքներով հակահարված տալու առումով:

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Հայաստանի Հանրապետության
Գիտությունների Ազգային Ակադեմիայի
թղթակից անդամ*

Որքան տարիներն անցնում են, այնքան ավելի է մեծանում հետաքրքրությունը Հայոց ցեղասպանության նկատմամբ, որը պայմանավորված է վերջերս բազմաթիվ երկրների կողմից պատմական այդ փաստի ճանաչման իրողությամբ: Սակայն թուրք ու թուրքամետ պատմաբաններն առ այսօր ամեն կերպ ճգնում են խեղաթուրել հայ ժողովրդի համար ճակատագրական դարձած 1915-1922 թթ. պատմական ստույգ իրողությունները:

Հայոց ցեղասպանության մասին տարբեր լեզուներով լույս են տեսել բազմաթիվ ուսումնասիրություններ, փաստաթղթերի ժողովածուներ, քաղաքագետների և հասարակական գործիչների ասույթներ, գեղարվեստական ստեղծագործություններ, սակայն հրատարակված այդ գրականության մեջ բացակայել են պատմական հիշյալ իրադարձություններից անմիջական տպավորություններ ստացած ականատես-վկա վերապրողների պատմած հուշերն ու հաղորդած ժողովրդական երգերը, որոնք ևս պատմաճանաչողական և փաստավավերագրական կարևոր արժեք են ներկայացնում: Քանի որ հայ ժողովուրդն ի՛նքն է կրել այդ բոլոր անասելի տառապանքները, հետևաբար, ժողովուրդն ի՛նքն է այդ զանգվածային ոճրագործության առարկան (object): Եվ ինչպես ամեն մի հանցագործություն բացահայտելիս որոշիչ են վկաների ցուցմունքները, նույնպես և այս պարագայում պետք է հենվել նաև ականատես վերապրողների վկայությունների վրա, որոնցից յուրաքանչյուրն իրավաբանական տեսակետից ապացուցողական նշանակություն ունի Հայ Դատի արդարացի լուծման և Հայոց ցեղասպանության ճանաչման գործում:

Տակավին 1955 թվականից, երբ Խորհրդային Հայաս-

տանում Հայոց ցեղասպանության մասին բացահայտ խոսել չէր կարելի, երբ մազապուրծ վերապրած ականատես-վկա տարագիր հայրենադարձները հանիրավի զրպարտվելու և քստրվելու վախ ու դողի մեջ էին ապրում, ես՝ Երևանի Խ. Աբովյանի անվան Մանկավարժական ինստիտուտի ուսանողս, արհամարհելով ամեն կարգի դժվարություն և գիտակցելով ժողովրդական բանավոր ավանդության այդ կարգի նյութերի պատմագիտական և փաստավավերագրական արժեքը, սկզբում արևմտահայի արյան կանչով և անձնական նախաձեռնությամբ, իսկ 1960 թվականից Հայաստանի գիտությունների ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հովանու ներքո, գիտական այլ աշխատանքներին զուգահեռ, ամառվա կիզիչ արևին, ձմեռվա ցուրտ սառնամանիքին, թաղից թաղ, գյուղից գյուղ ոտքով շրջելով, Հայոց ցեղասպանությունից հրաշքով փրկված ականատես-վկաներին որոնել-գտնելով, նրանց հոգեբանորեն մոտենալով, առանց կողմնակի հարցերով շեղելու նրանց ուշադրությունը, այլ թողնելով ազատ արտահայտել իրենց անմիջական տպավորությունները, գրի ենք առել (նաև ձայնագրել) նրանց պատմած սահմուկեցուցիչ հուշերը, տպավորիչ գրույցներն ու պատմական տարաբնույթ երգերը, որոնք մինչ այդ ո՛չ Հայրենիքում և ո՛չ Սփյուռքում չէին գրավել և հրատարակվել [Սվազյան 1984, 1994, 1995]:

Այնուհետև, 1995 թ. Ծիծեռնակաբերդում (Երևան), հիմնադրված Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրինության ընձեռած հնարավորություններով, շարունակել ենք այդ աշխատանքները [Սվազյան 1997ա,

1997բ, 1999] ոչ միայն գրառելով, ձայնագրելով, այլև՝ տեսագրելով (օպերատոր՝ Գալուստ Հալաջյան) վերապրող ականատես-վկաների պատմած հուշերը, որոնք, համալրելով անցյալում և հետագայում մեր կողմից գրաված ու տեսագրված այլ հուշերի, ինչպես նաև երգերի հետ, վերծանել և ամփոփել ենք **«Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ»** ստվարածավալ հատորի մեջ [Սվազյան 2000]: Ներկա ուսումնասիրության բնագրային հղումները՝ ականատես-վկա վերապրողների պատմած հուշերի և նրանց հաղորդած պատմական երգերի հատվածները, մեջբերված են հիշյալ ժողովածուից (600 միավոր)՝ համապատասխան համարակալմամբ:

Սույն հատորում ի մի բերված ժողովրդական բոլոր նյութերի բնագրերը, ձայներիզներն ու տեսանկյունները պահվում են ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի արխիվում:

Ժողովրդական այդ նյութերը հաղորդած ականատես-վկաները (600 վերապրող) գերազանցապես ավագ սերնդի ներկայացուցիչներն են՝ իրենց պատմական բնօրրանից բռնի կերպով արտաքսված հայերը, որոնք 1915-1922 թթ. Հայոց ցեղասպանության ժամանակ տարագրվել են Արևմտահայաստանից, Կիլիկիայից (1921 թ.) և Անատոլիայի հայաբնակ գավառներից (1922 թ. Իզմիրի աղետ):

Պատմական այդ իրադարձությունների ընթացքում արևմտահայության զգալի մասն անխնա բնաջնջվել է, իսկ քստորի ճամփաներին կողոպտված, ունեզրկված և ուժասպառ, հրաշքով փրկվածները, գաղթի ճամփաների զրկանքները ճաշակելով և բազմաթիվ զոհեր տալով, հասել են Արևել-

յան Հայաստան կամ՝ սփռվել աշխարհի տարբեր երկրներ: Հետագայում այդ մնացորդացի որոշ մասը Կ.Պոլսից, Հունաստանից, Ֆրանսիայից, Սիրիայից, Լիբանանից, Իրաքից, Եգիպտոսից, Բալկանյան երկրներից և Ամերիկայից պարբերաբար ներգաղթել են Մայր Հայաստան և բնակություն հաստատել իրենց երբեմնի բնօրրանների հիշատակները խորհրդանշող Երևանի մերձակա նորակառույց թաղամասերում (Այգեստան, Սարի թաղ, Նոր Բութանիա, Նոր Արենշ, Նոր Կիլիկիա, Նոր Արաբկիր, Նոր Զեյթուն, Նոր Խարբերդ, Նոր Սեբաստիա, Նոր Մալաթիա, Նոր Կեսարիա, Նոր Հաճըն, Նոր Մարաշ, Նոր Այնթապ, Նոր Մուսա լեռ, Նոր Եդեսիա), ինչպես նաև Էջմիածնում, Արմավիրում, Արարատում, Թալինում, Հրազդանում, Գյումրիում, Վանաձորում և այլուր:

Հայոց ցեղասպանությունից հրաշքով փրկված վերապրող ականատես-վկաներին մենք մշտապես հանդիպել ենք ինքնամփոփ ու լուռ՝ իրենց մտորումների մեջ խորասույզ: Այդ խորհրդավոր լուծությունը ևս ունեցել է իր պատճառը, քանի որ տասնամյակներ շարունակ խորհրդային Հայրենիքում տիրող քաղաքական արգելքները թույլ չեն տվել իրենց անցյալի մասին ազատ ու անկաշկանդ պատմել կամ վիպել: Հետևաբար, այդ կարգի նյութերը մեծ դժվարությամբ ենք հայտնաբերել ու գրի առել:

Շուրջ 50 տարիների ընթացքում մեր հետևողական պրպտումներով, ինչպես Հայաստանի տարբեր շրջաններում, նույնպես և Հունաստան, Ֆրանսիա, ԱՄՆ և Թուրքիա կատարած մեր անձնական կամ գիտաժողովային կարճատև ուղևորությունների ընթացքում մշտապես որոնել, հայտնաբերել ենք Հայոց ցեղասպանությունից վերապրող ականատեսների ա-

վագ, միջին և կրտսեր սերունդների ներկայացուցիչներին, մոտիկից ծանոթացել նրանց հետ, թափանցել նրանց հոգու խոր-խորատները:

Տեղի տալով մեր թախանձագին հորդորներին՝ նրանք, պոռթկացող հուզումով կրկին վերապրելով իրենց տխուր անցյալը, արցունքախառն հեկեկոցներով սկսել են պատմել իրենց հիշողության մեջ անթեղած սրտամորմոք հուշերը, թե ինչպես երիտթուրքական ոստիկանները բռնի տեղահանել են իրենց պապենական շեն բնօրրանից և իրենց աչքերի առաջ անմարդկայնորեն հոշոտել իրենց ծնողներին ու հարազատներին, պատվազրկել իրենց մայրերին ու քույրերին, քարերով ճխլել նորածին մանուկներին...:

Ականատես-վկաների պատմած հուշերում արտացոլված են հայրենի բնաշխարհի գեղեցկությունները, նրանց նահապետական առօրյա կենցաղն ու սովորույթները, նրանց ապրած ժամանակաշրջանը՝ հասարակական-քաղաքական կյանքի պայմանները, նշանակալից պատմական իրադարձությունները, երիտթուրքական կառավարության պարագլուխների (Թալեաթ, Էնվեր, Զեմալ, Նազիմ, Բեհաեդդին Շաքիր) գործադրած դաժանությունները (հարկահավաք, զորահավաք, զինահավաք, ողջակեզ, բռնագաղթ, ջարդ, կոտորած), նրանց կազմակերպած բռնի տեղահանությունները դեպի ամայի անապատներ (Դեյր-Էլ-Զոր, Ռաս ուլ Այն, Ռաքքա, Հոմա-Համա, Մեսքենե, Սուրուն), հայերի կրած անասելի տառապանքները (քայքա ու ժանտաղվելու աստիճան, ծարավ, քաղց, համաճարակ, մահվան սարսափ), ինչպես նաև արևմտահայ տարբեր հատվածների մղած արդար ու ազնիվ ոգորումներն ընդդեմ բռնության՝ պաշտպանելու համար իրենց ապրելու տար-

րական իրավունքը (1915 թ. վանի հերոսամարտ, Ծատախի, Ծապից-Գարահիսարի, Սասունի գոյամարտեր, Մուսա լեռան, Ուրֆայի, ավելի ուշ՝ 1920-1921 թթ. Այնթապի, Հանդնի հերոսամարտեր), այդ ինքնապաշտպանական մարտերի ազգային հերոսներ (շապիցաբարահիսարցի Անդրանիկ Օզանյան, վանեցի Արմենակ Եկարյան, Մեծն Մուրադ [Համբարձում Բոյաջյան], մուսալեռցի Եսայի Յաղուրյան, ուրֆացի Մկրտիչ Յոթենդրայրյան, այնթապցի Ադուր Լևոնյան, զեյթունցի Արամ Չոլաքյան, ազգային վրիժառու Սողոմոն Թեհլերյան) և բազմաթիվ այլ հայտնի ու անհայտ հայորդիներ, որոնք ժողովրդական զանգվածների հետ միաձուլված պայքարել են, մահատակվել, մահ դիմակայել ու վերապրել:

Ականատես վերապրողներից յուրաքանչյուրն իր կյանքի հուշը պատմել է իրեն հարազատ հայերեն խոսվածքով, հաճախ՝ բարբառով կամ օտարախառն հայերենով, մահ՝ թուրքերեն, քրդերեն, ֆրանսերեն, գերմաներեն:

Մեր գրի առած, ձայնագրած ու տեսագրած ժողովրդական բանավոր նյութերն ականատես վերապրողների անմիջական տպավորությունների վերհուշերն են, նրանց խոհերը, մտորումներն ու վկայությունները՝ արևմտահայությանը բաժին ընկած ճակատագրի կենդանի պատկերների ստույգ ու ճշմարտացի վերարտադրությամբ: Ականատես վերապրողներն անկախ իրենց մասնագիտությունից, իրենց ապրած դաժան կյանքի փորձով հարստացած և իմաստնացած անհատականություններ են, որոնց համար մախ և առաջ՝ «Մարդը մարդ պետք է լինի, միևնույնն է՝ հայ է, թե՛ թուրք», - ինչպես նախանշել է Արտավազդ Կտրածյանը (ծնվ. 1901 թ., Աղաբազար) իր պատ-

մած հուշի սկզբում [Սվազյան 2000¹: Վկայություն¹ 220, էջ 360]:

Նախապես հայերն ու թուրքերը համերաշխ են ապրել միմյանց հետ: Դերջանցի Առաքել Թագոյանը (ծնվ. 1902 թ.) վկայել է հայերի հաշտ ու խաղաղ դրացիական հարաբերությունները թուրք և քյուրդ բնակիչների հետ հատկապես դեպի Մշո Ս. Կարապետ ուխտագնացության օրերին. «...Ուխտավորներն զատ թուրք և քյուրդ բնակիչները ևս հավաքվում էին, մատաղ ուտում մեզ հետ, մեզ հետ ուրախանում, երգում, պարում...» [Սվ. 2000: Վկ. 96, էջ 203]:

Հարկ է նշել, որ Հայոց ցեղասպանության օրերին այդքան տանջանք ու տառապանք տեսնելուց հետո անգամ հայ վերապրողներն ատելություն չեն տածում թուրք հասարակ ժողովրդի նկատմամբ. «...Պիտի ասեմ մահ, որ հո բոլոր թուրքերը վատ չեն, նրանց մեջ էլ լավերը կան: Այդ երիտթուրքերի կազմակերպածն էր, թե չէ՝ ժողովուրդը լավն էր, և մենք թուրքերի հետ լավ հարաբերությունների մեջ էինք մշտական: Նրանց մեջ էլ լավ մարդիկ կան. դա էլ փաստ է», - ասել է Արդվինից Նեկտար Գասպարյանը (ծնվ. 1910 թ.) [Սվ. 2000: Վկ. 74, էջ 157]:

Սույն ուսումնասիրության մեջ պատմական ստույգ փաստերը համադրված, մանրամասնված ու լրացված են ականատես վերապրողների հաղորդած վավերական վկայություններով՝ ներկայացնելով Հայոց ցեղասպանության ընդհանուր պատմական ընթացքը:

¹ Սվազյան 2000 – Այսուհետև՝ Սվ. 2000: Վկայություն – Այսուհետև՝ Վկ.:

Ականատես-վկա վերապրողների պատմած հուշերը հնարավորություն են տալիս գիտական հետազոտության ենթարկել նաև այդ կարգի նյութերի ժանրային տիպաբանական առանձնահատկությունները:

Հայոց ցեղասպանության ականատես-վկաների պատմած հուշերը, որպես ժողովրդական բանավոր ավանդության տարատեսակ, իրենց կառուցվածքով կա՛մ հակիրճ են ու սեղմ, կա՛մ՝ ծավալուն ու երկարապատում, որոնք ներառում են նաև զանազան երկխոսություններ, մեջբերումներ, ժողովրդական բանահյուսության տարաբնույթ ժանրեր (երգ, վիպերգ, զրույց, առած-ասացվածք, օրհնանք, անեծք, աղոթք, երդում)՝ հաստատելու համար իրենց պատմածի հավաստիությունը, առավել արժանահավատ ու տպավորիչ դարձնելով իրենց բանավոր խոսքը: Մանավանդ, իրենք՝ *վերապրողները, բարոյական պատասխանատվություն և պարտքի գիտակցություն են զգացել իրենց պատմածի նկատմամբ:* Նրանցից շատերն իրենց հիշողությունները մեզ հաղորդելուց առաջ խաչակնքել են կամ երդվել: Իսկ երդումը նվիրական խոսք է՝ սրբություն, որը կեղծիք չի ընդունում: Ինչպես որ էրգրումցի Լորիս Պապիկյանը (ծնվ. 1903 թ.) սկսել է պատմել իր հուշը. «Նախ՝ ասես, եթե միտումնավոր կերպով գունազարդած լինեմ դեպքերն ու դեմքերը, թող նզովք լինի ինձ և ընդհանուրի արհամարհանքին արժանանամ...» [Սվ. 2000: Վկ. 90, էջ 191]:

Խնդրո առարկա հուշերը, ենթարկելով քանակական ու որակական մանրակրկիտ վերլուծության՝ պարզել ենք, որ, ինչպես առանց հիշողության մարդ չկա, նույնպես և *առանց հիշողության չկա ժողովուրդը*, քանի որ հիշողությունը մարդու կամ ժողովրդի ապրած տարիների կյանքն է, նրա անցյալը, նրա

պատմությունը:

Հայոց ցեղասպանությունը, որն իրագործվել է քսաներորդ դարասկզբին, անմիջականորեն ընկալվել է ականատեսների զգայարաններով, և այդ բոլորն *անջնջելի կերպով տպավորվել է նրանց հիշողության մեջ:* Ինչպես խոստովանվել է արդվինցի վերապրող Նեկտար Գասպարյանը (ծնվ. 1910 թ.). «...80 տարուց ավելի է անցել, բայց ես մինչև այսօր չե՛մ կարող մոռանալ իմ սիրելի վաղամեծիկ հայրիկին, մայրիկին, քեռուն, հարևաններին, տատիկին, մեր բոլոր ազգականներին, որոնք գազանաբար սպանվեցին և մեզի թողին անտեր ու անօգնական: Իմ ամբողջ կյանքում ես միշտ հիշում եմ այդ սարսափելի տեսարանները, որոնք տեսել եմ իմ աչքերով, և ես երբեք հանգիստ չունեմ: Այնքա՛ն եմ արցունք թափել...» [Սվ. 2000: Վկ. 74, էջ 157]:

Պատմական այդ իրադարձությունների ականատես-վկաները, ցավագնորեն վերապրելով իրենց տխուր անցյալը, մեզ են հաղորդել իրենց անձնական հուշերը՝ պատմական բնօրրանի, հայրենի օջախի, սիրելի հարազատների մասին, որոնք, ավա՛ղ, վաղուց չկան: Այդ անձնական հուշապատկերները նրանք կրել են իրենց ողջ կյանքի ընթացքում՝ չկարողանալով ազատագրվել ճնշող մղձավանջից: Եվ քանի որ վերապրողների պատմած հուշերը ներկայացնում են արևմտահայերին վիճակված պատմական յուրահատուկ իրադարձությունների անմիջական տպավորությունները, ուստի *հագեցած են խոր պատմականությամբ:*

Առարկայորեն վերարտադրելով տվյալ ժամանակաշրջանի կյանքը, միստ ու կացը, բարքերը, քաղաքական-հասարակական հարաբերությունները, *վերապրողների հա-*

դորդած հուշերն անմիջական են, ճշմարտացի, վավերական և ունեն հավաստի վկայությունների արժեք: Ինչպես խարբերոցի Եղսա Խալաջանյանը (ծնվ. 1900 թ.) դառնությամբ վկայել է. «...Հիմա 7 տուն ընտանիքեն միայն ես եմ մնացած...» [Սվ. 2000: Վկ. 108, էջ 218]:

Մալաթիացի Վերգինե Նաջարյանը (ծնվ. 1910 թ.) ևս հաստատել է. «...Մեր գերդաստանը շատ մեծ էր, մոտ 150-200 հոգի էինք: Բեռիներ, հորաքույրներ, հորեղբայրներ ունեի: Բոլորին Դեր Զորի ճամփաներին կոտորել են: Մնացել ենք երեք հոգի՝ ես, մայրիկս և եղբայրս...» [Սվ. 2000: Վկ. 125, էջ 239-240]:

Այդ մասին է վկայել նաև բալուցի Հազարխան Թորոսյանը (ծնվ. 1902 թ.). «Ասքան տարի անցած է, բայց մինչև հիմա գիշերները քուն չունիմ, անցած-դարձածները աչքիս առջև կուգան՝ մեռելները, սաղերը կհաշվեմ» [Սվ. 2000: Վկ. 120, էջ 232]: Այնպես որ, նրանց հաղորդած նույնիսկ թվային հաշվարկները ստույգ են:

Մշեցի Հրանտ Գասպարյանը (ծնվ. 1908 թ.) հատուկ ընդգծել է այդ հանգամանքը՝ իր պատմած հուշի վերջում հավաստիացնելով. «...Ես ինչ որ տեսել եմ, էն իմ աչքերով տեսածը պատմեցի ձեզ: Ամբողջ աչքիս դեմն է իմ տեսածը: Խնուսից ոչ մի բան չենք բերել, միայն ջաններս ենք ազատել: Մեր գերդաստանը 143 հոգի էինք. մի քուր, մի ախպեր, մերս ու ես փրկվանք» [Սվ. 2000: Վկ. 12, էջ 71]:

Հետագա ամբողջ կյանքի ընթացքում ականատես վերապրողների կողմից մեկ առ մեկ հաշվված, կետ առ կետ վերլուծված այդ փաստացի վկայությունները, պատմական իրադրությունների հետ համադրելիս, դույզն իսկ կասկածի տե-

ղիք չեն տալիս: Նրանք գրեթե միշտ իրենց պատմած հուշի մեջ հիշատակում են իրենց գերդաստանի ավագների՝ մեծհորը, մեծմորը, ծնողներին, նաև մոտիկ ազգականներին և ընտանիքի մյուս անդամներին՝ հաճախ նշելով նրանց անուններն ու ծննդյան թվերը: Հետևաբար նրանց հաղորդած տվյալներն այնքան են ստույգ ու հավաստի, որ նույնիսկ ցեղասպանության թոհ ու բոհի մեջ իրար կորցրած հարազատները, մեր գրքերում զետեղված հուշերն ընթերցելով, տասնյակ տարիներ անց, աշխարհի տարբեր ցամաքամասերից երբեմն գտնում են միմյանց և մեզ շնորհակալություն հայտնում:

Հուշապատումի մեջ հանդես եկող գլխավոր անձը պատմողի կերպարն է, որը ոչ միայն պատմում է պատմական նշանակալից իրադարձությունների, դեպքերի ու դեմքերի մասին, այլև իմաստավորում է դրանք՝ դրսևորելով իր աշխարհայացքի և անհատականության հիմնական հատկանիշները, իր մոտեցման ուրույն տեսակետը, իր յուրահատուկ լեզուն և ոճը: Հետևաբար, *ականատես-վկայի պատմած հուշը միանշանակ է իր եզակիությամբ*: Այն տվյալ անհատի անձնական կենսագրությունն է՝ անցյալի իր իմաստավորմամբ, որը, յուրաքանչյուր անգամ վերապատմելիս, հուշի առանցքային բովանդակությունը գրեթե մնում է անփոփոխ, քանի որ *նրանք այդ բոլորը պատմել են որպես սրբազան խոստովանանք*: Եվ ես, բանագետ-ժողովրդագետին հատուկ մասնագիտական պատասխանատվությամբ, հավատարիմ մնալով ականատեսների բանավոր խոսքին, նրանց պատմածները բառ առ բառ գրի եմ առել, գիտակցելով, որ նրանք իրենց ներանձնական սրբասուրբ գաղտնիքներն են ավանդում մեզ՝ *հետագա սերունդներին փոխանցելու համար*: Այստեղ տեղին է հիշատակել զեյ-

թունցու արժանավայել, խրոխտ կեցվածքով, 90-ամյա Կարապետ Թոզլյանի (ծնվ. 1903 թ.) խոսքերը: Թեպետ նա գրաճանաչ չէր, բայց *«ամեն իրիկուն քնանալեն առաջ աղոթքի պես»* մրմնջացել է իր հուշերն ու երգերը, որպեսզի չմոռանա: Հետևաբար նա սրբազան խանդավառանքով է մեզ հաղորդել իր մտապահածները, որպեսզի *«գրի առնվին, չմոռացվին և գալիք սերունդներն ալ սորվին»* [Սվ. 2000: Վկ. 342, էջ 413]: Այդ առումով նշանակալից են նաև երգնկացի վերապրող, հայտնի գրականագետ դարձած Գառնիկ Ստեփանյանի (ծնվ. 1909 թ.) պատմած հուշի վերջին խոսքերը. *«...Այն, ինչ կատարվեց 1915 թ. մեր ժողովրդի, մեր գերդաստանի հետ, որը 100-ից ավելի էր և հազիվ 15 հոգի ազատվեց՝ ահավոր էր: Իմ մոր կողմից բոլորը սպանվել են կամ ողջ-ողջ լցրել են փոսը: Ասում են՝ հողը շարժվում էր նրանց վրա: Եղեռնին զոհ գնացին նաև Ստեփանյանները, չորս հորաքույրներիս ընտանիքները: Դա մի ամբողջ ողջակիզում էր: Միշտ մտորում եմ, թե մենք կարո՞ղ ենք արդյոք մոռանալ, բայց մենք իրավունք չունենք մոռանալու, քանի որ մենք փոքր թիվ ենք: Վրեժխնդրության կոչ չեմ անում, բայց ես չեմ կարող խորհուրդ տալ, որ մոռանանք: Հայ ժողովուրդը չի կարող մոռանալ այն, ինչ տեսավ իր աչքերով: Եվ ինչպես Ավետիս Ահարոնյանը² է ասել. «Այսքան չարիք եթե մոռանան մեր որդիք, թող ողջ աշխարհը հայուն կարդա նախատիքը»» [Սվ. 2000: Վկ. 95, էջ 202]:*

Միաժամանակ, *վերապրողների պատմած հուշերը նաև համանման են:* Բանի որ տարբեր վայրերում, սեռատարիքային տարբեր խմբերի (տղամարդ, կին, ավագ, միջին,

կրտսեր սերունդներ) պատմած հուշերն իրարից անկախ, գրեթե նույնությամբ նկարագրում են պատմական միևնույն ժամանակաշրջանի իրադարձությունները, պատմական համանման դեպքերն ու դեմքերը, իրենց տեսած ու զգացած նույն սարսափազդու տեսարաններն ու դաժանությունները, որոնք, համադրվելով, գալիս են միմյանց հաստատելու, միմյանց շարունակելու, լրացնելու և ամբողջացնելու՝ *միտվելով անձնականից ու առարկայականից դեպի համընդհանուրն ու համագայինը:* Այդ հանգամանքն է նկատի ունեցել վերապրող Տիգրան Օհանյանը (ծնվ. 1902 թ., Կամախ), երբ իր պատմած հուշն ամփոփել է հետևյալ խոսքերով. *«...Իմ անցյալը իմ անցյալը չէ միայն, այլ նաև իմ ժողովրդի անցյալն է»* [Սվ. 2000: Վկ. 97, էջ 207]: *Հետևաբար, ականատեսների հուշերն իրենց ներքին բովանդակությամբ բնութագրում են ոչ միայն տվյալ անհատին ու նրա միջավայրը, այլև ողջ հավաքականությանը՝ դառնալով արևմտահայոց հավաքական պատմական հիշողությունը:*

Սակայն ժողովրդի պատմական հիշողությունը նաև հարատևելու կարողություն ունի: Թեպետ պատմական այդ իրադարձություններից շուրջ 90 տարի է անցել, և հրաշքով փրկված ականատես-վկաներից շատ-շատերն արդեն չկան, սակայն ավագ սերնդի ներկայացուցիչների պատմածներն ընտանիքներում այնքա՛ն են լսվել, այնքա՛ն են կրկնվել, որ դարձել են նաև հետագա սերունդների ժառանգությունը և, բերնից բերան անցնելով, շարունակում են հարատևել նաև հետագա սերունդների հիշողության մեջ՝ արդեն որպես պատմական զրույցներ: Պատմական այդ զրույցները մեծ մասամբ գրի ենք առել հետագա սերունդներից, որպես վկայություն այն իրողու-

² Ավետիս Ահարոնյան (1866, Իգդիրմավա – 1948, Փարիզ) – հասարակական, քաղաքական գործիչ, գրող, ՀՅԴ կուսակցության անդամ:

թյան, որ ժողովրդի պատմական հիշողությունը բնավ չի մեղմում, այլ շարունակում է գոյատևել մահ հետագա սերունդների հիշողության մեջ:

Մեզ հաջողվել է գրի առնել մահ Հայոց ցեղասպանության ակամատես վերապրողների հաղորդած պատմական բնույթի երգերն ու վիպերգերը, որոնց խոսքերը գեղարվեստորեն վերարտադրում են տվյալ ժամանակաշրջանի հասարակական կյանքի բազմազան երևույթները՝ երիտթուրք կառավարության կազմակերպած գորահավաքն ու զինահավաքը, տեղահանությունն ու կոտորածները, ինչպես մահ որդեկորույս մայրերի, որբի և որբանոցի, հայրենասիրության ու հերոսամարտերի մասին փաստացի, հուզիչ ու տպավորիչ դրվագներ: **Այդ երգերն իրենց թեմատիկ ինքնատիպությամբ ու գաղափարական բովանդակությամբ ոչ միայն նորույթ են հայ բանագիտության բնագավառում, այլև դրանց շնորհիվ նորովի է ընկալվում պատմական տվյալ ժամանակաշրջանը՝ իր բնորոշ կողմերով:** Հետևաբար, հորինվելով հայ ժողովրդի արևմտահայ հատվածին վիճակված պատմական յուրահատուկ իրադարձությունների անմիջական տպավորությունների ներքո, **այդ կարգի երգերը ևս հազեցած են պատմականությամբ:**

Պատմական այդ երգերը, օժտված անհատների կողմից հորինվելով, իրենց ժամանակին ունեցել են լայն տարածում, անցել են բերնից բերան, ենթարկվել ժողովրդական մշակման՝ ծնունդ տալով նորանոր, զանազան տարբերակներ: Նույնանման երգեր միաժամանակ հորինվել են զանազան տարբերակներով ու փոխակերպումներով, **հանգամանք, որը վկայում է պատմական այդ երգերի ժողովրդական բնույթը:** Ժո-

ղովրդական այդ երգերի բազմազան տարբերակները, պատմական ստուգությամբ հանդերձ, բնութագրվում են սեղմ պատկերավորությամբ և հայ միջնադարյան լալաց երգերին բնորոշ նուրբ մեղեդայնությամբ: Այդ երգերի յուրաքանչյուր տողն ու բառակապակցությունը մի ավարտուն պատկեր է, զանգվածային ողբերգության մի սահմոկեցուցիչ տեսարան, իսկ լալահառչ կրկներգերը համալրում և ամբողջացնում են բանաստեղծական, պատկերավոր մտքի հուզահոգեբանական կողմը:

Պատմական բնույթի երգերը հորինվել են ոչ միայն հայերեն, այլև՝ թուրքերեն, քանի որ պատմաքաղաքական տվյալ հանգամանքներում Օսմանյան Թուրքիայի որոշ գավառներում հայերեն խոսելն արգելված է եղել:

Չբացառելով երկարատև համատեղ կեցության պայմաններում երկու ժողովուրդների հոգևոր մշակույթների ազդեցություններն ու փոխազդեցությունները, հարկ է նշել, որ վկայություններ կան, թե «հայ բառ արտասանողներու լեզուները կտրած էին, հետևաբար, Կիլիկիայի մի շարք քաղաքներու (Սիս, Ադանա, Տարսոն, Անթեպ) և անոնց շրջակայքը ապրող հայերը կորուցել էին իրենց մայրենին» [Գալուստեան 1934: էջ 698]: Եվ կամ՝ «թուրքերուն հարստահարութիւնն ու հալածանքն այնքան խիստ եղաւ, որ հայախօս Անթեպ եղաւ թուրքախօս, Փոքր Ասիոյ ուրիշ գլխաւոր քաղաքներու պէս: Եւ վերջին կտրուկ հարուածը հայախօսութեանը ենիչերիներն էին, որ տուին՝ ծայրատելով հայերէն խօսողներուն լեզուները» [Սարաֆեան 1953: էջ 5]:

19-րդ դարի վերջի և 20-րդ դարասկզբի ազգագրագետ-բանահավաք Սարգիս Հայկունին, նկարագրելով իր ժամանակի արևմտահայերի քաղաքական, տնտեսական և հոգևոր

իրավիճակը, գրել է. «...Հայոց լեզուն թուրք մոլլաների կողմից արգիլուած էր, և, հայերէն եռո՞ւս քառո՞ւ մի հայհոյութիւնն ակատելով, սահմանուած էր տուգանք՝ հինգ ոչխարի քանակով» [Հայկունի 1895: էջ 297]:

Մեր գրառած ժողովրդական հուշերում ևս բազմաթիվ վկայություններ կան այն մասին, որ Քյոթահիայի, Բուրսայի, Ադանայի, Կեսարիայի, Էսքիշեհիի և այլ վայրերի հայերը հիմնականում թուրքախոս էին: Ադանացի վերապրող Միքայել Քեշիշյանի (ծնվ. 1904 թ.) վկայությամբ՝ «*արդեն արգելված էր հայերեն խոսիլը և սորվիլը. ոչ միայն լեզուն կկտրեին, նաև թևերուն տակ խաշած տաք հավկիթ կդնեին, որ խոստովանվի, թե հայերեն կսորվեցնե ուրիշներուն: Եթե կխոստովանվեր՝ կտանեին, կկախեին կամ՝ կսպանեին*» [Սվ. 2000: Վկ. 182, էջ 318]:

Այդ մասին է վկայում նաև մեր գրառած հայ ժողովրդական երգի պատառիկը.

Դպրոցը մտան, վարժուհուն բռնեցին,

Վա՛յ, աման,

Բերանը բացեցին՝ լեզուն կտրեցին,

Ա՛խ, աման

[Սվ. 2000: Վկ. 352, էջ 415]:

Քանի որ վարժուհին հանդգնել էր հայ մանուկներին հայերեն սովորեցնել: Իսկ տեղահանությանն ու աքսորի ճամփաներին այդ խստություններն ավելի են սաստկացել: Հետևաբար, արևմտահայերն իրենց վիշտն ու տառապանքն ստիպված արտահայտել են նաև թուրքերեն:

Նկատի ունենալով լեզվական ձուլման նախնական մակարդակը ներկայացնող այդ տխուր երևույթի հասարակական-քաղաքական հանգամանքները, զանազան բարբառներով

գրառված նյութերի հետ, մեր ուշադրությունից չեն վրիպել նաև թուրքալեզու, սակայն բացահայտ *հայկական ծագմամբ* ժողովրդական երգերը: Վերջիններս թեպետ հորինվել են տարբեր գավառների հայերի կողմից և այն էլ ոչ կատարյալ թուրքերենի իմացությամբ (հաճախ հիշատակվում են հայերեն բառեր ու արտահայտություններ, հայկական անձնանուններ ու տեղանուններ, նկատվում են քերականական և հնչյունային անճշտություններ), սակայն իրենց գաղափարական բովանդակությամբ ունեն պատմաճանաչողական կարևոր արժեք: Թուրքալեզու երգերը, ինչպես և բարբառային բնագրերը, ներկայացված են մեր իսկ կատարած զուգահեռ գրական հայերեն թարգմանություններով:

Գրառումների և վերծանումների ընթացքում *ջանացել ենք անադարտ պահպանել վերապրողների բանավոր խոսքի ինքնատիպ յուրահատկությունները՝* այդ բոլորը ներկայացնելով բարբառագիտական ընդունված տառադարձությամբ: Բարբառային բնագրերը գրառելիս հաշվի ենք առել ինչպես պատմական Հայաստանի, նույնպես և Կիլիկիայի ու Անատոլիայի հայության լեզվական նրբերանգները:

Մեր գրի առած, ձայնագրած ու տեսագրած *ժողովրդական նյութերն ընդգրկում են Արևմտահայաստանի, Կիլիկիայի և Անատոլիայի հայաշատ ավելի քան 70 բնակավայրերից* (Մասուն, Մուշ, Բիթլիս, Շատախ, Վան, Բայազետ, Իգդիր, Ալաշկերտ, Կարս, Արդվին, Արդահան, Բաբերդ, Շապին-Գարահիսար, Սեբաստիա, Էրզրում, Խնուս, Երզնկա, Դերջան, Կամախ, Թոխաթ, Արաբկիր, Խարբերդ, Քղի, Բալու, Մալաթիա, Տիգրանակերտ, Մերդին, Ադիյաման, Եդեսիա, Եվդոկիա, Զեյթուն, Ֆընդըջազ, Հաճըն, Մարաշ, Այնթապ, Մուսալեռ,

Քեսաբ, Բեյլան, Դյորտյուլ, Ադանա, Հասան Բեյ, Տարսոն, Մերսին, Կոնիա, Օրդու, Նիդե, Կեսարիա, Թումարգա, Էվերեկ, Աֆիոն-Գարաֆիսար, Էսքիշենհիր, Ջմյուռնիա, Յոզղատ, Սիվրիհիսար, Ստենոզ, Ամասիա, Սամսուն, Ադաքազար, Նիկոմիդիա, Պարտիզակ, Բուրսա, Բանդըրմա, Բիլեջիկ, Քաստեմունի, Չանաքկալե, Ռոդոսթո, Կ.Պոլիս և այլն) տեղահանված վերապրողների, որպեսզի առավել ամբողջական պատկերացում տրվի ողջ արևմտահայության կրած տառապանքների, նրանց հուզաշխարհի և մտորումների մասին:

* * *

Սուլթան Աբդուլ Համիդի իշխանության տապալումից և 1908 թ. Սահմանադրության ընդունումից հետո, կառավարության գլուխն անցած երիտթուրքերի “İttihat ve Terakki” («Միություն և առաջադիմություն») կուսակցությունը, որդեգրելով համիդյան ջարդարար քաղաքականությունը և դավանելով պանթուրքական ու պանիսլամական գաղափարախոսությունը, ձգտում էր ոչ միայն պահպանել օսմանյան կայսրությունը, այլև՝ բռնությամբ ոչնչացնել կամ ձուլել՝ թուրքացնել հայերին և քրիստոնյա մյուս հպատակ ժողովուրդներին, ստեղծել համաթուրանական-համաիսլամական համընդհանուր տերություն՝ Միջերկրական ծովի շրջակայքից մինչև Ալթայան երկրամաս:

1915-1922 թթ. Հայոց ցեղասպանությունից վերապրած ականատես-վկաները, որոնք գրեթե այլևս չկան, մեր գրառումների ընթացքում ամենայն մանրամասնությամբ հիշում էին քսաներորդ դարում իրագործված առաջին ցեղասպանության պատմաքաղաքական հանգամանքները: Նրանց ավագ սերնդի ներկայացուցիչները նույնիսկ հիշում էին Թուրքիայի 1908 թ. Սահմանադրության ընդունումը, որի կարգախոսն էր՝ «Ազատություն, արդարություն, եղբայրություն, հավասարություն» անկախ ազգությունից և դավանանքից: Երկրում համաժողովրդական ցնծություն էր տիրում, քանի որ բոլոր ազգերին օրենքով հավասար իրավունքներ պիտի վերապահվեին:

Քաղաքական այդ աննախադեպ իրադարձության մասին է մեզ պատմել խարբերդցի վերապրող Սարգիս Խաչատրյանը (ծնվ. 1903 թ.). «...Հիշում եմ 1908 թվին, երբ հե-

ղաշրջում եղավ Թուրքիայում, մարդիկ փողոցներում երգում էին» [Սվ. 2000: Վկ. 110, էջ 222].

Kalkın, hey vatandaşlar!

Sevinelim yoldaşlar!

İşde size hürriyet:

*Yaşasın osmanlılar!*³

Վե՛ր կացե՛ք, հայրենակիցնե՛ր,

Հրճվե՛նք, ընկերնե՛ր,

Ահա ձեզ ազատություն.

Կեցցե՛ն օսմանցիները³

[Սվ. 2000: Վկ. 337, էջ 412]:

Իսկ բիթլիսցի վերապրող Հմայակ Բոյաջյանը (ծնվ. 1902 թ.) իր պատմած հուշի մեջ վկայել է. «1908 թ. հյուրընթերցում եղավ, սկզբում բոլորն այն կարծիքին էին, որ հայ ու թուրք եղբոր պես պիտի ապրեն: Անգամ մեր գյուղում տոնախմբություն եղավ և հրացանաձգություն կատարվեց...» [Սվ. 2000: Վկ. 17, էջ 77]:

Դեռևս 19-րդ դարում ծնված սասունցի ականատես-վկա Եղիազար Կարապետյանը (ծնվ. 1886 թ.), վերհիշելով անցյալի պատմական իրողությունները՝ նշել է. «...1908 թ. հյուրընթերցում բոլոր քաղաքական բանտարկյալներին ազատություն տվեց, որից հետո հայը, թուրքը, քյուրդը բոլորն էլ հավասար իրավունք պիտի ունենային: Ամեն տեղ հնչում էին ցնծության աղաղակներ: Հյուրընթերցի օրենքով վերջ էր տրվում հայերի ստորացմանը, ծեծին, հայհոյանքին, թալանին, կողոպուտին և արհամարհանքին: Նման վերաբերմունք ցուցաբերողը ենթարկվում էր ամենախիստ պատժի, մույնիսկ կախաղանի: Կա-

տարյալ վստահության վրա էին դրվում երկու ժողովուրդները: Հայերը ստանում էին ազատ ծայնի իրավունք, ընտրում ու տալիս էին իրենց պատգամավորը: Սա արևմտահայերի կյանքում մի նոր վերածնունդ էր...» [Սվ. 2000: Վկ. 1, էջ 42]:

Սակայն թուրքական սահմանադրության հռչակման մեկ տարին դեռ չէր բոլորել, երբ համիդյան կոտորածներից (1894-1896 թթ.) զերծ մնացած Ադանան ու նրա շրջակա հայաշատ գյուղերը իթթիհատականների ատելության թիրախ դարձան:

1909 թ. Ս. Զատիկի շաբաթը՝ ապրիլի 1-3-ը, Ադանան իր շրջակայքով բոցերի մեջ էր: Արյան ծարավ ամբոխը հարձակվում է Ադանայի հայկական թաղամասերի և շրջակա գյուղերի վրա, կողոպտում է բոլոր խանութները, կոտորում անգն ու անպաշտպան հայերին, չխնայելով անգամ կանանց ու երեխաներին:

Ադանայի կոտորածը կանխամտածված բնույթ էր կրում: Այդ է վկայում Թուրքիայի Ներքին գործերի խորհրդական Ադիլ բեյի հեռագիրը, որն ուղղված էր Կիլիկիայի շրջանի բոլոր թուրք պաշտոնյաներին, որտեղ ասվում էր. «Մեծագույն ուշադրությամբ հոգ տարուի, որ վնաս չի հասնի օտար կրոնային հաստատությունաց և հիւպատոսարաններուն» [Ծիզմեհեան 1930: էջ 174]:

Թուրքական կառավարությունը հանձնարարում է Էդիրնեի օսմանյան հայ երեսփոխան Հակոբ Պապիկյանին մեկնել Ադանա, տեղում ուսումնասիրել իրողությունը և երեսփոխանական ժողովի համար պատրաստել թուրքերեն պաշտոնական հաշվետվություն: Հ. Պապիկյանը մեկնում է Ադանա, մանրամասն քննում կատարվածը և իր կազմած հանգա-

³ Մեր գրառած տարբեր գավառաբարբառների թուրքալեզու բնագրերում հնարավոր է հանդիպել շեղումներ թուրքերենի քերականական և հնչյունային կանոններից և կամ՝ հայերեն բառեր ու ձևույթներ: Վերապրողների հաղորդած տեղեկություններն անխաթար պահպանելու նպատակով հավատարիմ ենք մնացել նրանց բանավոր խոսքին: Թուրքալեզու բնագրերը ներկայացրել ենք մեր կատարած զուգահեռ թարգմանությամբ: Մեր երախտագիտությունն ենք հայտնում Տիգրան Ծուլիկյանին իր ցուցաբերած աջակցության համար (Վ. Ս.):

մանալից «Տեղեկագրի» մեջ նշում, որ «...ոչ միայն զոհերի թիւը կը հասնի 30 հազար հայի», այլև «յայտնի փաստ մըն է, որ կոտորածները կազմակերպուած էին տեղական իշխանութեանց գիտակցութեամբ եւ հրամանով»⁴ [Ատանայի եղեռնը 1919: Էջ 28]:

Պատմավիպագիր Սմբատ Բյուրատն այդ իրադարձությունների անմիջական տպավորությունների տակ է ստեղծել ժողովրդականությունը վայելող իր հետևյալ բանաստեղծությունը, որը, որպես իրողության ճշմարտացի վերարտադրություն, մեզ է հաղորդել հիշյալ զեյթունցի վերապրող Կարապետ Թոզլյանը.

*Կոտորածն անգութ՝ հայերը թող լան,
Անապատ դարձավ շքեղ Ադանան,
Կրակն ու սուրը և անխիղճ թալան,
Բուրբնյանց տունը, ա՛խ, ըրին վերան:*

*Բոպե մը չանցավ ու անգեն հայեր
Ինկան սուրին տակ խուժանին առջև,
Ժամեր, դպրոցներ բոցի մեջ կորան,
Բյուրավոր հայեր անխնա մեռան:*

*Անգութ թուրքերը որբացրին, թողին.
Ջավակը՝ մորմեն, հարսը՝ իր փեսեն,
Ջարդ ու խուրդ ըրին ինչ որ պատահեց,
Կերան, կշտացան հայու արյունեն...*

⁴ Հ. Պապիկյանն իր այդ պատմական «Տեղեկագիրը» հագիվ էր ավարտել, երբ երիտթուրքերին հաջողվում է նրան թունափորելով սպանել, և այն չի հրատարակվում: Հեղինակի մահից հետո սևագիրն է թարգմանվել հայերեն և լույս տեսել 1919 թ. Կ. Պոլսում:

*Երեք օր-գիշեր կրակը՝ ներսեն,
Թշնամու սուրը, գնդակը՝ դուրսեն,
Ջնջեցին հայեր երկրի երեսեն,
Արյուն կվազեր հայ փողոցներեն...*

[Սվ. 2000: Վկ. 342, էջ 413-414]:

Պատմաքաղաքական այդ իրադարձությունների անմիջական տպավորությունների տակ է հորինվել նաև արտահայտչական խորությամբ ու պատկերավորությամբ հագեցած թուրքալեզու ժողովրդական հետևյալ երգը.

*Hey, çamlar, çamlar, alaçık çamlar!
Her güneş vurunca sakız damlar,
Sakız damlar sa: yûreğim ağlar:
Adana ırmağı sel gibi akar,
İşte geldim sana, kıyma Adana!
Of, of, işte gördüm sizi, kıyma çocuklar!*

Հե՛յ, մայրիներ, մայրիներ, պես-պես մայրիներ,
Ամեն արև դիպչելիս՝ խեժը ծորում է կաթ-կաթ,
Խեժը ծորալիս՝ սիրտս է լաց լինում.
Ադանա գետն է հեղեղի պես հոսում.
Ահա քեզ եկա, ջարդվա՛ծ Ադանա,
Ավա՛դ ձեզ տեսա, մանուկներ մորթված:

*Adana köprüsü tahta dir, tahta,
Ermeni muhaciri gelir bu hafta,
Adana ırmağı leş ile kanlar!
Kaldırın leşleri: Adana kokar,
İşte geldim sana, kıyma Adana!
Of, of, işte gördüm sizi, kıyma çocuklar!*

Ադանայի կամուրջը փայտյա է, փայտյա,
Հայ գաղթականները կգան այս շաբաթ,
Ադանա գետը՝ արյուն ու դիակ,
Հավաքե՛ք դիակները. կհոտի Ադանան.
Ահա քեզ եկա, ջարդվա՛ծ Ադանա,
Ավա՛դ ձեզ տեսա, մանուկներ մորթված

[Սվ. 2000: Վկ. 340, էջ 413]:

Ադանացի ականատես-վկա Միքայել Քեշիշյանը (ծնվ. 1904 թ.) հուզումով է մեզ պատմել. «1909 թ. Ադանայի կոտորածի ժամանակ ես հինգ տարեկան էի: Այդ սարսափելի գիշերը թուրքերեն կոչվեց “Camuz dellendi” («Գոմեշը գծվեց»): Քանի որ, իրոք, սուլթանը գծվել էր: Նրա հրամանով մարդկանց մորթեցին, մոտ երեսուն հազար հայ սպանեցին, տները քանդեցին, վառեցին, մոխիր դարձուցին: ...Բոլորին հավաքեցին տարին Ադանա ըրմաղը (գետը), սուլթան Համիդին լուր դրկեցին, որ բոլոր հայերին հավաքել ենք, բերել գետին եզերքը՝ իրմե հրամանի կսպասեն: Մեկ կողմը ջուր, մեկ կողմը՝ կրակ: Պապա-

ինձի գրկած էր: Ես կհիշեմ, շալակեն կտեսնայի: Մամաս ալ մեզի հետ էր, գետին եզերքը մեզի լեցուցեր էին: Սուլթանեն հրաման եկավ՝ ներումի հրաման: Մեզ ալ. «Փաղիշահըմ չօ՛ք եաշա» (Թագավորս շա՛տ ապրի) ըսել տվին: Տուն եկանք, բայց սպանվողները՝ սպանվեցան» [Սվ. 2000: Վկ. 182, էջ 318]:

Ադանայի կոտորածի ընթացքում ավերվում և հրկիզվում են բազմաթիվ հայկական քաղաքներ ու գյուղեր: Իսկ Մուսա լեռը, Դյորսոյուը, Հաճընը, Սիսը, Ջեյթունը, Շեյխ Մուրադը, Ֆընդըջազը և մի շարք այլ բնակավայրեր, իրենց հերոսական ինքնապաշտպանությամբ, կասեցնում են տասնյակ հազարավոր թուրքերի հարձակումը և փրկվում են ջարդերից:

Ըստ էության, այդ Մեծ եղեռնի սկիզբն էր, երբ երիտթուրքերը տեղորեն նախապատրաստվում էին հիմնովին բնաջնջել հայ ժողովրդին՝ սպասելով հարմար առիթի: Այդ առիթն ստեղծվեց, երբ բռնկվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Թուրքիան պատերազմի մեջ մտավ զավթողական նպատակներով և հայերի բնաջնջումն իրականացնելու իր հրեշային ծրագրով:

Զավթողական այդ պատերազմը ևս իր գեղարվեստական արտացոլումն է գտել ժողովրդական երգի մեջ.

<i>Pencereden kar geliyor,</i>	Պատուհանից ձյուն է գալիս,
<i>Bak dışarı kim geliyor?</i>	Տե՛ս դրսից ո՞վ է գալիս,
<i>Ölüm bana zor geliyor,</i>	Մահն ինձ դժվար է գալիս.
<i>Uyan, sultan Hamid, uyan!</i>	Զարթո՛ւ՛ր, սուլթա՛ն Համիդ, զարթո՛ւ՛ր.
<i>Kan ağlıyor bütün cihan!</i>	Ողջ աշխարհն արյուն է լալիս:
<i>Aman! Aman! Mayrik!⁵</i>	Ավա՛ղ, ավա՛ղ, մայրի՛կ ⁵

[Սվ. 2000: Վկ. 338, էջ 412]:

Զյունապատ ձմռան սառնամանիքը համեմատված է մահվան (պատերազմի) սարսափի հետ, երբ երկրի ղեկավարը (*zalim sultan*) անտարբեր է ժողովրդի ճակատագրի նկատմամբ, նույնիսկ այն ժամանակ, երբ «ողջ աշխարհն արյուն է լալիս»:

1914 թ. օգոստոսի 6-ին Կ.Պոլսում կնքվում է գերմանոթուրքական զինակցության համաձայնագիրը: Թուրքական կառավարությանը հղած հայտագրով (նոտա) Գերմանիայի դեսպան Վանգենհայմը նշում էր. «Եթե օսմանեան կառավարութիւնը, հաւատարիմ մնալով իր պարտաւորութեանց, պատերազմի մտնէ Երեւակ Համաձայնութեան դէմ, Գերմանիան կ'ապահովէ անոր հետեւեալ առաւելութիւնները»: Կնքված համաձայնագրի վեց կետերից մեկն էր. «Գերմանիան կը հարկադրէ՝ շտկել Օսմանեան կայսրութեան արեւելեան սահմանները, այն ձեռով որ ապահովուի Տանկաստանի անմիջական շփումը Ռուսաստանում ապրող մահմետական բնակչութեան հետ» [Լազեան 1942: էջ 78]:

1915 թ. փետրվարին «Միություն և առաջադիմություն» կուսակցությունն ստեղծում է հատուկ հանձնաժողով՝ «Երեքի գործադիր կոմիտե» (Բեհաէդդին Օաքիր, Դոկտ. Նազիմ, Միդհաթ Օյուքրի) Թուրքիայի հայերի տեղահանությունն ու կոտորածը կազմակերպելու համար: Այն մշակել էր հայերի բռնագաղթերի ժամկետները և ուղիները, ոչնչացնելու վայրերը, ջարդարարների գործելակերպը, բանտերից ազատել քրեական հանցագործներին, կազմել երիտթուրքական խմբապետերի հրամանատարության տակ գործող չեթեններ (հրոսակախմբեր), որոնք «թեջքիլաթը մահսուսե» («հատուկ կազմակերպություն») անվան տակ պետք է իրագործեին հայերի ցե-

⁵ Թուրքալեզու երգի մեջ օգտագործված է հայերեն «մայրիկ» բառը:

դասպանությունը:

Նույն թվականի ապրիլի 15-ին, թուրքական կառավարության ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի, ռազմական նախարար Էնվեր փաշայի և Իթթիհատի գլխավոր քարտուղար ու լուսավորության նախարար դոկտ. Նազիմի ստորագրությամբ, գաղտնի հրաման է ուղարկվում իշխանություններին՝ հայերի տեղահանության ու բնաջնջման վերաբերյալ: Եվ Թալեաթ փաշան կատաղի ասելությամբ ազդարարում է. «Պետք է մաքրել հայերի հաշիւը», խոստանալով ոչինչ չխնայել այդ նպատակի համար [Անտոնեան 1921: էջ 232]:

Իթթիհատի գործադիր կոմիտեի նիստերից մեկում Բեհաէդդին Շաքիրը հայտարարում է, որ անհրաժեշտ է անմիջապես սկսել և վերջացնել հայերի տեղահանությունը և այդ ընթացքում կոտորել ժողովրդին. «Պատերազմի մեջ ենք, - ասել է նա, - Եվրոպայի և մեծ պետությունների միջամտության վախ չկա, աշխարհի մամուլն ալ չի կրնար բողոք բարձրացնել: Եթե ըլլա իսկ, ունե արդյունք չունենար, առաջիկային խնդիրը կատարված իրողություն մը կդառնա» [Մեսրոպ 1955: էջ 258]:

Երիտթուրքերի կառավարության ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան հատուկ հրաման էր արձակել. «Թուրքական հողի վրա հայերի ապրելու և աշխատելու իրավունքը լիովին վերացված է: Դրան համապատասխան կառավարությունը հրամայում է՝ չխնայել անգամ օրորոցի երեխաներին...» [Ներսիսյան 1991: էջ 564-565]:

Իթթիհատի գործադիր կոմիտեն նախատեսում էր այդ տեղահանությունը և կոտորածը կատարել ոչ թե բանակի և ոստիկանության միջոցով, այլ՝ բանտից ազատված ոճրագործներին, մարդասպաններին, ինչպես նաև քրդերին, չերքեզներին

ու չեչեններին հանձնելով այդ գործը:

Պատմաքաղաքական այս հանգամանքներում Թուրքիայում ապրող քրիստոնյա ազգերի, այդ թվում նաև հայերի համար մեծագույն չարիք էր դարձել ընդհանուր զորահավաքը (*Seferberlik*): 18-45 տարեկան հայ տղամարդկանց, զորակոչի անվան տակ, ներգրավում էին աշխատանքային գումարտակների (*Amele tabur*) մեջ և, ըստ ռազմական նախարար Էնվեր փաշայի հատուկ հրահանգի, աչքից հեռու, ծածուկ վայրերում՝ սպանում:

«...1914 թ. Թուրքիան ընդհանուր մորիլիզացիա հայտարարեց, - պատմել է խարբերոցի Սարգիս Խաչատրյանը (ծնվ. 1903 թ.), - հայ երիտասարդներին թուրքական բանակ զորակոչեցին: Տարան, աշխատացրին ամիլե թաքուրի (աշխատանքային գումարտակ) մեջ, հետո էլ բոլորին սպանեցին» [Սվ. 2000: Վկ. 110, էջ 223]:

Իսկ խարբերոցի Սարգիս Մարտիրոսյանը (ծնվ. 1903 թ.) ավելի մանրամասնորեն է անդրադարձել. «Առաջին համաշխարհային պատերազմին հայերին զինվոր տարին, շուրջ երեք հարյուր հազար հայ երիտասարդներ թուրքական բանակ ղրկվեցան: Սկզբում անոնց ձեռքը զենք տվին, բայց հետո Էնվեր փաշան ըսեց է. «Մենք ճամփաներ պիտի շինենք՝ աշխատող ձեռքերու պետք ունինք»: Բայց իրականության մեջ անոնց փորած փոսերուն մեջը նետած, սպանած են...» [Սվ. 2000: Վկ. 111, էջ 224]:

Էրզրումում ծնված, բայց Խարբերոցի տեղահանությանը մասնակցած Հարություն Գրիգորյանը (ծնվ. 1898 թ.) վկայել է. «Խարբերոցի տեղահանության ժամանակ ես տասնյոթ տարեկան էի: Լավ հիշողությամբ մեջ է: Թմբուկ զարկին և քաղա-

քին մեջ կատարվեր մունետիկը ու կըսեր. «Սեֆերբերլիք դըր (զորահավաք է), պատերազմ պիտի ըլլա...»: Հետո ըսին, թե՝ հայերին պիտի աքսորեն: Քաղաքի մեջ սկսվեցին խուզարկություններ, որպես թե զենք են փնտրում, բայց լրիվ կողոպտում էին, դրամ գտնելիս՝ իրենցն էր, մինչև իսկ սոխ մաքրելու դանակը հավաքեցին: Ով զենք չէր տալիս՝ եղունգներն էին քաշում, ծեծում էին կամ փող էին ուզում, որ զենք առնեն: ...Քաղաքի և գյուղերու մեջ հայ հարուստներուն բանտերը լեցուցին, ժողովուրդը մնաց անհովիվ ոչխարի պես: Քանի մը մեծերու ոտքերը պայտեցին, մի քանիսին ատամները քաշեցին, բանտերու մեջ եղողները տանջանքներին չդիմանալով, ինքզինքնին վառեցին: ...Թուրքական բանակի հայ զինվորները զինաթափ եղած ու սպանված են: Նախ՝ որպես ճակատ դրկելու նպատակով կհավաքեն, փոխանակ ճակատ դրկելու ամիլեթաբուր կկազմեն, ուր հայ զինվորները թիապարտի կյանքի կմատնվին: Անգութ հրամանատարները կաշխատոցնեն հայերը ճամփա շինելու, առանց խտրության՝ բեղել (փրկագին) վճարողներուն և չվճարողներուն: Օրջապատված հեծյալ ուստիկաններով՝ անոնց անոթի, ծարավ, ժամերով կքայլեցնեն: Զինվորները կսկսին նախատել և վիրավորել, որը հետո կվերածվի հարվածների: Փարչանեի և Քեսիրիկի ճամփու վրա, երբ աղբյուրի մը կմոտենան, երկու հազար հոգու չեն թողուր, որ ջուր խմեն, ով կհանդգներ՝ անոր գլխուն կիջնար հրացանի կոթի հարվածը: Գրեթե բոլորը բնաջինջ եղան, և զոհերու մարմինները նետվեցան հասարակաց փոսի մը մեջ: Նույն կերպ կվարվեին Դիարբեքի դրկված երկու հազար աշխատավորներու հետ: Կարմիր խոնաղ (Կարմիր շենք) հավաքել էին տանջելու խարբերդի երիտասարդ դպրոցականներին և զինաթափ եղած զինվորներին, որոնց խոշտանգված դիակները

իրար վրա թափված, նեխված էին: Ամեն անկյուն՝ արյուն, փսխումք, կղկղանք: Գետնի վրա պառկողները պատերազմի դաշտին վրա փռված դիակներու կմմանեին: Այսպես, իրարու ետևե մեկ կողմե գյուղերեն և ավաններեն բերված չափահաս կամ տարիքոտ անձինք Կարմիր խոնաղ կնետնեն, մյուս կողմե՝ ձերբակալվածները կդրկեն Եդեսիա՝ իբր երկաթուղային գիծերու վրա աշխատելու: 1915 թ. հուլիսի 14-են հետո բոլոր երիտասարդները դրկված էին սպանդանոց...» [Սվ. 2000: Վկ. 89, էջ 187-188]:

Յոզդաուցի վերապրող Վերոնիկա Բերբերյանը (ծնվ. 1907 թ.) ևս անդրադարձել է թուրքական զորահավաքին. «...Շաբաթ օրը, իրիկվան դեմ բոլոր տղամարդկանց կհավաքեն թուրքական բանակ դրկելու, բայց այնտեղ հայերը կգատեն թուրքերից: Տերտեր պապիկս՝ Հակոբ քահանա Բերբերյանը, որ լիազորված էր հայերի իրավունքը պաշտպանելու, կտեսնա, որ հայերին ջոկում են թուրք զինակոչիկներից, կըսե. «Ինչու» հայերին ջոկում եք»: Թուրք հազարապետը կըսե. «Փափազ (քահանա) էֆենդի, հայերը պիտի գնան ճանապարհ շինելու, թուրքերը պիտի գնան ոռոսական ճակատ»:

Հաջորդ օրը կիրակի էր: Պապս Ս. Պատարագը վերջացրել, հազիվ տուն էր եկել: Դեռ շունչ չառած, բոթը հասավ մեզի: Արթին աղային տղան ջրաղացպան էր, առտուն կելլա, կերթա աշխատանքի, կտեսնա ջրաղացին քովը լի՞քը մարդկանց գլուխներ, ոտքեր, ձեռքեր: Լեզուն վախեն բռնված հևիհև կուգա տուն, կպատմե տեսածը: Արթին աղան տղային հետ եկան պապիկիս պատմեցին, ըսին. «Էրեկվա զինվոր տարվածները գիշերով մորթել են»: Պապիկս կըսե. «Գնացե՛ք, բողոքեցե՛ք դայմադամին (գավառապետ)»: Արթին աղան կերթա դայմադամին բողոքելու, բայց ան գիշերը ալ տուն չի գար:

Հաջորդ օրը՝ երկուշաբթի, երկու թուրք ժանդարմա քուփալներով էկան: Ուրիշ անգամ, երբ մեր տունը ժանդարմա կուգար, քաղաքավարի կերպով կըսեին, որ փափագ էֆենդին հագնվի ու իրենց հետ գնա: Այս անգամ էկան, կոշտ կերպով ըսին. «Հայդէ՛, քալքըն» («Դե՛, վե՛ր կացեք»): Պապիկիս տարին ղայմաղամին մոտ: Պապիկիս հետ տարել են նաև տեղի երևելիներին, վաճառականներին, մտավորականներին: Մի թուրք ասում է պապիկիս. «Փափա՛գ էֆենդի, մոտիկացավ վերջին ժամը, ի՞նչ ունիս ըսելիք»: Պապիկս ծունկ կշոքե, կաղոթե: Անտեղեն թուրք զինվոր մը կացինով կհարվածե, պապիկիս գլուխը կգլորվի գետին: Կսկսին ֆուտբոլ խաղալ իմ խելացի պապիկիս գլխուն հետը...» [Սվ. 2000: Վկ. 214, էջ 353-354]:

Թուրքական զորահավաքին հաջորդում է զինահավաքը: Այն ուղեկցվում էր համատարած շուրջկալներով, որոնց ընթացքում «զենք» հավաքելու պատրվակի տակ թուրք ոստիկաններն ավերում էին հայերի տները, կողոպտում նրանց ունեցվածքը, ձերբակալում, սպանում շատերին:

«Նախքան կոտորածը թուրքական ոստիկանները եկան զենքերը հավաքեցին: Հարուստ կարապետ էֆենդիի տղան ասել է՝ «զենք չկա»: Ոստիկանները խուզարկել էին, գտել էին, անոր եղունգները քաշել էին, թևերուն տակն ալ խաշած հավկիթ էին դրել ու կապել», - ավելացրել է նույն Վերոնիկա Բերբերյանը [Սվ. 2000: Վկ. 214, էջ 353-354]:

Խարբերոցի Հակոբ Հուրեհյանը (ծնվ. 1902 թ.), վերսիշելով, թե ինչպես թուրք ոստիկաններն իր հորից զենք էին պահանջում, պատմել է. «...Հայրիկիցս բացասական պատասխան ստանալով, մտրակով հարվածում էին, վերջապես քաշկոտելով հորս տարան բանտ: Այդ դաժանությունները կատարելու

պահին մայրս ասաց. «դահիճնե՛ր»: Այդ բառի համար մորս դատարկ տան մեջ արգելակեցին: Մենք երեքս՝ ես, քույրս և եղբայրս մնացինք մենակ: Ես վազեցի մորս ետևից, դռն ճեղքից նայեցի, մայրս ասաց. «Տղա՛ս, գնացեք Գրիգոր հորեղբոր տունը»: ...Դեռ այդ օրերին Գրիգոր հորեղբայրս, որպես քաղաքագլուխ, դեռ պաշտոնի գլուխ էր: Նրան խնայել էին: Միջնորդեց, որը առանց կաշառքի չէր լինի, հորս բերինք տուն, ազատվեց: Հորս դարբին ընկերներից Լևոն Խոչիկյանը շալակով նրան հասցրեց տուն, քանի որ չէր կարող քայլել: Մայրս էլ արգելափակումից տուն եկավ: Հայրս խոշտանգված ընկած էր փորի վրա: Թիկունքի վրա չէր կարող պառկել: Հայրս պատմեց, թե մի գիշերվա մեջ ի՞նչ փորձանքներ են բերել թուրք դահիճները: Ահմեդ օնքաշին, դաժան դեմքով մի տասնապետ, բանտախցից հորս բերում է խուցը՝ խոշտանգելու, պառկեցնում է փորի վրա, երկու կողմում կանգնած ոստիկանները կաղնու մահակներով սպասում են հրամանի: Հորիցս դարձյալ պահանջում են մաուզեր, մոսին, տասնոց: «Տու՛ր կամ՝ պառկի՛ր: Սկսե՛ք հարվածել». - հրամայում է օնքաշին: Քառասուն հարված տալուց հետո նստեցնում են: Ահմեդ օնքաշին ասում է. «Հը՞, չե՞ս ուզում բերել զենքերդ»: Ըստ հորս պատմածի, Ահմեդ օնքաշին իր կողքը նստեցրել էր եկեղեցու և դպրոցի հայ երգեցողության ուսուցչին՝ Արմենակ Պետրոսյանին, այսինքն՝ հետո հերթը նրանց էր լինելու: «Մալի՛մ էֆենդի, զենք չունեն»։ Նորից են քառասուն հարված հասցնում, նորից է հարցնում: Պատասխանը՝ նույնը: Երրորդ անգամ պառկեցնելուց առաջ ասում է. «Ասա ո՞վ ունի զենք»: Հայրս մատնիչ չէր կարող լինել: Եթե նույնիսկ գիտենար՝ չէր ասի: Հարյուր քսան հարվածից կիսամեռ վիճակում քարշ են տալիս կալանատուն: Ահա հայրիկիս պատմածը...» [Սվ. 2000: Վկ. 109, էջ 220]:

Արևմտահայության շրջանում լայնորեն տարածված հայախառն թուրքալեզու հետևյալ երգի մեջ թուրք զինվորական պաշտոնյան հարցնում է հայ երիտասարդին.

- *Ulan gâvur,⁶ doğru söyle:* - Գլավուր՝ տղա, ճիշտն ասա,
Sende martin varımı? Բո մոտ հրացան կա՞:

Հայ երիտասարդը ժխտում է՝ այն համարելով հերյուրանք.

- *Hayır, efendim! iftira dır:* - Ո՛չ, պարո՞ն, հերյուրանք է,
Bilmem, görmedim, 2գիտե՛մ, չե՛մ տեսել,
Bilmem, görmedim. 2գիտե՛մ, չե՛մ տեսել:

Բայց հետո՝ հայերենով ծածուկ ավելացնում.

Պատեն կախված է՝ չե՛մ ըսեր,

Հայոց ազգը չեմ մատներ

[Սվ. 2000: Վկ. 323, էջ 408]:

Վեսիկա (վկայագիր) ստացած, թուրքական բանակին բռնի զինվորագրված հայ երիտասարդը նախազգույն է, որ «սրան մահվան ճամփա կասեն», այնինչ «հայերն այնտեղ շատ ու շատ են».

<i>Ana! uyandır beni, gideyim talime,</i>	Մա՛յր, արթնացրո՛ւ ինձ, գնամ վարժանքի.
<i>Aynalı-martini alayım elime,</i>	Ջեռքս վերցնեմ հայելիով-մարթին,
<i>Gitmeye doğru vatan yoluna,</i>	Գնալու եմ ուղիղ ճամփով հայրենի,
<i>Buna ölüm yolu, derler,</i>	Սրան մահվան ճամփա կասեն.
<i>Allah saklasın!</i>	Աստվա՛ծ պահպանի,
<i>Ermeniler çokdur, derler,</i>	Հայերն այնտեղ շատ ու շատ են.
<i>Allah kurtarsın!</i>	Աստվա՛ծ թող փրկի

[Սվ. 2000: Վկ. 301, էջ 405]:

Եթե այս երգի մեջ հայ պատանին պատրաստ է ծառայել թուրքական բանակին, կատարելու իր քաղաքացիական պարտքը Հայրենիքի (*Vatan*) նկատմամբ, որտեղ ինքն ապրում

⁶ Գլավուր (Gâvur) – Թուրքերի կողմից քրիստոնյաներին՝ անհավատներին տրվող նվաստացուցիչ արտահայտություն:

է, ապա՝ հետագայում նա արդեն գիտակցում է, որ «զորակոչի» անվան տակ իր նմաններին հեռացնում են իրենց հարազատներից.

<i>Odalar yaptırđım bir ucdan uca,</i>	Ծայրից ծայր շինեցի սեմյակներ.
<i>İçinde yatmadım bir gün, bir gece,</i>	Մեջը չքնեցի մի օր, մի գիշեր.
<i>Konma, bülbü! konma mezar taşına,</i>	Մի՛ թափիր, սոխա՛կ, մի՛ թափիր, շիրմաքարին,
<i>Neler geldi Ermeninin başına!</i>	Ինչե՛ր եկան հայերի գլխին:

<i>Tüfeğim çadırdı asılı kaldı,</i>	Հրացանս վրանում կախ տված մնաց.
<i>Ceizim sandıkta basılı kaldı,</i>	Օժիտս սնդուկում դարսված մնաց.
<i>Konma, bülbü! konma mezar taşına,</i>	Մի՛ թափիր, սոխա՛կ, մի՛ թափիր, շիրմաքարին,
<i>Neler geldi ermeninin başına!</i>	Ինչե՛ր եկան հայերի գլխին

[Սվ. 2000: Վկ. 459, էջ 431]:

Եվ զորակոչված հայ երիտասարդը խնդրում է դաժան չերքեզից՝ խնայել իրեն, քանի որ իր «նոր նշանածը» կմնա այրի.

<i>Kıyma, çerkez, kıyma tatlı canıma!</i>	Խնայի՛ր, չերքեզ, խմայի՛ր քաղցր հոգիս,
<i>Yeni nişanlım var karalar bağlar...</i>	Նոր նշանած ունեմ՝ սևեր կկապի...

[Սվ. 2000: Վկ. 311, էջ 406]:

Իսկ «նշանածը» Ստամբուլի բովված աղի կաղինի պես «աղի արցունք» է թափում և ողբում նրա բացակայությունը.

<i>Tuzlu olur Stanbulun fışığı,</i>	Աղի է լինում Ստամբուլի պիստակը.
<i>Taşdan olur Ermeninin yaşığı,</i>	Քարից է լինում հայերի բարձը.
<i>Kör olsun şu meydanın dostluğu:⁷</i>	Կուրամար պս հրապարակային բարեկամությունը ⁷ .
<i>Aldılar nazlı yarımı, duyan ağlasın,</i>	Տարան սիրած յարիս, լսողը թող լաց լինի:
<i>Aman! Aman! Mayrik!⁸</i>	Ավա՛ղ, ավա՛ղ, մայրի՛կ ⁸

[Սվ. 2000: Վկ. 338, էջ 413]:

Այդ ժամանակ Թուրքիայում հատուկ հրահանգ կար՝ բանակում ծառայող քրիստոնյաներին, առանց որևէ զանցան-

⁷ Նկատի ունի 1908 թ. Օսմանյան Թուրքիայի Սահմանադրությունը, որը ձևականորեն խոստանում էր Թուրքիայում ապրող բոլոր ժողովուրդներին, անկախ ազգությունից ու դավանանքից, «Ազատություն, Արդարություն, Եղբայրություն, Հավասարություն»:

⁸ Թուրքալեզու երգի մեջ օգտագործված է հայերեն «մայրիկ» բառը:

քի, ոչ միայն իրենց զորախմբերից հեռացնել և ընդհանուրի աչքից հեռու, ծածուկ վայրերում գնդակահարել, այլև՝ բանտերում սովամահ անել:

Haniya da benim tuz eknegim yiyenler, Ուր եմ իմ աղ ու հացն ուտողները
"Ahbap ölmeden, ben ölürüm" diyenler «Ընկերս չմեռած՝ ես մեռնեմ», - ասողները

Այնինչ նրա հավատարիմ հայ ընկերները.

Tiğlik⁹ Sarkis, Տղիկ(յան)⁹ Սարգիսն¹⁰ ու
Taslak⁹ Misak¹⁰ vurulmuş... Թաւաք(յան)⁹ Միսակը¹⁰ խփվել են...

Իսկ ինքը՝ հայ զինվորը, բանտարկված է.

Mahpushane üstümüze damlıyor... Բանտի կտորից մեր վրա է կաթկթում...

Այնինչ նրա հարազատները.

Anam da baş üstümde ağlıyor, Մայրս՝ գլխիս վրա լաց է լինում,
Beçare nişanlım karalar bağlıyor... Խեղճ նշանածս սևեր է կապում...

[Սվ. 2000: Վկ. 334, էջ 411]:

Բանտից ու գնդանից բացի, հայ զինվորին ամեն րոպե մահ էր սպառնում.

Varın, şöyleyin anama: damda yatmasın; Գնացե՛ք, ասացե՛ք մորս՝ տանիքում չքնի.
"Toros"⁹ oğlum gelir diye" yola bakmasın, Թորոս⁹ որդիս գալիս է ասելով՝ ճամփին չնայի,
Anama deyin: bohçami açmasın; Ասացե՛ք մորս՝ օժիտս չբացի.
Çuha şalvarıma uçkur takmasın, Բոդյա շալվարիս խոնջան չանցկացնի,
Çayrı ben silama varamaz oldum, Արդեն ես չեմ կարող օգնել հայրենիքիս,
İskühi⁹ nişanlımı göremez oldum, Տեսնել չեմ կարող իսկուհի⁹ նշանածիս,
Daracık sokakdan geçemez oldum. Անցնել չեմ կարող այս նեղ փողոցից

[Սվ. 2000: Վկ. 335, էջ 412]:

Եվ հայ զինվորի մայրն անիծում է զորահավաքը, որն ավելի նման է կոտորածի, քանի որ գարնան վարդերի և սոխակների հետ հայ երիտասարդները ևս գնացին, բայց՝ ընդմիջտ.

Atımı bağladım delikli taşla,¹¹
Kör olasin sen, Enver paşa!
Ermeni cahil kalmadı,
Gitti gül, gitti bülbül, ne diyelim!
İster ağla, ister gül, ne diyelim!

Նժույզս կապեցի ծակ քարին¹¹,
 Կուրանա՛ս դու, Էնվե՛ր փաշա,
 Հայ երիտասարդ էլ չմնա՛ց,
 Անցավ վարդը, անցավ սոխակը, ի՛նչ ասեմ,
 Կուգես՝ լաց, կուգես՝ խնդա, ի՛նչ ասեմ

[Սվ. 2000: Վկ. 448, էջ 428]:

Հայերի ատելությունն աստիճանաբար վեր է ածվել ծաղր ու ծանակի, և սեղմ բառերով ուրվագծվում է Թալեաթ փաշայի արտաքինը, որը նաև նրա ներքին բնութագիրն է.

Talaat paşa eşek gibi, Թալեաթ փաշան ավանակի պես,
Biyyıkları yular gibi... Բեղերը բարակ սանձի պես...

[Սվ. 2000: Վկ. 453, էջ 428]:

Զորահավաքին ու զինահավաքին հաջորդում է հայ մտավորականների ձերբակալությունը, որպեսզի հայ ժողովուրդը զրկվի ոչ միայն իր ռազմունակ ուժից, այլև՝ ղեկավար մտքից: 1915 թ. ապրիլի 24-ին, շաբաթ կեսգիշերին, Կ.Պոլսում ապրող 273 երևելի դեմքեր բռնությամբ տարվում են ոստիկանատուն, այնուհետև՝ արքայապետ Միջգետքի անապատներ և բնաջնջվում: Դեպի Չանղըրլի և Այաշի անապատներն են քշվել ու սպանվել օսմանյան խորհրդարանի անդամ, իրավաբան-գրող Գրիգոր Զոհրապը, բանաստեղծներ Դանիել Վարուժանը, Սիամանթոն, գրողներ ու բժիշկներ Ռուբեն Զարդարյանը, Ռուբեն Սևակը, Հովհաննես Թլկատիսցին, Մելքոն Կյուրճյանը, Երուխանը, Սմբատ Բյուրատը, Տիգրան Չյուկյուրյանը, Նազարեթ Տաղավարյանը և շատ ու շատ հայտնի դեմքեր Կ.Պոլսից, Սվազից, Դիարբեքիից, Մարզվանից, Էրզրումից, Կեսարիայից, Իզմիրից և այլ հայաբնակ վայրերից:

⁹ Հայկական ազգանուն:
¹⁰ Հայկական անուն:

¹¹ Դելիքի թաշ (ծակ քար) – Հայկական գյուղական տան մուտքի մոտ պատին ագուցված քարե օղակ՝ ձիու սանձը կապելու համար:

Աղաբազարցի վերապրող Մարի Երկաթը (ծնվ. 1910 թ.) նրանց մասին վկայել է. «...Տարին մեզի Էսքիշենհիր, լեցուցին խանի մը մեջ: Մեր քովի խանը, որը մերինին պես աղտոտ էր ու մութ, հոն ալ բերին լեցուցին Պոլիսեն աքսորված բոլոր մտավորականներուն: Անոնք ալ ըսես նե՝ քոլալը օձիքներով, յախա-քրավաթով, հագած-կապած, բայց արդեն վրանին-գլուխին պա՛տո-պա՛տո, գզգզվա՛ծ: Մենք ամեն գիշեր լսում էինք անոնց լաց ու կոծի ձայներն ու հառաչանքները, որովհետև թուրք զաբիթներն ու ոստիկանները անոնց սաստիկ ծեծում էին: Քանի մը օրեն անոնց բոլորին ալ տարին: Լսեցինք, որ անոնց շատ տանջանքներով սպանել են» [Սվ. 2000: Վկ. 226, էջ 366]:

Ամենուրեք փակվում են հայկական դպրոցներն ու վարժարանները: Հայկական կրթական օջախների հետ ավերվում են նաև հայկական եկեղեցիները: Կ.Պոլսի Հայոց պատրիարքությունը միացվում է Սիսի կաթողիկոսությանը, և Թուրքիայի հայության հոգևոր պետ է ճանաչվում Սահակ Բ կաթողիկոս Խաբայանը:

Ռուսական հետախուզությունը 1915 թ. մարտի 15-ին և ապրիլի 3-ին Թուրքիայի վերաբերյալ հաղորդումների մեջ նշել է, որ ամբողջ երկրում տեղի են ունենում հայերի ձերբակալություններ, սիստեմատիկ կոտորածներ՝ Էրզրումում, Դյուրտյում, Ջեյթունում և շրջակայքում. արյունալի ընդհարումներ՝ Վանում, Բիթլիսում, Մուշում. բռնություններ, թալան, սպանություններ՝ Ակնում և ամբողջ Փոքր Հայքում, ժողովրդի տնտեսական քայքայում, ընդհանուր կոտորած...

Արևմտահայության ահավոր վիճակի մասին է վկայել 1905 թ. Վանի Հայոց ձորի Կեմ գյուղում ծնված Սիրակ Մա-

նասյանը. «1915 թ. մարտի 4-ին լուր հասավ, որ հասարակական-քաղաքական գործիչ պարոն Իշխանին² մեր հարևան Հիրճ գյուղում սպանել են: Այդ այն ժամանակն էր, երբ թուրքերը Ջնդեթ փաշայի միջոցով մեր մեծերին կանչում և գլուխներն ուտում էին: Այդ ահռելի օրերին պր. Իշխանին հանկարծակի սպանում են և գցում են հորը: Չբավարարվելով դրանով, նրա երկու երեխաներին ևս ողջ-ողջ գցում են հորը: Մենք, որ այդ լսեցինք, հայրենակիցներով իրար անցանք: Մենք սկսեցինք պատրաստվել թուրքերի հարձակմանը:

1915 թ. մարտի 5-ին հուժկու հրետանու ձայն լսեցինք: Ժողովուրդը հավաքվեց հրապարակ և գնաց, լցվեց եկեղեցին: Թուրքերն արդեն նախօրոք զորահավաք էին կազմակերպել և բոլոր երիտասարդներին հավաքել: Քանի որ երիտասարդներ չկային, մերոնք ստիպված էին դիրքերը թողնել-գնալ հարևան գյուղերը: Մենք գնացինք Կյուլյանց հայկական գյուղը: Այնտեղ մի քանի հազար մարդիկ էին, մեզ տեղավորեցին մարագների մեջ: Ամեն օր թուրքերը բռնում էին հայերին և մեր աչքի առաջ կախում կամ մորթում էին: Դրանցից մեկն էլ իմ հորեղբայր Պետրոսն էր: Նա ունչպար էր: Երբ տեսանք Պետրոսին այդ վիճակում, մենք չճանաչեցինք...: Մեզ առանձնացրին հատուկ մարագի մեջ: Դուռը փակեցին ու մեզ վրա պահակ նշանակեցին: Մենք այդ ահավոր դեպքերից սարսափած՝ ուզում էինք փախչել այդ գյուղից: Մարագում նույնիսկ անասնակեր չկար: Ինձ հաջողվեց դուրս պրծնել, գնալ գյուղ: ...Հաջորդ օրը

¹² Իշխան – Նիկողայոս Պողոսի Միքայելյան (1881-1915), հայ ազատագրական շարժման գործիչ: Հակամարտության մեջ մտնելով թուրք իշխանավորների հետ՝ պաշտպանել է Վանի հայերի շահերը, զարկ է տվել կրթական գործին: Սպանվել է Վանի ապրիլյան ինքնապաշտպանության նախօրյակին, կուսակալ Ջնդեթ փաշայի հրամանով:

բարձրացանք լեռները, որոնք շատ անտառախիտ էին: Մենք Քըռքըռ լեռան լանջին էինք: Մեր գյուղի դիրքն այնպիսին էր, որ մենք սարի լանջին էինք ապրում: Շաղբաթի ահռելի գետը և Շամիրամի ջրանցքն էին անցնում մոտից: Մենք բարձրացանք լեռան գագաթը, անտառի մեջ, տեսանք, թե ինչպես թուրքերը և քրդերը մեր անասունները, անկողիները, մեր սպիտակեղենները թալանում էին: Մենք տեսանք, որ ամեն առավոտ թուրքի լամուկները գալիս են, սկսում են կրակել ինչ-որ թիրախի վրա: Երբ թուրքերը հեռացան, մեր տղաները իջան ու մոտեցան, տեսան, որ այդ թիրախը իմ պապի գլուխն էր: Անխիղճ թուրքերը պապիս թաղել էին հողի մեջ կենդանի-կենդանի, գլուխը թողել էին դուրսը և կրակում էին անընդհատ: Երբ վերադարձանք գյուղ, պապիս մարմինը, որ արդեն քայքայված էր, մի կերպ թաղեցինք:

Չեմ կարող մոռանալ 1915 թիվը, երբ մենք լեռներով, գյուղերով անցանք. մարտ ամիսն էր՝ անձրևային, բուք, սոսկալի ցուրտ: Վերջին գյուղը, որ Վարագ էր տանում, դա Բերդակն էր: Մենք այնտեղ տեսանք փողոցներում մերկ, սպանված մարդիկ, որոնք ուռել էին և նեխել: Հոտում էին: Մենք այդ բոլորի միջով անցանք դեպի Վարագ: Լուսաբացին Վարագի լեռներում թուրքերը, որ դիրքեր էին բռնել, մեզ տեսան և սկսեցին կրակել մեզ վրա: Ժողովուրդը սարսափահար լաց էր լինում: ...Մենք փախչում էինք ու մոտենում Վանին: Միշտ գիշերով էինք գնում, քանի որ ցերեկը մեզ հետապնդում էին: Երբ Վանին մոտեցանք ու Քաղաքամեջ պիտի մտնեինք, թուրքերը կանգնեցրին, սկսեցին տղամարդ փնտրել: Վանի հերոսները հեռադիտակով նայում էին, սկսեցին կրակել: Թուրքերից ոմանք ընկան, ոմանք փախան, և մենք ազատվեցինք, մտանք Վան: ... Վանում մեզ տեղավորեցին դպրոցի շենքում: Ամեն

առավոտ Վանի փողային նվագախումբը նվագելով ման էր գալիս՝ երեխաները նրա ետևից: Արդեն Վանի ինքնապաշտպանությունն էր: Մի հայ ասաց մեզ՝ երեխաներիս. «Գնացեք փամփուշտներ հավաքեք, բերեք, որ նորը պատրաստեն»։ Մենք գնացինք փամփուշտներ հավաքեցինք, տվեցինք արհեստանոցին: Հասավ օրը, երբ կոիվն ուժեղանում էր Վանում, Այգեստանում: Վասպուրականցիները, որ հավաքվել էին այնտեղ, մեծ կամքի ուժով պաշտպանեցին և՛ Այգեստանը, և՛ Վանի կենտրոնը՝ Քաղաքամեջը: Մերոնք ուժեղ մարտեր մղեցին և՛ Այգեստանում, և՛ Քաղաքամեջում: Թուրքերը լսելով, որ ոռոսական զորքը Սալմաստից գալիս է Վան, խուճապահար սկսեցին հեռանալ: Մերոնք հարձակվեցին, ոչ միայն թուրքերին ոչնչացրին, այլև մեծ ավար ձեռք բերեցին՝ հրետանի, փամփուշտներ և այլն: Մայիսի 6-ին Վանի բերդի վրա ծածանվեց Հայաստանի դրոշակը: Վասպուրականցիները մեծ սիրով ընդունեցին ոռոսական զորքերին և հայ կամավորներին՝ Զորավար Անդրանիկի ղեկավարությամբ» [Սվ. 2000: Վկ. 30, էջ 101-102]:

Վանի շրջակա գյուղերում թուրքերը հասցրել էին տեղում բնաջնջել հազարավոր հայերի: Երբ ոռոսական զորքերը մոտենում են Վանին, նրանց ետևից նաև հայ գրողներ՝ Հովհաննես Թումանյանն ու Ալեքսանդր Ծիրվանզադեն, ականատես են դառնում սահմուկեցուցիչ տեսարանների. «...Որտեղ հասցրել են՝ կոտորել են հայերին, - գրել է Հովհաննես Թումանյանը իր հուշերում, - գլխավորապես՝ տղամարդկանց ու հետները տարել գեղեցիկ կանանց: Եվ եթե ժամանակ են ունեցել, ոռոսական բանակի և հայ կամավորների սարսափը շատ մոտ չի եղել, բարբարոսական գվարճություններ են հորինել. խաչել են, կենդանի մարդկանց զանազան մասերը կտրատել

են, զանազան կերպ դասավորել, խաղեր են արել՝ մինչև կեսը դրել են պղնձի մեջ ու կեսից ներքև եփել, որ մյուս կեսը՝ կենդանի տեսնի ու զգա...: Շիկացած երկաթներով կտրել են մարմնի զանազան տեղերը և կրակի վրա խորովել, կենդանի խորովել են: Ծնողների առաջ երեխաներին են կոտորել, երեխաների առաջ՝ ծնողներին...» [Թումանյան 1959: էջ 212-213]:

Բնականաբար, եթե Վանում ինքնապաշտպանության չդիմեին, հայերը նույն ձևով պիտի մահատակվեին: Այստեղ տեղին է հիշատակել վանեցի վերապրող Արծրուն Հարությունյանի (ծնվ. 1907 թ.) խոսքերը. *«Ինքնապաշտպանությունը ծնվում է, երբ ժողովրդի նկատմամբ բռնություն է լինում...»* [Սվ. 2000: Վկ. 35, էջ 109]:

Ուստի, ինչպես Վանում, Շատախում և այլ վայրերում մղված ինքնապաշտպանական հերոսամարտերը իթիհատական կառավարության կիրառած բռնությունների դեմ ըմբոստացող արևմտահայության ազնիվ պողոթնում էր, նրա բողոքի ձայնը՝ ուղղված աշխարհի մեծ տերություններին: Այդ է վկայում նաև ժողովրդական երգի պատատիկը.

*Վան փոքրիկ քաղաք զավառակներով,
Լցվան դիակներ հարյուր հազարով,
Ներկվեցավ դաշտը կարմիր արյունով,
Զայն տվին ամպեր, երկինք ու աստղեր,
Այնպես կգոռան ու կհրամայեն,
Որ Եվրոպան և Ամերիկան լսեն*

[Սվ. 2000: Վկ. 532, էջ 444]:

Սակայն ո՛չ Եվրոպան և ո՛չ Ամերիկան չմիջամտեցին, միայն ազգային հերոսներն էին, որ սատար էին կանգնում անօգնական ժողովրդին:

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբից ինչ-

պես բոլոր արևմտահայերը, նույնպես և սասունցիները ենթարկվում են նոր, դաժան հալածանքների, կողոպուտների և սպանությունների:

1915 թ. մարտին թուրքական հրոսակները ներխուժում են նաև Սասուն: Ապրիլ-մայիս ամիսներին տեղի են ունենում սասունցիների առաջին մարտերը: Հերոսական դիմադրություն ցույց տալով թուրքական զորքերին, բայց մեծ կորուստներով՝ հայ մարտիկները մահանջում են դեպի Անդոք լեռան լանջերը և այնտեղից շարունակում ինքնապաշտպանությունը: Հունիսին համառ կռիվներ են տեղի ունենում Ասանքի շրջանում: Գոմուց վանքի և Տալվորիկի մարտիկները խուճապի են մատնում քուրդ հրոսակներին և գրավում Սատանի կամուրջը. քսակցիներն օգնության են հասնում նրանց: Հուլիսի 30-ին սասունցիներն ազատում են Շենիկը, բայց թշնամին նոր հարձակումով գրավում է Անդոքի փեշերին գտնվող գոմերը: Անդոքի, Մովասարի և Գերիմի լեռներում սասունցիները հերոսաբար պաշտպանվում են իրենց վրա հարձակվող թուրքերից և քրդերից: Մուշում և նրա դաշտում կոտորածներից փրկված և Քանայի ու Հավատորիկի լեռներում պատսպարված մոտ 30 հազար հայեր հերոսաբար դիմադրում են: Սակայն այդ դիմադրողական ինքնապաշտպանությունը դաժանորեն ճնշվում է:

«Թուրքը հարձակվավ, սկսավ կոտորել, - պատմել է սասունցի վերապրող Առաքել Դավթյանը (ծնվ. 1904 թ.), - լավ աղջիկներին, լավ կնիկներին տարան, փախցրին: Մեր գյուղը Միսակ անունով մի ֆեդայի կար: Էն զենք ուներ, մտավ վանք, սկսավ կռվիլ: Մենք զենք չունեինք: Սասուն երկու ամիս դիմադրեց: Թուրք զինվորներ եկան պաշարեցին, սկսեցին կոտորել: Օգնություն չկար՝ կոտորեցին...» [Սվ. 2000: Վկ. 4, էջ 55]:

Սասունի Ծենիկ գյուղից ականատես-վկա Խաչիկ Խաչատրյանը (ծնվ. 1900 թ.) նույնպես պատմել է. «Էկավ թուրքական զորքը՝ մոտ վաթսուն հազար: Էկան շրջապատեցին գյուղը: Մերոնք դիմադրեցին: Երկու անգամ թուրքական բանակ լցվավ գյուղը: Երկու անգամ էլ մեր ֆեդայիները և ովքեր որ զենք ունեին, ետ քշեցին: Հավաքվել էին գյուղի կենտրոնը: Երեք օր առաջ մեր ժողովուրդը քաշվել էր գյուղից: Գնացել էր Անտոք: Երեխաները կանանց հետ, ես էլ հետները գնացի: Հուլիսի սկիզբը գնացինք Անտոք: Ո՛չ հաց, ո՛չ ջուր, միայն անլի միսն էր, աղ էլ չկար: Մոտ 45 օր էնտեղ մնացինք: Կոպողները՝ կոպան: Թուրքական զորքը էկավ Անտոք: Էդտեղ էլ կոպան: 45 օր վերջը մեր հաց, մեր պաշար լրացավ: Հաց չկար: Մնաց փոխհնդը: Թուրքի զորք էկավ լցվավ: Ձորեր երեխաների ջանդակներ լցվան: Մայրեր չկարցան փախցնել: Թուրքերն ու քյուրդները կրակում էին: Մեկ գնդակից տասը մարդ էր ընկնում: Ով փախավ՝ արծավ: Հարսներիս տարան: Գետի ջուր էնքան մարդ տարավ: Վերջում լեռից ժողովրդին թափում էին զենք, որ փամփուշտ չօգտագործեն...» [Սվ. 2000: Վկ. 2, էջ 53]:

Սասունցի մի այլ ականատես-վկա Եղիազար Կարապետյանը (ծնվ. 1886 թ.) ավելի հանգամանորեն է մեկնաբանել պատմական այդ իրադարձությունների մանրամասները. «Քրդերի հարձակումները հայերի վրա իբր թե անպաշտոն բնույթ էին կրում, բայց ընդհանուր համոզմունք կար, որ այդ բոլորը կատարվում էր կառավարության տված խորհուրդներով, որի կենդանի ապացույցը այն էր, որ հայերի բողոքները չէին լսվում, դիմումներին պատասխան չէր տրվում: Սերվեթ փաշան երիտթուրք էր, գավառի փաշան էր և իսլամին հավատարիմ մարդ: Հետևաբար, նա էլ պետք է իր պարտքը կատար

րեր այնպես, ինչպես որ կատարել էին մյուս գավառների բոլոր փաշաները: Հունիսի 10-ից քյուրդ աշիրաթապետները խմբված ձիավորներով աջ ու ձախ կողմերից մտնում էին Մուշ, հրահանգներ էին ստանում ու վերադառնում էին իրենց տները: Ամեն գիշեր սայլերով ու բեռներով քաղաքից դուրս զենք ու փամփուշտ էր տեղափոխվում՝ քրդերին զինելու համար: Հայերի կոտորածը հաջող ավարտելու նպատակով կառավարության կողմից կազմված էր հատուկ ծրագիր, կատարված էր գյուղերի բաժանումը, նշանակված էր հարձակման օրը, ժամը, այնպիսի պատրաստությանը, որ այդ մեկ օրվա ընթացքում պետք է հիմնովին ավարտվեր Մշո դաշտի 105 գյուղերի բնաջնջումը՝ առանց մի երեխա խնայելու: Բաշխումը կատարված էր հետևյալ կերպ: Սկսած Մուշի աջակողմյան գյուղերից մինչև Մեղրագետի ակունքը, 35 գյուղերի ջարդը հանձնված էր հաջի Մուսաբեկին, որը իր տրամադրության տակ ուներ 3.500 ձիավոր ու հետևակ քուրդ: Քաղաքի հյուսիս-արևմտյան կողմի 15 գյուղերի ջարդը հանձնված էր ֆատկանցի Սլեման աղային, որը իր տրամադրության տակ ուներ 1.000 զինված քուրդ: Ս. Կարապետի շրջանի 20 գյուղերի ջարդը հանձնված էր չեթեապետի օգնական, երիտթուրք Ռաշիդ էֆենդուն, որը ուներ 500 չեթեական ձիավոր ուժ, նաև նրանց մասնակցում էր Ս. Կարապետի վանքում նստած զորքը և Զիարեթ գյուղում նստած մյուռյուրը՝ իր ժանդարմներով: Դաշտի հյուսիս-արևելյան կողմը՝ 15 գյուղերի ջարդը հանձնված էր ջբրանցի Դրբոյի Զնդուն, Կոլոտոյի Զուբերին և Աղչանի մյուռյուրին, որոնք իրենց տրամադրության տակ ունեին 1.000-ից ավելի քուրդ և ժանդարմա: Դաշտի արևելյան կողմը՝ Զխուրի քսան գյուղերի ջարդը հանձնարարված էր շեյխ Հազրեթին, որը իր տրամադրության տակ ուներ 1.200 ձիավոր՝ կազմված Զիլանի և Քո-

սուրի քողերից: Այս կազմակերպված ուժերից դուրս, յուրաքանչյուր մահմեդականի վրա սրբազան պարտք էր դրված, որ նրանք իրենց հանդիպող հային առանց խնայելու սպանեն ու ոչնչացնեն: Գոյություն ունեցող պրոպագանդա միանգամից փոխվեց: Հայերն այլևս գյուղից քաղաք գնալ-վերադառնալ չէին կարող: Թուրքերը հանդիպողին չարաչար ծեծում ու տանջում էին, տեղի էին ունենում նաև սպանության դեպքեր: Երբեմն հասակավոր կանայք անհրաժեշտ մի բան բերելու համար գնում էին քաղաք, նրանք էլ ճանապարհին միշտ ենթարկվում էին հալածանքի ու անպատվաբեր հիշոցների: Տագնապը համակել էր ժողովրդին, մարդիկ քուն ու հանգիստ չունեին:

Հունիսի 22-ին բաքրանցի քողերից 100 ձիավորներ իջևանում են Կոնկան գյուղի սարը: Հունիսի 23-ին նրանցից 10 ձիավորներ եկան մեր գյուղը և գյուղի իշխաններից պահանջեցին 10 հատ ոչխար, 10 կոտ ալյուր և 10 հատ թաղիք: Առանց առարկության նրանք ձրիաբար ստացան այդ բոլորը և, հնուց ծանոթ լինելով հավատորիկյցիների հետ, կամ խղճի խայթից դրդված, Թամոյի Ալին ասաց. «Հայե՛ր, ես ձեր աղն ու հացը շատ եմ կերել, հիմա ձեզ մի ճշմարտություն պետք է ասեմ: Սուլթանից հրաման է եկել, որ օսմանցու հողի վրա ապրող բոլոր հայերին անխնա պետք է կոտորենք: Այժմ, եթե դուք կանգնեք ու հեռվից դիտեք Սլիվանի դաշտի վրա, կտեսնեք, որ ցորենի արտերը հասել են, հասկը՝ հասկի վրա է ընկել, բայց ճնճղուկ անգամ դուք այնտեղ տեսնել չեք կարող: Տիրել է մի չտեսնված ամայություն: Մենք հիմնովին կոտորել ենք այդ միջավայրի հայերին, հիմա էլ կառավարությունը մեզ կանչել է այստեղ, որ մենք Մշո դաշտի և Սասունի հայերին էլ կոտորենք: Մի քանի օր է մնացել, որ ձեզ մոտ էլ կոտորած սկսվի, և պետք է այնպես լինի, որ Հիսուս Քրիստոսի անունը տվող

մարդ՝ այս հողի վրա կենդանի չմնա»: Քրդերը վերցրին իրենց պահանջածը, գնացին, իսկ մենք մտածմունքի մեջ ընկանք...: Այսպես, դարերի ընթացքում հողին ու մաճին կառչած հայաշատ այդ գավառը մի ցերեկվա և մի գիշերվա մեջ դարձավ ամայի՝ անմարդաբնակ: Իսկ նրա սեփական տները և թուրքերի ու քրդերի ձեռքով հրեշային գործողությամբ՝ սրով մորթվեցին, կրակով այրվեցին, ջրով խեղդամահ եղան՝ 105 գյուղերի 70.000-80.000 երկու սեռի պատկանող հայ բնակիչները: Թալանի տրվեց միլիոնների հասնող նրանց հարստությունը: ...Հունիսի 28-ի օրը ոչ բարով վարդավառի կիրակին էր. հայ ժողովրդի ուրախության տոնը, ավա՛ղ, դարձավ «մարդավառի» կիրակի՝ Տարոնի դաշտի հայության համար...» [Ավ. 2000: Վկ. 1, էջ 44-45]:

Նույն վարդավառի օրվա մասին է վկայել նաև մշեցի Ծողեր Տոնոյանը (ծնվ. 1901 թ.). «1915 թվին վարդեվրի օրը եղավ կոտորում: Թուրք ասկյարներ Դադսդնու չեչեններ բերին, մեզ կոտորին: Մեր գեղ էկան թալանին, ոխչար, գոմշդանք, մալ քշին տարան: Ով խորոտ էր՝ տարան: Իմ հորքորին մե տղա կար, էն գիշեր-ցերեկ իմ մոտ էր, դրան լե տարան: Տղամարդ չմնաց: Հավաքին մեծ ու մանր, տարան լցրին Ավգուտ կեղի գոմերու մեջ, կրակ տվին, վառին: Լցրին Մալխասի Մարդոյի գոմերու մեջ, խոտի դեզեր դարսին գոմու շուրջ բոլոր, վրեն նավթ ցանին, տվին կրակին: Իմ հոր տնից 60 ջան վառվան էդ գոմերու մեջ: Էն օր ես եմ տեսել, լաո¹³, թող իմ թշնամին չտեսնա: Մենակ ես ու ախպերս ազատվանք: Առաջուց խորոտ հարս ու աղջիկ տարան թուրքացրին, ինչ լե

¹³ Լաո – Սասունի և այլ բարբառներում աղջիկ կամ տղա զավկին դիմելու փաղաքշական արտահայտություն:

մատղաշ տղա-էրեխա կար՝ մորերու գրկից պոկեցին տարան, որ դարձուն զաբթիա: Գոմի մէջ օր ծուխ ու կրակ մտաւ, ժողովուրդ սկսաւ հազալ ու խեղդւիւն: Մեր զմանուկ ուրացաւ, լաո, իսկական Սողոմ-Գոմոր էր: Վառվող մարդիկ վազվզում, խփվում էին պատերուն, ոտի տակ տրորում գետնին ընկած իրենց մանրերուն: Էն օր ես իմ աչքով եմ տեսել, լաո, թող սարի գիլանք չտեսնեն: ...Կըսեն, թուրք մոլլան էդ օր տեսաւ՝ չդիմացաւ, ինքն ուրան կախեց: Էդ ալալորումի մէջ, մարդկանց մեծ մաս խեղդվաւ, մեռաւ: Գոմի տանիք փլաւ: Փլաւ, լցվաւ մեռուկներու վրա: ...Երանի ես ու քորիս ախպերս լե վառվեինք, իմալ օր 60 ջան վառվան, օր չտեսնեինք իդա անհավատ մարդոց անխիղճ ու անաստված օրենք: Գոմերու մէջ վառեցին մեր կեղ՝ Վարդենիսի, Մշախէնի, Աղբենիսի, Ավզուտի, Խվների ու Էլի շրջակա գյուղերու սա՛ղ կեղացոց: Էն օր ես եմ տեսել, զիմ դուշման չտեսնա... Գոմի գերաններ օր վառան, տանիք փլաւ, Էրդիկ բացվաւ, բոց ու ծուխ էդ ծակից դուրս էլաւ, մզի օդ էկաւ: Հմա օր օդ առանք, ես ու իմ հորեղբոր աղջիկ՝ Արեգ, վերցրինք իմ ուշաթափուկ ախպոր ոտ ու ձեռից թալինք տանիք: Ես ու Արեգ լե վառված գերաններու, ջանդգներու վրայով էդ Էրդկից մզի թալինք դուրս: Օր էլանք տանիք, տեսանք թուրք զինվորներ շուրջպար բռնած կպարեն, կուրախանան: Մի՛նչէ Էսօր իմ անկջներու մէջ է ընոնց երգի ձեն. «Թօրի՛, յավրու՛մ, յօրի՛» («Քալի՛ր, որդի՛ս, քալի՛ր») ասում ու թրեր իրար զարկելով կպարենին» [Սվ. 2000: Վկ. 8, էջ 61]:

1904 թ. ծնված մշեցի ականատես-վկա Սեդրակ Հարությունյանը ևս շատ շատերի նման վկայել է. «Ես ոչ միայն մեր գյուղի կոտորումն եմ տեսել, այլ նաև մեր բոլոր գյուղերի փախեփախն եմ տեսել: Խսիրի պես համատարած գետնին

փռված դիակներ էին...» [Սվ. 2000: Վկ. 9, էջ 63]:

Հայոց ցեղասպանության մութ ծալքերը լուսաբանող պատմաբան, պրոֆեսոր Վահագն Տատրյանը, անդրադառնալով մշեցիների կրած անասելի տառապանքներին, նշում է. «...Արդարեւ, Մուշ գիւղաքաղաքի եւ Մշոյ դաշտի 100-ի մօտ գիւղերու 90.000-ի մօտ ընդհանուր հայ բնակչութեան կոտորածը եղաւ Հայկական ցեղասպանութեան ամենէն սահմուկեցուցիչ եւ միանգամայն քստմնելի դրուագներէն մին: Երեք իրադարձութիւններ Մուշի կոտորածը այս տեսակետէ յատկանշական կը դարձնեն. նախ որ թրքական բանակ, քիւրտ աւագակախումբեր եւ Օսմանեան կառավարութեան վարչակազմը՝ ձեռք-ձեռքի տուած, աջակցեցան Իթթիհատի դիւային ծրագրի իրականացման գործին, երկրորդ՝ այդ բանակի ծառայութիւնը անսովոր էր այն իմաստով, որ 10-20 վաշտեր յատուկ կերպով Խարբերդէն հոն բերուեցան ու թնդանօթներու ցանցով մը Մուշի հայկական թաղերը պաշարելէ յետոյ, ահագնադողորդ ոմբաձգութիւններով զանոնք հիմնայատակ քանդեցին, եւ կործանեցին համայն հայ բնակչութիւնը՝ իրենց տուներու փլատակներուն մէջը եւ տակը, հակառակ այն իրականութեան, որ միայն քանի մը տուներ ամրացուած էին եւ զինեալ դիմադրութիւն ցոյց կուտային, երրորդ՝ Մշոյ դաշտի 70-80.000-ի հասնող հայ բնակչութեան ստուար մեծամասնութիւնը, այսինքն կիներ, երեխաներ եւ ծերեր գոմերու, մարագներու եւ ախոռներու մէջ թխմելով ողջ-ողջ այրեցին, հրոյ ճարակ ընելով այդ բոլորը...» [Տատրեան 1995: էջ 14]:

Իսկ խնուսցի Հրանտ Գասպարյանը (ծնվ. 1908 թ.)

վկայել է. «Ես ինչ որ տեսել եմ, էն իմ տեսածը պատմեցի ձեզ: Ամբողջ աշքիս դեմն է իմ տեսածը: Խնուսից ոչ մի բան չենք բերել: Միայն ջաններս ենք ազատել: Մեր գերդաստանը 143 հոգի էին. մի քուր, մի ախպեր, մերս ու ես փրկվանք...» [Սվ. 2000: Վկ. 12, էջ 71]:

Եթե 143 շնչից բաղկացած մահապետական մեծ գերդաստանից միայն 4 հոգի է փրկվել, ուստի կարելի է երևակայել, թե ֆաշիստական գազախցիկների մահափառները հանդիսացող կրակի տրված գոմերում և մարագներում քանի՜, քանի՜ տասնյակ հազարավոր հայ է ողջակիզվել մախքան ֆաշիստների կողմից հրեաների Ողջակիզումը (Holocaust):

Պատմական այս իրադարձություններից առընթեր հյուսվել է մահ ժողովրդական երգը.

...Սասուն գալառ անտառներով,
Պարսպապատ բարձր լեռներով,
Դեմ կանգնեց միշտ թուրք զորքին.
Սասուն բուրե տաք արյան հոտ

[Սվ. 2000: Վկ. 531, էջ 443]:

«Տաք արյան հոտ» էր բուրում մահ հերոսական Ծափն-Գարահիսարում, Ծատախում, Կարինում, Պոնտոսում, Մուշում, Սվազում, Խարբերդում, Մալաթիայում, Դիարբեքի-րում, Արևմտյան և Կենտրոնական Անատոլիայի հայաբնակ վայրերում՝ Իզմիրում, Բուրսայում, Անկարայում, Կոնիայում և այլուր: Աննկարագրելի դաժանությամբ ոչնչացնում էին բոլորին՝ չխնայելով մույնիսկ մանուկներին:

Եվ երբ ոռոսական զորքերը մահացնում են, ստիպված մրանց ետևից Արևելահայաստան են գաղթում մահ Վանի, Սասունի, Ծատախի, Ծափն-Գարահիսարի, Մուշի, Բիթլիսի, Ալաշկերտի, Բայազետի, Բաբերդի, Էրզրումի և այլ բնակա-

վայրերի հայերը: Նրանք արցունքներով, բայց ճարահատված թողնում են իրենց Երկիրը՝ իրենց հազարամյա պատմական բնորանը, ու, մղկտալով, ընկնում են գաղթի ճամփան: Այդ աննկարագրելի ազգային մեծ վիշտն իր հորինած եղերերգի մեջ է խտացրել սասունցի վերապրող օծոված Շողեր Տոնոյանը (ծնվ. 1901 թ.).

Անտեր թողինք Մշո անուշ դաշտ-դուրան,
Սուրբ օթեան, տուն ու տանիք ու վաթան,
Մատուռ ու վանք, գիրք ու կանոն, Ավետրան,
Մնաց անտեր, մնաց՝ ընկալ շան բերան

[Սվ. 2000: Վկ. 557, էջ 453]:

Գաղթի ճամփան իսկական ողբերգություն էր:

Վանեցի Վարդուհի Փոթիկյանը (ծնվ. 1912 թ.) ցավագ-նորեն է վերհիշել այդ սարսափելի թոճ ու բռնը. «...Ա՛խ, իմ դուշմանը չտեսնա էդ օրը: Վու՛յ, սև ըլեր էդ օրը: Մենք եկել հասել ենք Բերկրիի կարմունջի մոտը: Մեկ էլ ժողովուրդը գո-ռաց՝ փախե՛ք: Մթանը տեսանք, Բերկրիի ձորը մեղ ձոր էր, գե-տը չհասած՝ քրդերը վրա տվեցին: Հայերը, որ փախնում էին, ոտները սոթ էր տալիս, ընկնում էին գետը, խեղդվում: Ո՛րը անասունով էր ուզում անցնել, ո՛րը մտնում էր ջուրը՝ ջուրը տանում էր: Գոռում էին, ճչում, լաց լինում: Քրդերը կրակում էին մեզ վրա: Մերը մանուկը ուրացավ...» [Սվ. 2000: Վկ. 49, էջ 128]:

Գաղթի այդ ահավոր տպավորությունների անմիջական ազդեցության տակ է հորինվել ժողովրդական հետևյալ պատ-կերավոր երգը.

Բերկրու Սև սարից թուրքը իջավ ցած,
Հազար-հազար դիակներ փովան.
Վերան ըլնես դու, Բերկրու անխիղճ գետ,
Հազար-հազարով արյուն խմող գետ

[Սվ. 2000: Վկ. 344, էջ 714]:

Հետագայում հայտնի քիմիկոս դարձած վանեցի Աղա-
սի Քանքանյանին (ծնվ. 1904 թ.), երբ մենք խնդրեցինք պատ-
մել իրենց գաղթի մասին, նա, հուզումով և արցունքներով վեր-
ապրելով իր անցյալը, ասաց. «...Մենք մինչև Իզդիր հասնելը
տասը օր ճանապարհ անցանք, անձրևի տակ, արևի տակ, ցե-
խերի մեջ՝ կիսաքաղց ու ծարավ: Ծանապարհին քրդերը հա-
ճախ վրա էին տալիս, մարդկանց կոտորում, թալանում: Դա
հատկապես տեղի ունեցավ Բանդիմահու կամուրջի մոտ (Բեր-
կրի), որտեղ կուտակում էր տեղի ունենում: Այդ կամուրջից
ինչքա՛ն մայրեր երեխաներին գրկած՝ ջուրն են անտվել, որ
թուրքերի ձեռքը չընկնեն: Ծանապարհին ովքեր սպանվում
էին, ովքեր մահանում էին, թողնում էին ճանապարհի եզրին,
շատ դեպքերում ծածկում էին հողով, շատ դեպքերում՝ ոչ: Ան-
թաղ դիակներ տեսնելով՝ ես այնպես եմ ազդվել, որ ստացել եմ
տխրացավ, և մինչև հիմա այդ շարունակվում է» [Սվ. 2000: Վկ.
28, էջ 98]:

Ունեզրկված, ուժասպառ, ճանապարհին իրենց հարա-
գատներին անթաղ թողնելով՝ արևմտահայ գաղթականները
մեծ դժվարությամբ հասնում են Իզդիր (Սուրմալու), որը նույն-
պես նույն ճակատագրին պիտի արժանանար: Սուրմալուի մա-
սին ժողովրդական երգի խոսքերը մեզ է հաղորդել ժողովրդի
կողմից սիրված, հայտնի երգիչ, շատախցի վերապրող Հայրիկ
Մուրադյանը (ծնվ. 1905 թ.).

*Ա՛յ Սուրմալու, ջա՛ն Սուրմալու,
Չկա զանգակի ձայն, չկա հայ բարբառ,
Դարձել ես բնավեր գայլերի անտառ,
Դպրոցներով հարուստ, մարդաշեն գավառ:*

[Սվ. 2000: Վկ. 559, էջ 453]:

Ահավոր մղձավանջ ապրեց նաև Կիլիկիայի հայությունը:

Հայաշատ Կիլիկիայով էր անցնում բացառիկ կարևո-
րություն ներկայացնող Բեռլին-Բաղդադ երկաթուղին: Այդ
հանգամանքը մտահոգում էր Թուրքիայի կառավարությանը,
քանի որ Կիլիկիայի աշխատասեր ու գործունյա հայությունն իր
բարգավաճ վիճակով կարող էր տիրապետող դառնալ թուր-
քական տնտեսության մեջ: Լեռնային Կիլիկիայում Հանընից,
Ջեյթունից մինչև Դյորտյուլ սփռված էին հայկական գյուղերն ու
ավանները, որոնց բնակիչները թեև զբաղվում էին մետաքսա-
գործությամբ, ջուլհակությամբ, գորգագործությամբ և այլ տոհ-
միկ արհեստներով, սակայն նոր սերունդը բավական լուսա-
վորյալ էր՝ այնտեղ գործող հայ և օտար դպրոցների ու կոլեջնե-
րի շնորհիվ, որոնք կարևոր դեր էին կատարել նրանց հոգեգի-
տակցական աշխարհի ձևավորման վրա: Բացի այդ, 1877-1878
թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո խոստացված, բայց
չիրականացված «բարեփոխումների» առնչությամբ, Թուրքիա-
յի շատ գավառներում ծայր առած բռնություններն ու կոտո-
րածները դեռևս վերջնականապես չէին բնաջնջել ի բնե ազա-
տատենչ Կիլիկիացիներին: Կիլիկիայի արծվաբույն Ջեյթունն
արդեն վաղուց թուրքական բռնակալության գայրույթի կիզա-
կետն էր դարձել: Հետևաբար, ժամանակն էր հին հաշիվները
մաքրել նաև համարձակ զեյթունցիների հետ:

Պատմական այս իրադարձությունների մանրամասները
հանգամանորեն լուսաբանված են զեյթունցի ականատես-վկա
վերապրողների՝ Գյուրջի Քեշիշյանի (ծնվ. 1900 թ.), Կարա-
պետ Թոզլյանի (ծնվ. 1903 թ.), Հովսեփ Բշտիկյանի (ծնվ.
1903 թ.), Եվա Չուլյանի (ծնվ. 1903 թ.), Սեդրակ Գայբակյանի
(ծնվ. 1903 թ.), Սամվել Արջիկյանի (ծնվ. 1907 թ.) և Գայանե
Ատուրյանի (ծնվ. 1909 թ.) պատմած հուշերում [Սվ. 2000: Վկ.

137-143, էջ 254-269]:

Կիլիկիացիները, որոնք հայկական վերջին թագավորության (11-14-րդ դդ.) արժանի հետնորդներն էին և անցյալի ազգային-ազատագրական պայքարի փառապանծ ավանդույթներ ունեին, կարող էին այս անգամ ևս անձնվեր պայքարի դուրս գալ, բայց դրան խանգարում են Կիլիկիայի կաթողիկոս Սահակ Խաթայանն ու հայ երևելիները, որոնք, խաբվելով թուրքական կառավարության կեղծ խոստումներից, «հնազանդության» կոչ են անում, պատճառաբանելով, թե «Փոքր շարժում մը կրնա վտանգել Թուրքիոյ նահանգներու ամբողջ հայութեանը»:

Արդեն թուրքական կառավարությունը ինչպես այլ վայրերում, Կիլիկիայում ևս հավաքել էր հայերի զենքերը, երիտասարդներին զորակոչել թուրքական բանակ, բայց նրանցից շատերը կարողացել էին բանակից փախչել և թաքնվել Զեյթունում: Խուրշիդ փաշան իր 3.000 զորքով գալիս, պահանջում է դասալիքներին, որոնք ապաստանել էին Բերգնկա լեռան վրա կառուցված հինավուրց Ս. Աստվածածնի վանքում: 1915 թ. մարտի 25-ին թշնամին սկսում է գնդակոծել վանքը: Զեյթունի ինքնապաշտպանները, Փանոս Չաքրյանի գլխավորությամբ, պատասխանում են թշնամուն՝ խնայելով իրենց փոքրաքանակ փամփուռները:

«...Վանքը Զեյթունի ճիշտ դիմացն էր, - մեզ պատմել է զեյթունցի Կարապետ Թոգլյանը (ծնվ. 1903 թ.), - մենք՝ զեյթունցիներս, կանգնած սեյիր կընեինք (կդիտեինք): Մեյ մըն ալ քանի մը ասկյարներ թենեքեով գազյաղը (թիթեղով նավթ) տարին, որ վանքը այրեն: Ամմա էշխեները (կովողներ) վանքին մեջեն անոնց սպանեցին...» [Սվ. 2000: Վկ. 139, էջ 262]:

Ապրիլի 9-ին Զեյթունի 300 երևելիները տարվում են գո-

րանոց, ապա՝ նաև նրանց ընտանիքները, որոնց բոլորին քշում են անձանոթ վայրեր: Սրանք առաջին տարագրվողներն էին: Սկսվում է Զեյթունի բռնագաղթը: Նախ՝ դատարկվում է վանքի թաղը, հետո՝ Զեյթունի շրջակա գյուղերը: Այնուհետև ավերվում է արծվաբույն Զեյթունը:

1915 թ. գարնանից սկսվում է Կիլիկիայի հայության բռնագաղթն ու կոտորածը: Մեկը մյուսի հետևից դատարկվում է Մարաշը, Այնթապը, Հանընը, Անտիոքը, Իսկենդերունը, Քեսաբը և այլ հայաբնակ վայրեր:

*Sürgünlük çıktı, köy boşaldı,
Benim kıymetli malım Türklere kaldı,
Çoluk-çocuk yolcu olduk,
Alan-talanı başladı.*

Աքսորն սկսվեց, գյուղը դատարկվեց,
Իմ թանկ ունեցվածքը թուրքերին մնաց,
Մանուկ ու ծեր ճամփորդ դարձանք,
Ալան-թալանն սկսվեց

[Սվ. 2000: Վկ. 366, էջ 418]:

Մերձավոր Արևելքի միսիոներների նախագահ Յոհան Լեփսիուսը՝ «Հայաստանի ջարդերը» գաղտնի տեղեկագրի մեջ անդրադառնալով Զեյթունի տեղահանությանը, նշում է. «Ինչ ատենեն տեղի ունեցաւ ամբողջ Զեյթունի հայ բնակչութեան տարագրութիւնը՝ իրարու ետեւէ շատ մը քարաւաններով: Ծուրջ քսան հազար հոգի էին անոնք: Քաղաքը չորս թաղեր ունէր: Բնակիչները տարուեցին՝ մէկը միւսի ետեւէն, շատ անգամ կիները եւ մանուկները այրերէն զատուած: Իւրաքանչիւր արհեստէ միայն մէյ մէկ հոգի ըլլալով՝ միայն վեց հայեր կրցան մնալ: Տարագրութիւնը շաբաթներ տեւեց: Մայիսի երկրորդ կէսին Զեյթունը ամբողջովին պարպուած էր: Զեյթունի բնակիչներէն վեց-ութ հազար հոգի Կոնիայի եւ Էրեւլիի մէջտեղ, Քարափունարի և Սիւլեմանիեի ճախճախոտ մարզերը դրկուեցան և տասնհինգ-տասնվեց հազար հոգի՝ դեպի Դեր Զոր, Եփրատի վրայ, Միջագետքի տափաստանը: Անվերջանալի քա-

րաւանները անցան Մարաշէն, Ադանայէն եւ Հալեպէն: Սնունդն անբաւարար էր, բան մը չեղաւ զանոնք տեղ մը հաստատելու համար կամ նույնիսկ իրենք իրենց տարագրութեան վախճանին հասցնելու համար...» [Գալուստեան 1934: էջ 178]:

«Հայերի բռնագաղթը լոկ նենգամտորեն քողարկված մահվան դատավճիռ էր», - գրել է ֆրանսիացի հրապարակախոս Ռընէ Պիճոն իր «Հայերի ոչնչացումը. գերմանական մեթոդ – թուրքական գործ» աշխատության մեջ [Pinon 1916: p. 27]:

Տարագրության ճամփաներին անխիղճ ոստիկաններն ու զինվորական համազգեստ հագած բանտերից դուրս բերված ոճրագործ մարդասպանները կողոպտում, թալանում էին բոլորին, առևանգում, պատվազրկում կանանց ու աղջիկներին:

Անգեն ու անդէկ մնացած անօգնական հայ ժողովուրդը, մտրակի ու սվինների հարվածների ներքո, արցունքն աչքերին, քշվում էր իր պապենական շեն օջախներից: Թուրքական կառավարության նախաձեռնած ցեղասպանության քաղաքականությունն ընդգրկել էր օսմանյան կայսրության գրեթե բոլոր հայաբնակ վայրերը:

Բասենցի Իշխան Հայկազյանը (ծնվ. 1909 թ.) իր մտորումներն է կիսել ասելով. «...Երբեմն մտածում եմ անցած կյանքիս վրա, թե ինչպես թուրքերը հայ անգեն ժողովրդին կոտորում էին անխիղճ ձևով: Ծիշտ է, պատերազմում (Երկրորդ համաշխարհային – Վ. Ս.) մենք էլ կռվեցինք, մարդ էլ սպանեցինք, բայց դա՛ պատերազմ էր, ու երկու կողմն էլ զենք ուներ: Իսկ հայ ժողովուրդը է՛ն ժամանակ շա՛տ անպաշտպան էր ու անզեն...» [Սվ. 2000: Վկ. 93, էջ 199]:

Հայերի բնաջնջումն իրականացվում էր և՛ տեղերում և

թե՛ արքայավայրերում՝ Միջագետքի անծայրածիր անապատներում, հատկապես Ռաքքայում, Հավրանում, Ռաս ու Այնում, Մեսքենում, Սուրունում, Դեյր էլ Զորում և այլուր:

Բեյլանցի Մարտիրոս Գյոզալյանը (ծնվ. 1898 թ.), որը տեղահանության զրկանքները կրելուց հետո անապատական արաբների մոտ է գոյատևել, խորը գայրույթով է հիշել իր անցյալը. «Թուրքին յաթաղանը ցիրուցան ըրավ հայերի օջախները: Ինչ ունեինք-չունեինք թալանեցին, տուն-տեղ տակնուվրա ըրին, մեզ էլ քշեցին Արաքստանի անապատները. անթի, ծառավ, մուրալով կերթալինք, ու՞ր էրթալնիս մենք ալ չգիտեինք...» [Սվ. 2000: Վկ. 175, էջ 314]:

Նիկոմեդիայից Մուշեղ Հակոբյանը (ծնվ. 1890 թ.) նույնպիսի ծանր թախիծով է հիշել արքայի ճամփաների տառապանքը. «Մեր տունը քանդեցին, մեջի եղածները թալանեցին, անասուններին քշեցին, տարան: Աքսորի ճամփին հրաման եկավ՝ մարդագլուխ մեկ-մեկ ոսկի հավաքել...: Այնքան անխիղճ էին, որ մեզ հոգնեցնելու համար մեր գացած ճամփով ետ կդարձնեին, նորեն սարերով, ձորերով կտանեին, որ հոգնեք, կոտորվինք: Արդեն ո՛չ հաց կար, ո՛չ ջուր...» [Սվ. 2000: Վկ. 228, էջ 368-369]:

Բուրսացի ականատես-վկա Դավիթ Դավթյանը (ծնվ. 1908 թ.) պատմել է. «...Մեր գերդաստանը 62 հոգի էինք, վերադարձանք միայն 4 հոգի: Ոմանց՝ թուրքական բանակ տարան՝ էնտեղ կոտորեցին, ոմանք՝ արքայի ճամփին մեռան, ջարդվան: Քեռիիս, որը մեծ դժվարությամբ փախել էր թուրքական բանակից, հետապնդեցին ու սպանեցին: Հայրս ևս փախել էր թուրքական բանակից և Կոնիայի մի ազարակում թաքնվել էր մինչև զինադադարը: Մայրս, քույրս, պապս արքայի ճամփա-

Անրիկն ոչիլից տիֆով հիվանդացան: Կոնհայի չորայիս տա-
փաստաններով քայլում էինք սոված ու ծարավ...» [Ավ. 2000:
Վկ. 235, էջ 372]:

Բուրսա քաղաքից ականատես-վկա Ավետիս Նորիկյա-
նը ևս պատմել է. «Զորս տարի հոն մնացինք: Դաշտերում խոտ
էինք հավաքում, հավաքված ցորենի վերջին հատիկներն էինք
հավաքում, ուտում: Բայց մեծ մամաս ճանապարհին մեռավ:
Իմ 3 հորեղբայրներուս իրենց ընտանիքներով քշել էին Դեր
Զոր, և բոլորն էլ կոտորվել էին» [Ավ. 2000: Վկ. 236, էջ 374]:

Աֆիոնգարահիսարցի Սմբուլ Բերբերյանը (ծնվ. 1909
թ.) ժիր ու աշխույժ 80-ամյա տարիքոտ մի կին էր: Երբ մենք
խնդրեցինք պատմել իր անցյալը, սկզբում հրաժարվեց, սկսեց
հուզվել, ապա՝ լաց լինել և ինքն իրեն կմկմալ: Պարզվեց, որ
նա իր հորինած եղերերգն է երգում: Այդ տխուր երգը, որն իր
տխուր կյանքի պատմությունն էր, մեջ ընդ մեջ, իր հուշը պատ-
մելու հետ, ընդհատում էր իր պատմածը և երգով շարունակում:
Դա մի ամբողջ ողբերգությունն էր: Ահա նրա պատմածից մի
հատված. «Ես հորս չեմ հիշում: Թուրքերը հորս սպանել էին:
Քեռուս ալ տանջանքներով մեռցրել էին: Մեծ եղբորս թուրքա-
կան բանակ տարին...: Հետո՝ փոքր եղբայրս ալ տարին: Հետո
իմացանք, որ 17 հայ տղաների հետ գիշերով սպանել, գցել էին
գյուղի կամուրջին տակը: Էնպես որ, տղամարդ չմնաց մեզ
մոտ, երբ աքսոր էլանք: Դեր Զորում 5 մորաքույրներիս փախ-
ցրին, տարին, վերջն ալ անոնց գլուխները կտրեցին, խշտիկնե-
րու վրա ցցեցին, որ մենք տեսնանք: Անոնց ջանդակներն ալ
գցեցին Եփրատը: Մամայիս հորաքույրին միայն կեսը գտանք,
մամաս թաղեց հողին մեջը...: Բոլորին կոտորեցին, մարդ չթո-
ղին: Լալեն մամայիս աչքերը կուրացան...» [Ավ. 2000: Վկ. 200,

էջ 335-336]:

Յոզղատցի Արշակունի Պետրոսյանը (ծնվ. 1903 թ.)
սկզբում հրաժարվում էր պատմել՝ պատճառաբանելով, որ
սիրտը չի դիմանա այդ բոլորը վերհիշելով, բայց հետո, ուժ հա-
վաքելով, սկսեց պատմել իր անվերջանալի հուշը, որից մեջբե-
րում ենք մի հատված. «...Վեց օր գացինք Յոզղատի սարերը:
Ջուր չկա, հաց չկա: Ժողովուրդին բերանը կչորնա...: Մեզ
տանու՛մ էին, տանու՛մ, ոչխարներու պես մեզ տանու՛մ էին:
Մեկ էլ տեսանք մեր ետևեն արյունոտ, ծեծված, խոշտանգված,
կողոպտված հայեր եկան մեզ մոտեցան, ըսին. «Վա՛յ, երանի
ձեզի հետ գայինք», - ու սկսան լալ...: Ժանդարմները վրա
հասան, սկսան պոռալ, կանչել, մեզ իրարմե հեռացնել. «Իրար
մի՛ խառնվեք», - կպոռան: Ադ հայերն ալ մեզմե բերքեր. անոթի,
սոված, վեց օր քայլել են և ալ՝ ծեծվա՛ծ, վիրավո՛ր...: Ադ իրա-
րանցումին մեջ մեյ մըն ալ մի սև ամպ եկավ մեզի ծածկեց:
Ժանդարմները մեզ կորցրին: Մենք ադ հայերուն սկսանք օգ-
նել. ով ինչով կրնար՝ պատառ մը հացի փշրանք, կա՛մ խոտ
կուտայինք, կա՛մ հագուստնիս կպատռեինք անոնց վերքերը
կկապեինք: Չէինք մտածում, որ վաղը մեզի ալ ադ օրին պիտի
ձգեն ադ անխի՛ղճ, անաստվածնե՛րը...: Սև ամպերը մեզմե հե-
ռացան, ժանդարմները նորեն իրենց գործին անցան. մե՛կը
խրբաջով (մտրակ), մե՛կը շղթայով կմխթեն, որ առաջ էրթանք:
Մեզ տարին, տուներու մեջ մտցուցին, իբր պիտի հանգստա-
նանք: Գիշերը մեզ վրա հարձակվեցան: Դուռները հանեցին,
սիլահներով (զենք) մեզ վրա էկան: Մամայիս շորերուն մեջը
ոսկիներ կային կարված, առին տարին, ինչ որ կար մնացած՝
մեզի թալանեցին, մորե մերկ ձգեցին...: Մեկ ալ դալալ մը
եկավ, սկսավ պոռալ. «Հայդէ՛, գյավուր քեսմէյէ գիղէյիմ. բալ-
թա-քյուրէկ ալայըն, գյավուր քեսմէյէ. գիղէյիմ» («Դե՛, գյավուր

մորթելու պիտի գնանք, կացին-բաճ վերցրեք, գլավուր մորթելու գնանք»): Միտքս կուգա նե՝ սիրտս կկանգնի...: Ադ տեղ թուրքական գյուղ մը կար: Թուրք կնիկները էկան, լացին մեր վրա: Է՛նենց, ո՛նց որ առջևնին մեռել կա դրված: Ադ վիրավոր հայերուն մորթելն առաջ անոնց շորերը վրանեն հանեցին, որ մեջը կարված ոսկիները իրենց մնան: Թենքենքները լցվել էին ոսկիներով: Ադ վիրավոր հայերուն տարին մորթեցին. մեզմե քիչ մը անդին՝ ձորին բերանը: Հայերուն որ կմորթեին, թուրքերը գալիս ոսկի էին փնտրում մորթվածներուն վրա...: Մենք կուլա՛նք, կուլա՛նք, մեկ կողմեն ալ՝ կողողանք: Բոլորս ալ կնիկ, աղջիկ, չոջուխ ենք, մեջերնիս տղամարդ չիկա. երկու տասնյոթ տարեկան մանչեր կան անոնց ալ դենգերուն (հակ) տակ պահած էին, որ չգտնան: Լա՛ց, կո՛ծ, Աստված յարդըմ ընե, է՛յ, թուրք, ալլահդան բուլսուն, ալչա՛խ թուրք (Աստված օգնական լինի, է՛յ թու՛րք, Աստծուց գտնես, ստո՛ր թուրք): Մեյ մըն ալ նայինք, քի մենձ զաբիթներ եկան, սկսան խոսիլ մեզի հետ՝ արդեն անուշությունով. «Քույրիկներ, մայրիկներ, խնդրում ենք ձեզ՝ աղվոր մտածեցեք, քի թուրք պիտի ըլլա՞ք, թե՞ չէ: Դուք տեսաք մորթվողներուն: Կուզե՞ք անոնց պես ըլլալ: Ավելի աղեկ չէ՞ դուք ալ թուրք ըլլաք, թե չէ՝ ձեզի ալ պիտի մորթենք...»: Ամա՛ն, յավրու՛մ, ո՞րը ըսես, ո՞րը խոստովանվիմ: Իմ գուլխուս եկածը էփած հավին գուլխուն անգամ չի եկած...» [Սվ. 2000: Վկ. 212, էջ 345-346]: Եվ արցունքները խեղդեցին զառամյալ խեղճ կնոջ կոկորդը:

Էսքիշեհիի Սամվել Փաթրյանը (ծնվ. 1900 թ.) հիշում էր իրենց անցած աքսորավայրերն ու կրած տառապանքները. «...Երբ 1915 թվին մեզ աքսոր հանեցին, ես կհիշեմ, թե ինչպես Էսքիշեհիին մեզ ոտքով տարին Սիվրիհիսար, հետո՝ Հայմա-նա, հետո՝ Ղըրշեհի, հետո ոտքով մեզ բերին Ղայսերի՝ կե-

սարիա: Ծանապարհին ինչե՛ր ասես չտեսանք, ինչե՛ր ասես չքաշեցինք» [Սվ. 2000: Վկ. 204, էջ 339]:

«...Մեր գյուղեն միայն ես եմ ողջ մնացել, - արցունքներով պատմել է 80-ամյա զեյթունցի Եվա Զուլյանը (ծնվ. 1903 թ.), - թուրքերը էկան բոլորին գյուղեն հանեցին: Խամշիով կմխթեին, որ քայլենք: Բոլորին ձեռքերը ետևները կապած տարին լեցուցին զորանոցի պես բարձր տեղ մը: Մեջը դամայով (դաշույն) ու բալթայով (կացին) մեկի ձեռքը, մյուսի՝ ոտքը, մյուսի՝ թևը ջարդեցին: Մեզի մերկացուցին, մորեն մե՛րկ ... չը՛ս-չըլքախ էինք, ո՛չ վարտիք, ո՛չ շապիկ: Ադ տեղը Դեր Զորն էր: ...Առավոտյան եկան, նորեն թոփեցին (հավաքել) մեզի, նորեն սկսան ջարդել և ջուրը լցնել. մաղարային (քարայր) տակեն խաբուր գետն էր գնում: Մեկին՝ գլուխը, մյուսին՝ ոտքը, մեկալին՝ ձեռքը կտրեցին, փրթեցին, ամենքին ալ գետնին իրար վրա լեցուցին: Մարդ կա՛ չէ՛ մեռած, ամմա՛ ջնջխված է, մեկը՝ կուլա՛, մյուսը՝ կծվա՛, արյունին հո՛տը՝ մեկ կողմեն, անոթությունը՝ մյուս կողմեն: Ալ ողջերը սկսան մեռածներուն միսը ուտել...» [Սվ. 2000: Վկ. 140, էջ 266]:

Խարբերդցի Արամ Քյոսեյանը ևս վկայել է (ծնվ. 1908 թ.). «1915 թ. ես յոթը տարեկան էի, երբ մեզի Խարբերդից տեղահանելու հրաման հանեցին: Հագած-կապած, զուգ-ված-զարդարված ճամփա ելանք, կարծես, հարսանիք էինք գնում: Ծամփին սկսվեց թալանը, ան ալ մեկ անգամ չէ՛ իրար ետևե՛ ով ինչ կգտնար՝ կփախցներ: Վերջում արդեն տակի շորերով էինք մնացած, անոնք ալ ծվեն-ծվեն... Մամաս իմ աչքերը կփակեր, որ գետնին պառկած մեռնողներուն չտեսնամ: Վերջում՝ մամաս և եղբայրս մնացին ճամփին. չկրցան քալել, մեռան, ի՛նչ եղան՝ չգիտեմ: Մեր ետևեն թուրքերը գալիս էին, հավաքում էին ինձի պես չոջուխներուն: Ալ չգիտեմ՝ մեզի

պիտի մեղցնե՞ն, զավա՞յ պիտի ընեն՝ չգիտեմ: Այլ վրանիս ուժ չկար, անքան քալել էինք: Վերջապես հրաման եկավ՝ կանգ առնել: Ձորի մը մեջ կանգ առանք: Սկսան մեծերուն հարցնել. «Հայ ես, թե՞ թուրք»: Ով՞ «Հայ եմ» ըսեր, անոր մեկ կողմ կանցնեին, ով՞ «թուրք եմ» ըսեր՝ մյուս կողմ: «Հայ եմ» ըսողներուն բոլորի՞ն տարին հեռուն, մորթեցին: «Թուրք եմ» ըսողները՝ ազատվեցան...: Գիշերը մեզի՝ փոքրերիս, պզտիկ բլուրի պես տեղ մը հավաքեցին: Մենք հոգնած էինք, դու մի ասա, էդ բոլորը մարդկանց գլուխներ էին: Առավոտուն, երբ լույսը բացվեց, տեսանք կտրված գլուխներ՝ իրար վրա դիզված, բլուր էր կազմված: Մենք ալ ամբողջ գիշերը ադ կտրված գլուխներուն վրա ենք քնացած, ամմա խաբար չունեինք» [Սվ. 2000: Վկ. 115, էջ 228-229]:

Այս ահասարսուռ տպավորությունների ներքո հյուսվել է տառապյալ ժողովրդի աղեկտուր եղերերգը.

*Բլբուլն ալ կկանչե. գարու՛ն է, գարու՛ն,
Մի՛ բանար յարանիս. խորու՛ն է, խորու՛ն,
Ամա՛ն, ողորմա՛ծ Տեր, աս ի՛նչ Դեր Ձոր է.
Հալեն աչվընիս կապեր է փերդե*

[Սվ. 2000: Վկ. 364, էջ 418]:

Եվ քանի որ հայերեն խոսելն արգելված էր, նրանք ստիպված իրենց վիշտն ու տառապանքը մեծ մասամբ արտահայտել են թուրքերեն:

Պատմափաստագրական արժեք ներկայացնող այդ երգերը գրի ենք առել տարբեր ժամանակներում, տարբեր վայրերի վերապրողներից, զանազան տարբերակներով: Հանգամանք, որը վկայում է, թե այդ երգերը, պատմական իրադարձությունների գեղարվեստական արտացոլումը լինելով, համա-ժողովրդական բնույթ են կրում:

Վերապրող Եղիսաբեթ Քալաշյանը (ծնվ. 1888 թ., Մուսա լեռ), որն իմ առաջին թուրքալեզու երգասացն է, պատմել է իր տխուր կյանքը. «Արաքստանի անապատում մեր եղած ժամանակ կենդանիների պես էինք՝ ո՛չ հագուստ, ո՛չ ապրուստ, ո՛չ լվացվել, ո՛չ խմել...: Բնական պետքի համար անգամ ժանդարմը գլխուդ կայնած կըլլար. ո՛չ կին կճանչնային, ո՛չ աղջիկ, ո՛չ մամուս...: Կերակու՞ր, ի՞նչ կերակուր. խո՛տ էինք հավաքում, անասունների պես խո՛տ էինք արածում: Աղ գտնվեր մե՛ աղեկ. կթաթխեինք աղին. ավելի համով կըլլար: Մեկ-մեկ հեռուն արաքներ կերևային. բեդևի (բեդվին) արաքները ոչխար-մոչխար շատ ունեին, ամմա տուն-տեղ չունեին. չաղըրներուն տակ կապրեին: Աղ քրիստոնյա արաքները մեզի կմեղքնային. քիչ մը փիլավ տային մե՛ ձեռքով-մատներով կըլպոտեինք, կուտեինք. չունքի ջիգյարը անու՛շ է...: Իմին 3 պզտիկ ձագուկներս ալ աքսորի ճամփաները մեռան: Անոր համար աս տարիքիս մեծ-մեծակ մնացած եմ...» [Սվ. 2000: Վկ. 367, էջ 418-419]:

70-ամյա այդ կինը 1956 թ. Երևանի Վարդաշեն թաղամասում առաջին անգամ մեզ է հաղորդել հայերի կողմից ստեղծված դերգոռյան թուրքալեզու երգաշարից քառյակներ, որոնք երգում էր՝ վերհիշելով իր դառն անցյալը, իր կորցրած զավակներին. արցունքներն անվերջ հոսում էին նրա աչքերից, ձայնը խզվում էր ու չէր կարողանում երգել. մի փոքր շունչ էր առնում, կրկին սկսում էր երգել ու կրկին արտասվել:

Ըստ մեր բանասացների հաղորդած տեղեկությունների՝ կոտորածն սկսել է ապրիլին՝ Ջատիկի կիրակին, Քրիստոսի խաչելության օրը, որպեսզի հայերը ևս Քրիստոսի չարչարանքներին արժանանան. «Հայերն իրենց արյունով պիտի ներկեն իրենց Ջատիկի հավկիթները», - ասում էին թուրքերը, իսկ հայերի տառապանքը երգ դարձած հնչում էր աղեկտուր.

*Zatik-kiraki¹⁴ çadır söktüler,
Bütün Ermenileri çöla döktüler,
Keçi gibi Ermenileri kesdiler,
Dininin uğruna ölen Ermeni!*

Ջատիկ-կիրակի¹⁴ վրանները քանդեցին,
Բոլոր հայերին անապատը լցրեցին,
Այծերի պես հայերին մորթեցին,
Հավատի համար մեռնող հայեր

[Սվ. 2000: Վկ. 386, էջ 421]:

Եվ սկսվում են հայերի աննկարագրելի չարչարանք-ները.

*Ağaçlardan kuş uçtu,
Yandı yürek tutuştu,
Yanma, yüreğim, yanma!
Bu ayrılık bize düşdü,
Bu muhacirlik bize düşdü,
Bu derzorlik¹⁵ bize düşdü.*

Ծառերից հավք թռավ,
Վառեց սիրտս՝ բռնեց,
Մի՛ վառվիր, սիրտ իմ, մի՛ վառվիր.
Այս բաժանումն է մեր բաժին,
Այս գաղթականությունն է մեր բաժին,
Այս դերզորականությունն¹⁵ է մեր բաժին

[Սվ. 2000: Վկ. 367, էջ 419]:

Քանի որ Դեյր-Էլ-Ջորի անապատը դարձել էր Հայոց ցեղասպանության կենդանի գերեզմանոցը, որտեղից ազատվելու փրկություն չկար.

*Der Zora gidersem, gelemem belki,
Ne etmek, ne su ölürüm belki.*

Դեյր Ջոր թե՛ գնամ՝ գուցե չգամ ետ,
Առանց հաց, առանց ջուր՝ գուցե և մեռնեմ
[Սվ. 2000: Վկ. 368, էջ 419]:

Ջանազվածային լրատվության միջոցները լուում էին:
Այնինչ քաղաքակիրթ մարդկության աչքերի առաջ նահատակվում ու բնաջնջվում էր աշխատասեր ու ստեղծագործ, հնագույն մի ժողովուրդ, որի միակ մեղքը հայ լինելն էր.

*Der Zora varmadan Ermeni muhaciri oturmuş
Hongur-hongur ağlıyor...*

Դեյր Ջոր չհասած հայ գաղթականը նստած
Հոնգուր-հոնգուր կուլա...

[Սվ. 2000: Վկ. 368, էջ 419]:

Եվ հայության վիճակն ահավոր էր.

¹⁴ Թուրքալեզու երգի մեջ օգտագործված են հայերեն «Ջատիկ-կիրակի» բառերը:

¹⁵ Դեյր-Էլ-Ջորի աքսորավայր:

*Der Zor çölünde üç ağaç incir,
Elimde kelepçe, boynumda zincir,
Zincir kamildadıkca, yureğim incir:
Dininin uğruna ölen Ermeni!*

Դեյր Ջորի անապատում երեք թզենի,
Ձեռքիս՝ ձեռկապ, շղթան՝ վզիս,
Շղթան շարժվելիս, սիրտս է մղկտում,
Հավատի համար մեռնող հայեր

[Սվ. 2000: Վկ. 391, էջ 421]:

Բռնագաղթված հայերը մահվան այդ ճամփան անցնում էին բոկոտն ու արյունվա, պապակ շուրթերով՝ կիզիչ արևի տակ.

*Der Zor çölünde bitmedi yeşil,
Kurşuna düzdüler elli bin kişi:
Merakdan döküldü milletin dişi,
Dininin uğruna ölen Ermeni!*

Դեյր Ջորի անապատում կանաչ չի բուսնի,
Հիսուն հազար մարդ գնդակահարեցին,
Ժողովրդի ատամները վշտից թափվեցին,
Հավատի համար մեռնող հայեր

[Սվ. 2000: Վկ. 388, էջ 421]:

Եվ գնդակահարվածների արյունով էր ներկվել ամեն ինչ.

*Der Zor çöllerini бүрүндү думан,
Оу аnam, оу аnam, halimez yaman!
İnsan ve yeşil boyandı kana,
Dininin uğruna ölen Ermeni!*

Մշուշն է պատել Դեյր Ջոր անապատին,
Վա՛յ մայրիկ, վա՛յ մայրիկ, մեր վիճակն է ողբալի.
Մարդիկ, կանաչներ արյունով ներկվեցին,
Հավատի համար մեռնող հայեր

[Սվ. 2000: Վկ. 370, էջ 419]:

Անխնայորեն բնաջնջվում էր հայ ժողովուրդը.

*Der Zor çölünde çürüdüm kaldım,
Karğalara tahir oldum, kaldım,
Оу аnam, оу аnam, halımız yaman!
Der Zor çölünde kaldığım zaman.*

Դեյր Ջորի անապատում փտեցի, մնացի,
Կերակուր դարձա ես ագռավներին,
Վա՛յ մայրիկ, վա՛յ մայրիկ, ողբալի է մեր վիճակը,
Դեյր Ջորի անապատում մեր եղած ժամանակը

[Սվ. 2000: Վկ. 409, էջ 423]:

Այնինչ ողջ մնացողների վիճակն ավելի անմխիթար էր.

*Der Zor çölünde yaralı çokdır,
Gelme, doktor, gelme, çaresi yoktur,
Allahdan başka kimsemiz yoktur,
Dininin uğruna ölen Ermeni!*

Դեյր Ջորի անապատում վիրավոր շատ կա,
Մի՛ գա բժիշկ, մի՛ գա. մեկ է հույս չկա,
Աստծուց բացի էլ ո՛չ ոք չկա,
Հավատի համար մեռնող հայեր

[Սվ. 2000: Վկ. 410, էջ 424]:

Իսկ հայ ժողովուրդն իր տառապանքի մեջ մենակ էր ու

անօգնական: Եվ նրանց տխրաթախիծ երգը դարձել է աղոթք առ Աստված.

*Çika-çika çıktım yokuş başına,
Neler geldi Ermeninin başına!
Hızır¹⁶ Allah, hızır, ¹⁶ yetiş!
Ermeni milletini kurtar, geçir!*

Ելա, բարձրացա գագաթը սարի,
Ինչե՛ր ասես չեկա՞վ գլուխը հայի,
Հզո՛ր¹⁶ Աստված, հզո՛ր¹⁶, օգնի՛ր,
Հայ ժողովրդին փրկի՛ր, ազատի՛ր

[Սվ. 2000: Վկ. 432, էջ 426]:

Եվ ժողովրդի ողբերգական վիճակին հակադրված է բնության ճանաչափայլ գեղեցկությունը, որին անտարբեր «օսմանցի ասկյարը իր զենքն էր յուղում» հայերին սպանելու համար.

*Sabahtan kalkdim, güneş parlıyor,
Osmanlı askeri silâh yağlıyor,
Ermeniyeye baktım - yaman ağlıyor,
Dininin uğruna ölen Ermeni!*

Առավոտյան վեր կացա՝ արևն էր փայլում,
Օսմանցի ասկյարն իր զենքն էր յուղում,
Հայերին նայեցի՝ սաստի՛ղ էին լաց լինում,
Հավատի համար մեռնող հայեր

[Սվ. 2000: Վկ. 394, էջ 422]:

Իսկ անապատի օղը հագեցած էր դիակների նեխահոտով.

*Der Zorın içinde naneler biter,
Ölmüşlerin kokusu dünyaya yeter,
Bu sürgünlük bize ölümden beter,
Dininin uğruna ölen Ermeni!*

Դեր Զորի անապատում անանուխն է բուսել,
Դիակների նեխահոտն աշխարհն է բռնել,
Այս աքսորը մեզ մահից վատթար է,
Հավատի համար մեռնող հայեր

[Սվ. 2000: Վկ. 381, էջ 420]:

Ապականված էր ոչ միայն անապատի օղը, այլև թունավորված էր ջուրը.

*Der Zorın içinde zincirli kuyu,
Ermeniler içtiler zehirli suyu...*

Դեր Զորի մեջ շղթայով ջրհոր,
Հայերը խմեցին ջուրը թունավոր...

[Սվ. 2000: Վկ. 421, էջ 425]:

Հասարակական չարիքին ավելացել էր նաև տարերային աղետը՝ տիֆի համաճարակը.

*Der Zor çölünde bir sıra mişmiş,
Ermeni muhaciri tifoya düşmüş,
Oy anam, oy aman, halımız yaman!
Der Zor çölünde kaldığım zaman.*

Դեր Զորի անապատում մի շարք ծիրանի,
Հայ գաղթականները վարակվել են տիֆ,
Վա՛յ մայրիկ, վա՛յ մայրիկ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը
[Սվ. 2000: Վկ. 379, էջ 420]:

Իսկ մի այլ տարբերակում.

*Der Zor çölünde bir sıra mişmiş,
Ermeni muhaciri açlıktan ölmüş,
Oy anam, oy aman, halımız yaman!
Der Zor çölünde kaldığım zaman.*

Դեր Զորի անապատում մի շարք ծիրանի,
Հայ գաղթականները մեռան քաղցից,
Վա՛յ մայրիկ, վա՛յ մայրիկ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը
[Սվ. 2000: Վկ. 380, էջ 420]:

Եվ համատարած այդ չարիքից փրկություն չկար, քանի որ ողջ մնացողների վիճակն ավելի էր անմխիթար: Այնուհետև միմյանց են հաջորդում սահմուկեցուցիչ տեսարանները.

*Der Zor çölünde uzanmış, yatmış,
Kellesi yokdur, ki yüzüne bakayım,
Ermeniler bu güne olaşmış,
Dininin uğruna ölen Ermeni!*

Դեր Զորի անապատում փռվել, պառկել է,
Գլուխը չկա, որ դեմքը տեսնեմ,
Այս օրվան հասած խեղճ հայեր,
Հավատի համար մեռնող հայեր

[Սվ. 2000: Վկ. 431, էջ 426]:

Եվ լսվում էին նրանց հոգեվարքի խուլ հառաչանքները.

*Sivazdan çıkdim başım selâmet,
Der Zora varınca koptu kıyamet,
Bu kadar muhacir kime emanet?
Dininin uğruna ölen Ermeni!*

Սվազից դուրս եկանք հանգիստ գլխով,
Դեր Զորում իրարանցում էր ահավոր,
Այսքան գաղթական վստահված է ու՞մ,
Հավատի համար մեռնող հայեր

[Սվ. 2000: Վկ. 377, էջ 420]:

«Հավատի համար մեռնող հայերի» անհաշիվ դիակները սփռված էին ամենուրեք, քանի որ օսմանցի զինվորները դարձել էին «մսագործ».

*Der Zor dedikleri büyük kasaba,
Kesilen Ermeni gelmez hesapa,
Osmanlı efratı dönmüş kasapa,
Dininin uğruna ölen Ermeni!*

Դեր Զոր կոչվածն էր մի մեծ տեղավայր,
Մորթված հայերին էլ հաշիվ չկար,
Օսմանցի պետերը մսագործ դարձան,
Հավատի համար մեռնող հայեր

[Սվ. 2000: Վկ. 373, էջ 419]:

¹⁶ Թուրքալեզու երգի մեջ օգտագործված է հայերեն «հզոր» բառը:

Հայ ժողովուրդն անկարագրելի տառապանքով էր անցնում իր մահվան ճամփան.

*Gide-gide, gitmez oldu dizlerim,
Ağla-ağla, görmez oldu gözlerim,
Oy anam, oy anam, halımız yaman!
Der Zor çölünde kaldığım zaman.*

Գնալով-գնալով՝ հոգնեցին ծնկներս,
Լալով-ողբալով կտրացան աչքերս,
Վա՛յ մայրիկ, վա՛յ մայրիկ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը
[Սվ. 2000: Վկ. 382, էջ 420]:

Կատարվել է նաև ավելի սոսկալի՞ն. աքսորականները քայլելու անկարող իրենց մեծահասակ հարազատներին ստիպված թողել են ճամփին և, թուրք ոստիկանների մտրակների տարափի ներքո, արցունքն աչքերին շարունակել իրենց մահվան ճամփան: Այդ մասին են պատմել ու զանազան տարբերակներով երգել արաբների կողմից կապույտ թանաքով դաջված դեմքերով զեյթունցի Գայանե Ատուրյանը (ծնվ. 1909 թ.), ադաբազարցի Սիրենա Ալաճաճյանը (ծնվ. 1910 թ.) և շատ ուրիշներ.

*Der Zor çölünde yoruldum, kaldım,
Anamı, babamı yolda bıraktım,
Oy anam, oy anam, halımız yaman!
Der Zor çölünde kaldığım zaman.*

Դեր Զորի անապատում հոգնեցի, մնացի,
Մորս ու հորս ճամփին թողեցի,
Վա՛յ մայրիկ, վա՛յ մայրիկ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը
[Սվ. 2000: Վկ. 405, էջ 423]:

Այստեղ տեղին է մեջ բերել երգնկացի վերապրող Գառնիկ Ստեփանյանի (ծնվ. 1909 թ.) պատմած հուշից մի հատված. «...Երգնկայից դուրս եկանք. ուժեղ սառնամանիք էր: Վարդանուշ տատիկս դժվարանում էր քայլել: Մեկ էլ կանգ առավ, ասաց. «Ինձ խփե՛ք, ես չե՛մ կարող քայլել»: Նա նստեց գետնին: Ժանդարմները քարշ տվին նրան: Նա մնաց ճանապարհին: Մեզ քչեցին: Մենք մի կողմից գնում էինք ու ետ էինք նայում: Զյունը գալիս էր, կուտակվում նրա վրա: Վերջապես իմ խեղճ տատիկը դարձավ ձյունե արձան: ...Հասանք Մալաթիա: Արդեն գարուն էր: Բոլոր հայերին կոտորել էին: Ամեն տեղ

բլուրներ էին՝ տակը հիսուն-հարյուր հոգի թաղված, նույնիսկ կիսամեռ՝ քանի որ վրայի հողը շարժվում էր...» [Սվ. 2000: Վկ. 95, էջ 200]:

Սեբաստիայից ականատես-վկա Անդրանիկ Գավուքչյանը (ծնվ. 1905 թ.) ևս անդրադարձել է տեղահանության նույնաման տառապանքներին. «...Այսպես սկսվեց թշվառությունը: Ժանդարմները մեզ քշում էին մտրակներով, քանի որ մենք պետք է որոշակի տարածություն անցնեինք: Ով այլևս չէր կարողանում քայլել, մնում էր ճանապարհի եզրին ընկած: Երբ արդեն մտրակը չէր օգնում, մարդկանց գնդակահարում էին կամ սվինահար անում, որ նրանք հետ չփախչեն: ...Այդպես մոտ 1,5 միլիոն հայեր սպանվեցին: Միայն պատերազմից հետո շատ քչերին՝ ողջ մնացածներին, սիրիական անապատներից հավաքեցին...» [Սվ. 2000: Վկ. 82, էջ 178]:

Աքսորի ճամփաներին թուրք ոստիկանների գործադրած անասելի դաժանությունների մասին է պատմել նաև խարբերդցի Թրվանդա Մուրադյանը (ծնվ. 1905 թ.) «...Մեզ հանեցին մեր գյուղեն, բոլոր ջահելներին հավաքեցին, խովուշի (անձավ) պես տեղ մը լցրին, կտուրը բացին, մեջը նավթ լցրին, վառեցին: Հետո հավաքեցին բոլոր կանանց, քարերով ողջ-ողջ զլուխները ջնջեցին: Մամայիս ու մեծ մամայիս ալ քարերով սպանեցին: Էրեխեքին, մայր-ոչխարներուն քովեն գառնուկներու պես առանձնացուցին: Ինձի երեք տարեկան պզտիկ քույր մը ունեի, Էրեխեքի հետ անոր ալ առին Բալուի Մուրադ (Եփրատ) գետի կամուրջին քովը, վզերը կտրեցին, կոտորեցին, գետը լեցուցին...: 2 ժանդարմա 500 հոգի աքսոր հանեցին...» [Սվ. 2000: Վկ. 112, էջ 226]:

Բուրսայի Մեծ Նոր գյուղից Աշոտ Օհանյանը (ծնվ.

1905 թ.) հուլիսին իր տխուր անցյալը. «1914 թ. մեր տղամարդկանց թուրքական կառավարությունը հավաքեց, տարավ թուրքական բանակ, որից հետո ընտանիքներուն ըսին. «Կառքեր վարձեցեք, մոտիկ տեղ պիտի գնանք»: Ով փող ուներ ֆուրդուն վարձեց, ով չուներ՝ ոտքով: Մենք ալ չոչուխ էինք, մորերնուս փեշեն բռնած գացինք ոտքով: Երկար գացինք: Առաջին կանգառնիս եղավ Կոնիան: Էնտեղ փոխանակ մեզի քաղաք մտցնեն, սարերում ոստիկանների հսկողության տակ պահեցին՝ սոված, ծարավ: Մյուս առավոտ մեզի ճամփա հանեցին դեպի Բոզգուր: Անտեղեն ալ անցանք: Օրերո՛ւյ, շաբաթներո՛ւյ ոտքով քայլում էինք: Ոտքերնիս արյունոտ քայլում էինք: Ոստիկանները մտրակներով խփում էին: Ծատերը չդիմացան, ճանապարհին մեռան: Դիակները մնում էին գետնին: Գիշերը գայլերը ուտում էին: Մեզ քայլեցնում էին ոտքով: Արդեն քչացել էինք, քանի որ շատերը մեռել էին: Մեկ էլ իդե անունով մի գյուղի մոտ հասանք: Էնտեղ մեր վրա հարձակվեցին, սկսվեց թալանը. «Փարանը՞ յո՞ք՝ չքարը՞ն՞դ» («Փող չունե՞ք՝ հանե՞ք») ասելով...» [Սվ. 2000: Վկ. 221, էջ 361]:

Տեղահանության և աքսորի ճամփաներին իրենց աներևակայելի տառապանքներն ու անցած վայրերն է վերհիշել նաև 96-ամյա Գեղեցիկ Եսայանը (ծնվ. 1901 թ., Նիկոմեդիա). «1915 թվի Մեծ եղեռնի ժամանակ ես տասնչորս տարեկան էի: Աքսորն սկսվեց: Մեր ընտանիքը 12 ջանով գացինք, 2 ջան ողջ մնացինք: Ծանապարհին մեզ խամշիներով կծեծեին, կտանջեին, ջուր չէին տար: Մենք քալելով հասանք Դելեթ, Էսքիշեհիր, Կոնիա, Էրեյլի, Բոզանթի, Քանլը Գեշիթ, Բաբ, Մեսքենե, Աբու Արար, Դիփսի, Տիգրանակերտ, Զարաբլուս, Ծամ, Բաղդադ և վերջապես՝ Դեր Զոր...» [Սվ. 2000: Վկ. 231, էջ 370]:

Իր անցյալը մանրամասնորեն վերհիշել է նաև 80-ամյա

ականատես-վերապրող սեբաստացի Սուրեն Սարգսյանը (ծնվ. 1902 թ.). «...Երկու օր հետո հասանք Ֆրոնջըլար գյուղը, որը մի փոքրիկ, աննշան գյուղ էր, բայց հայ ժողովրդի պատմության մեջ դարձավ նշանավոր: Ըստ պետական ծրագրի, ժողովուրդը ոտքով պիտի բարձրանար 3.900 մետր բարձրությամբ Տավրոսյան լեռները: Հարյուր հազարավոր քարավաններ գալիս էին այստեղ, գտնում էին իրենց խաչելությունը, գնում՝ դեպի մահ: Կանայք, մանուկներ, նորածին ծծկեր երեխաներ լքվում էին անտեր-անտիրական: Այստեղ մնաց Քնարիկ քույրս՝ իր ծծկեր երեխայի հետ: Նա հիվանդ էր, չէր կարողանում քայլել: Ֆրոնջըլա՛ր, Ֆրոնջըլա՛ր. լքված երեխաներ, ծեր-անտեր կանայք, հիվանդներ՝ այս ու այն կողմ պառկած, հոգեվարքի մեջ, լիկած դիակներ, փալասների տակ կամ առունների մեջ...»:

Այնուհետև նույն ականատես-վկա Սուրեն Սարգսյանը նկարագրել է փոքր տղաների, աղջիկների և մյուսների ահավոր վիճակը. «...Հաջորդ օրը եկան քրդերը, հետները՝ հայտնի Զեյնալ բեկն ու եղբայրները՝ սրիկա դահիճները: Նրանք քարավանի միջից ինչքան փոքրիկ տղա գտան, հավաքեցին, թևերը կապեցին ու տարան հեռու սարի գագաթը, ուր վառվում էին թե՛ խարույկները: Այնտեղ նրանց գլուխները կացիներով կտրեցին ու շարտեցին ձորը. այդպես էին արել նախորդ քարավանների երեխաներին ևս: Դրա համար էլ այդ ձորը կոչվեց Քանլը Դերե (Արյան Ձոր): ...Մեր քարավանը, որը կեսից էլ պակաս էր մնացել, իջևանեց Սամոսատից հարավ՝ Եփրատ գետի ափին: Ամեն կողմ դիակներ՝ դիակներ, մեռած կանայք, երեխաներ ամեն կողմ պառկած ցաք ու ցրիվ, արտերի մեջ, ավազների վրա, ամեն կողմ՝ կիսամեռ հիվանդների տնքոցներ, աղերսագին օգնություն խնդրող նայվածքներ, նրանց կողքին՝

հոտած, փտած, ուռած, ցնխած գարշահոտ դիակներ, մեծ մասամբ կանանց: Դանթեի Դժոխքը Եփրատի ափին էր: ...Հետո բերին սպիտակ շորերով աղջիկներին. գիշերային խավարի մեջ նրանց բոլորին ցցերի վրա նստեցրին: Մեր ականջները խլանում էին նրանց մայրերի, հարազատների ճիչերից, լացերից և գոռում-գոչումներից: ...Մեզ բերին Ուրֆա, այնտեղից բռնեցին դեպի անապատը՝ մի անմարդաբնակ տեղ, ուր միայն մի քանի ծառեր կային: Այդ օրը գիշերը անձրև եկավ և ցուրտ քամի: Գիշերը հարյուրավոր մարդիկ մահացել էին: Քրդերին բերին, մի ընդհանուր խոշոր փոս փորել տվին: Քրդերը թոկերով ընկան ժողովրդի մեջ, տրորելով հիվանդներին, մեռած ողջ՝ ով պառկած էր, վիզը թոկ էին գցում, քաշեքաշ տանում, փոսն էին գցում ու վերադառնում: Նույնիսկ ողջերի վիզը թոկ էին գցում, տանում, ցնտում էին փոսը. հարազատների ճիչերը, աղաղակները չէին լսում: Այդտեղից մեզ նորից բռնեցին դեպի հարավ՝ մի այլ անմարդաբնակ տեղ: Կանայք՝ տիֆով հիվանդ, ջուր էին աղերսում...» [Սվ. 2000: Վկ. 80, էջ 167-170]:

Դերգոռյան երգերի մեջ առանձին շարք են կազմում կողոպտված, որդեկորույս մայրերի և կույս աղջիկների ողբերգական պատկերները.

- *Şu dağın ardında Ermeni kazı var,
Gidin, bakın çantasında nesi var?*
- *Güzel gözleri var,
Sırma saçları var.*

- Այս լեռան թիկունքին հայ աղջիկ կա,
Գնացե՛ք, տեսե՛ք պայուսակում ի՞նչ կա,
- Գեղեցիկ աչքեր կան,
Եվ մետաքս մազեր

[Սվ. 2000: Վկ. 489, էջ 437]:

Իսկ թուրք ոստիկաններն ու հրամանատարները հայ աղջիկների ու կանանց նկատմամբ վարվում էին անասելի դաժանությամբ.

*Sabahtan kalkdım kapı kapalı,
Binbaşı geliyor eli sopalı,
Uğruna bırakmış kör ve topalı,
Dininin uğruna ölen Ermeni!*

Առավոտյան վեր կացա՝ դուռը փակ գտա,
Հազարապետն եկավ՝ ձեռքին կար մահակ,
Կույր ու կաղերին օգնել էր իր առաջ,
Հավատի համար մեռնող հայեր

[Սվ. 2000: Վկ. 392, էջ 422]:

Տիգրանակերտի Կարապետ Մկրտչյանը (ծնվ. 1910 թ.) հուզումով ու դողդոջուն ձայնով է մեզ պատմել իր մանկական հիշողության մեջ տպավորված պատկերները՝ միաժամանակ մրմնջալով հետևյալ տողերը.

*Der Zora geldi bir Şekir paşa,
Atını bağladı delikli taşa,
Ermeni sığmadı dağ ile taş:
Dininin uğruna ölen Ermeni!*

Դեր Զոր եկավ մի Շեքիր փաշա,
Նժույզը կապեց ծակ քարի վրա,
Չորերում հայերին տեղ չմնաց.
Հավատի համար մեռնող հայեր

[Սվ. 2000: Վկ. 428, էջ 426]:

Այնուհետև նույն վերապրող Կարապետ Մկրտչյանը շարունակել է. «...Վերջապես էկանք, հասանք Դեր Զորի անապատի վերևի մասը՝ Մերդին քաղաքը, որտեղ գնացքը կուգար, Հալեպ կերթար: Անտեղ մեզ իջեցուցին. կանաչ դաշտ էր: Ներքևը ձոր կար: Մեզ՝ փոքրերիս ջոկեցին, իսկ մեծերին՝ տարին ձորի կողմը հերթ կայնեցրին. 300-400 հոգիի չափ մեծեր էին, այդքան ալ երեխաներ էին: Ուրեմն մեզ՝ էրեխեքիս կանաչ դաշտի վրա նստեցրին. մենք չգիտենք՝ ինչ պիտի ըլլա: ...Մայրս իր հերթը խախտելով գալիս էր մեզի համբուրում, համբուրում, գնում էր: Մենք՝ ես, մեծ եղբայրս և փոքր եղբայրս, որը մեկ տարեկան էր, հեռվից տեսնում էինք մի շարան կանայք հերթի մեջ շարժվում են. մեր մայրը անոնց մեջն էր: Տունեն երբ էլանք, մեր մայրը ազգային տարազներով էր՝ թափիշ, ոսկեկար հագուստներով, գլուխը զարդարված էր ոսկեդրամներով, վիզը ոսկե շղթա կար, հագուստներուն մեջը երկու կողմը 25-25 ոսկի էր կարած՝ գաղտնի: ...Վերջին ան-

գամ, երբ մեր մայրը էկավ մեզի խենթի պես համբուրեց, կհիշեմ, արդեն միայն տակի ճերմակ ներքնագգեստով էր. ո՛չ զարդ կար, ո՛չ ոսկի կար, ո՛չ ալ թավիշե հագուստները: ...Մենք՝ երեխեքս, բանից անտեղյակ ենք: Էնտեղ բաներ մը կատարվում են, բայց չգիտենք ի՞նչ է կատարվում: Դու մի ըսեր բոլորին հերթով հագուստները հանում էին, մի կողմի վրա շարում, բոլորին մերկացնում էին, կացիճով գլուխը կտրում էին, նետում էին ձորը...» [Սվ. 2000: Վկ. 128, էջ 242-243]:

Պատմական այս իրողությունների վրա է հյուսվել նաև ժողովրդական երգը.

<i>Sabahtan kalkdım, çantama baktım,</i>	Սափտոյան վեր կացա, պայտաակս նայեցի.
<i>Ağlaya-sızlaya boynuma taktım,</i>	Լաց ու կսկիծով վզիցս կախեցի,
<i>Malımı-mülkümü devlete sattım,</i>	Ունեցվածքս պետությանը ծախեցի,
<i>Pahasını sorsan: yarım ekmeğe.</i>	Գինը թե հարցնես՝ կես կտոր հացի

[Սվ. 2000: Վկ. 398, էջ 422]:

Ահա թե ինչու ապրելու տարրական պայմաններից զրկված հայ մայրերն իրենց ունեցվածքը թուրքական կառավարությանն ու զինված ավազակների՝ թողնելուց հետո, զգալով իրենց մոտավորապես վախճանը, իրենց սիրասուն զավակներին պահ են տվել բարի արարքներին, որպեսզի եթե իրենք նահատակվեն, գոնե իրենց երեխաները ողջ մնան:

Այդ է հաստատել նաև նիկոմեդիացի Բարուհի Չորեքյանը (ծնվ. 1900 թ.). «...Երբ մեզի աքսոր քշեցին, մենք տասներկու ամիս անապատին մեջը մնացինք: Չորս քույրով փախանք անտառները: Զրի մեջ լողալով Խաբուր¹⁷ գետը անցանք, արաբ բեղվիճներու քովը հասանք: Անոնք մերին ոչլուտված մազերը խուզեցին, երեսնիս մելանով ծեծեցին, որ հայ

ըլլալնիս չիմացվի: Իրենց ոչխարները մեզի տվին, որ արածացնենք» [Սվ. 2000: Վկ. 229, էջ 369]:

90-ամյա Գրիգոր Գյոզալյանը (ծնվ. 1903 թ.) անհուն երախտագիտությամբ է հիշում Հոմա-Համայի ճամփին, Մուհարրի գյուղի արաբ քրիստոնյա բարի պառավին, որն ամեն երեկո իր եփած փլավն ու գոտու մեջ խցկած հացի կտորները պատերի տակ ուծասպառ ծվարած հայ որբուկներին գաղտագողի բաժանելուց հետո անհետանում էր մթության մեջ [Սվ. 2000: Վկ. 163, էջ 294]:

Նման փաստը ևս բանաստեղծական տեսք է ստացել հետևյալ երգի մեջ, որտեղ որդեկորույս մայրն շտապում է Խաբուր գետն անցնել, որպեսզի գնա ու գտնի «արաբի գյուղում» ապաստանած իր զավկին.

<i>Yol ver, Habur, yol ver, geçelim çölü,</i>	Ծամփա՛ տոր, Խաբուր՛, անապատն անցնեմ,
<i>Evlâdım çis – çıplak arabın köyünde,</i>	Զավակս մերկ-տկոր արաբի գյուղումն է,
<i>Oy anam, oy anam, halımız yaman!</i>	Վա՛յ մայրիկ, վա՛յ մայրիկ, ողբալի է մեր վիճակը,
<i>Der Zor çölünde kaldığım zaman.</i>	Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը

[Սվ. 2000: Վկ. 414, էջ 424]:

Բալուցի Կարապետ Ֆարաշյանը (ծնվ. 1906 թ.) նույնպես վկայել է իր տեսածները. «...Քիչ վերջ Մեհմետ հոջա անունով թուրք մը եկավ, ինձի ըսին, որ իրեն հետ երթամ: Կը հիշեմ ձեռքես բռնած ինձի կառավարության շենքը տարավ: Հոն զիս իբր հոգեզավակ «Հյուսեհին Իսլամ» անունով արձանագրել տվավ ու տարավ իր բնակած գյուղը: Արածանի գետի վրա Մեծն Տիգրանի օրով շինված կամուրջին վրայեն անցած ատենս տեսա, որ գետը արյունոտ էր: Հոն կտանեին հայերուն և վիզը կտրելէ վերջ, կամուրջեն վար՝ գետը կնետեին, այսպիսով անունը «Քանլը գեչիտ» (Արյունոտ կիրճ) եղած էր: Մեհմետ հոջան ինձի տարավ քաղաքեն դուրս՝ Գոհանամ կոչված վայրի իր տունը: Զիս իր կնոջ ներկայացուց, ըսավ՝ «Քեզի

¹⁷ Դեյր-էլ-Զորի մոտով հոսող գետ:

տղա մը բերի՝ անունը Հյուսեհն է»...» [Սվ. 2000: Վկ. 121, էջ 234]:

Մարիամ Բաղդիշյանը (ծնվ. 1909 թ.) ևս պատմել է, թե ինչպես ինքը հազիվ 5-6 տարեկան էր, երբ աքսորի ճամփաներին իր փոքր քրոջ հետ անապատի ավազների վրա պառկած իրենց մայրիկի խոսույների հետ էին խաղում՝ չիմանալով, որ նա արդեն մեռած է: Հետո ինչ որ մի արաբ կին նրան տանում է իր տունը, որտեղ փոքրիկ Մարիամը 4 տարի փարչով ջուր է կրում ջրհորից: Մի անգամ, երբ նրա դեմքն ուզում էին կապույտ թանաքով դաջել, նա գաղտնի փախչում է և մի քահանայի շնորհիվ ապաստան գտնում հայկական որբանոցում [Սվ. 2000: Վկ. 168, էջ 305]:

Türkler başladı evlât kaçırmaya, Թուրքերն սկսեցին զավակ փախցնել,
Analar kıymadı yüzü öpmeye, Մայրերը չհասցրին երեսը համբուրել,
Baktım ki gizlice ağlıyor yaman, Տեսա ծածուկ սաստի՛կ էին լաց լինում,
Dininin uğruna ölen Ermeni! Հավատի համար մեռնող հայեր

[Սվ. 2000: Վկ. 402, էջ 423]:

Այս ողբերգական իրադարձություններին ականատես-վկա յոզղատցի Արշակունի Պետրոսյանը (ծնվ. 1903 թ.) սրտաճմլիկ մի տեսարանի մասին է մեզ պատմել. «...Հետո սկսան աղջիկներին փախցնել, կնիկներին տանել մորթել, չոջուխներին գլուխները կտրել, գնդակի պես ասդին-անդին անտել: ...Ֆիլորի մորն ալ տարին, մորթեցին: Մեկն ալ երեխան գիրկը, մորը վիզը կտրել էին, չոջուխը մեռած մորը կուրծքը ուտելով ապրել էր, ամմա անոր գլուխն ալ ֆուտբոլի գնդակ ըրին» [Սվ. 2000: Վկ. 212, էջ 347]:

Նույնանման դաժանությունների մասին է վկայել նաև իգդիրեցի Էվելինա Կանայանը (ծնվ. 1909 թ.). «...Թուրքը գալիս էր: Հայ կանանց փորերը ճեղքում էին դանակով, երե-

խային հանում դուրս, գլուխը ցցի վրա բարձրացնում» [Սվ. 2000: Վկ. 54, էջ 136-137]:

Նույն փաստը հաստատել է նաև Էրզրումցի Լորիս Պապիկյանը (ծնվ. 1903 թ.). «...Ժամապարհին տեսա, թե ինչպես թուրքերը ծաղրում էին նրանց՝ հայ աղջիկներին ու կանանց: Ես հանդիպեցի այնպիսի մի զարհուրելի գազանային տեսարանի, որ աշխարհի պատմության մեջ, նախնադարյան շրջանից սկսած մինչև մեր օրերը, ոչ մի բարբարոս ժողովուրդ նման վայրագություններ չէր արել կանանց հանդեպ: Չորս աստիճանավորներ՝ մարդկային կերպարանքները կորցրած վայրի բռնիների մոլուցքին հասած ստոր վիժվածքներ, նստել էին սեղանի շուրջը, իրենց կողքին կանգնեցրել էին մի խումբ հայ հղի կանանց, որոնք հավանաբար մի քանի օրից պետք է ծննդաբերեին, գրագ էին գալիս նրանց արգանդներում եղած զավակների արու կամ էգ լինելու մասին և կարգադրում ստորադրյալներին՝ դաշույնով բացել հղի կնոջ արգանդը և դուրս բերել այն տեղից երեխան: Ինչ սոսկալի վայրագություններ ասես չէին անում մարդանման գազանները: Եթե ես անձնապես տեսած չլիների հիշյալ տեսարանը և այսօր ինձ պատմեին կամ գրքերում կարդայի, ես երբեք չէի հավատա, որ իրոք նման գազանություններ կարող են տեղի ունենալ...» [Սվ. 2000: Վկ. 90, էջ 193-194]:

Սեբաստացի Համբարձում Սահակյանը (ծնվ. 1898 թ.) նույնպես վկայել է իր աչքերով տեսածը. «...Կհիշեմ, երկրորդ մայրս հղի էր, նրան սպանեցին, սուրը կոխին փորին մեջը, պզտիկը դուրս հանեցին, սկսան խնդալ, որ տղա է ու շարտեցին գետնին: Ես այդ տեսարանը երբեք չեմ կրնար մոռնալ...» [Սվ. 2000: Վկ. 79, էջ 162]:

Նույնանման փաստերի մասին է վկայել նաև էսքիշեն-հիրցի ականատես-վկա Սամվել Փաթրյանը (ծնվ. 1900 թ.). «...Կհիշեմ, աղջիկները և կանայք խաչ կհանեին, գետին մեջ կնետվեին, որ ժանդարմներուն ձեռքը չանցնին: Աղ ժամանակ ամուսն կար, բա՛ն կար:

Խարբերդի մոտերն էինք: Կհիշեմ, օր մը երկու զաբիթ-ներ իրար հետ գրագի բռնվեցան մի հայ հղի կնոջ վրա.

- *Şu karının karnında nesi var?* (- Այս կնոջ փորում ի՞նչ կա):

- *Gâvur dir: kız olur.* (- Գյավուր է՝ աղջիկ կլինի):

- *Yok, oğlan olur.* (- Ո՛չ, տղա կլինի):

Գրագ եկան, իմ աչքի առաջ դաշույնով կնոջ փորը ողջ-ողջ ճեղքեցին: Ես աղ իմ աչքովս տեսած եմ: ...Երբ կեսա-րիա հասանք, մեզի բերին, լեցուցին մեծ սրահի մը մեջ: Կեսա-րիայի վալին եկավ հարցուց. «Հայ քույրե՛ր, արդյոք ճանա-պարհին ձեզ նեղություն տվող եղա՞վ»: Մեր հայ կանայք ալ ուժ առին, սկսան պատմել, թե ինչպես թուրք հսկիչ ժանդարմ-ները գիշերները մեզի կծեծեին, մեր հայ աղջիկներուն ու հարս-ներուն կտանեին..., իսկ առավոտյան՝ հալից ընկած, ետ կբե-րեին...: Վալին ջղայնացավ, ըսավ. «Ամո՛թ, և ասոնք մեր ագ-գին զավակներն են»...» [Սվ. 2000: Վկ. 204, էջ 339]:

Եվ իրոք, թուրք ոստիկանները դարձել էին մսագործ.

Aman! Mahmud paşa, sen gel imana: Վա՛յ, խղճի արի՛ դու Մահմուդ փաշա.
Jandarmalar dönmüş kasapa, Ոստիկանները մսագործ դարձան,
Oy anam, oy anam, halımız yaman! Վա՛յ, մայրիկ, վա՛յ մայրիկ, ողբալի է մեր վիճակը,
Der Zor çölünde kaldığım zaman. Դեռ Զորի անապատում մեր եղած ժամանակը

[Սվ. 2000: Վկ. 427, էջ 425]:

Պատահում էր նաև, որ մայրերի մոտից փախցնում էին երեխաներին, հարսերին ու աղջիկներին բռնաբարում էին, հե-տո, կապկպելով, նետում էին ձորը կամ չորացած ջրհորների

մեջ և կրակի տալով՝ բոլորին այրում.

Ermenileri mağaraya doldurdular, Հայերին քարանձավի մեջ լցրեցին,
Kireç dököp, ateş verip yaktılar, Այրած կիրը կրակի տալով՝ վառեցին,
Oy anam, oy anam, halımız yaman, Վա՛յ, մայրիկ, վա՛յ, մայրիկ, ողբալի է մեր վիճակը,
Der Zor çölünde kaldığım zaman. Դեռ Զորի անապատում մեր եղած ժամանակը

[Սվ. 2000: Վկ. 390, էջ 421]:

Իսկ ողջ մնացողներն ողբում էին իրենց կորուստները.

Hayatın çeşmesi buz gibi akar, Բակի ծորակը սառույցի պես է հոսում,
Türk bacıları çadırdan bakar, Թուրք բաջիները վրանից են նայում,
Ermeni geliyor elleri bağlı: Հայերն են գալիս ձեռնակապերով,
Analar ağlıyor – çocuğum diye, Մայրերն են լալիս՝ զավա՛կս ասելով,
Gelinler ağlıyor – kocam diye, Հարսներն են լալիս՝ ամուսի՛նս ասելով,
Kızlar ağlıyor – namusum diye. Աղջիկներն են լալիս՝ պատի՛վս ասելով

[Սվ. 2000: Վկ. 484, էջ 436]:

Դժոխային այդ իրարանցման մեջ մայրերը կորցնում էին զավակներին, զավակներն՝ իրենց ծնողներին.

Der Zor çölünde şaşırdım, kaldım, Դեռ Զորի անապատում շփարեցի, մնացի,
Yitirdim anamı, yitirdim babamı, Մորս ու հորս այնտեղ կորցրեցի,
Oy anam, oy anam, halımız yaman! Վա՛յ մայրիկ, վա՛յ մայրիկ, ողբալի է մեր վիճակը,
Der Zor çölünde kaldığım zaman. Դեռ Զորի անապատում մեր եղած ժամանակը

[Սվ. 2000: Վկ. 406, էջ 423]:

Պետք է ենթադրել, որ այդ աննկարագրելի թոճ ու բոճի մեջ ծնողներին կորցրած, որք ու անօգնական հայ երեխաներն են հորինել այս կարգի երգերը.

Der Zor köprüsü dar dir, geçilmez, Դեռ Զորի կամուրջը մեղ է. անցնել չի լինի,
Kan olmuş sular, bir tas içilmez, Զրե՛րն արնոտ են. մի թաս խմել չի լինի,
Anadan, babadan vaz geçilmez, Մորից-հորից բաժանվել չի լինի,
Dininin uğruna ölen Ermeni! Հավատի համար մեռնող հայեր

[Սվ. 2000: Վկ. 422, էջ 425]:

Օտար միջավայրում մասամբ օտարացած հայ որբուկը ստիպված թուրքերենով է արտահայտել իր հոգու վիշտը, սա-կայն նա դեռ չի մոռացել իր համար նվիրական հայերեն «մայ-րիկ» բառը.

*Yeşil kurban olayım geçen günlere, mayrik!¹⁸
Kırıldı kanatlarım, kaldım çöllerde
Anasız, babasız, mayrik!
Düşdüm diyar gurbete, mayrik!
Ya ben ağlamayım, mayrik!
Kimler ağlasın, mayrik?*

Դաւար զոհ դառնաւ անցաւ օրերին, մայրիկ¹⁸,
Փշովեցին թևերս, մնացի անապատում
Առանց մայր, առանց հայր, մայրիկ,
Ընկա օտար վայրեր, մայրիկ,
Եթե ես լաց չլինեմ, մայրիկ,
Ովքե՞ր լաց լինեն, մայրիկ

[Սվ. 2000: Վկ. 486, էջ 436]:

Թեպետ անհայր ու անմայր մնացած հայ որբուկը, օտարների մոտ գոյատևելով, մոռացել էր իր մայրենի լեզուն, սակայն չէր մոռացել քրիստոնեական խաչակնքումը: Անապատական արաբների կողմից իր գեղեցիկ դեմքը կապույտ թանաքով դաջված, աղաբազարցի 90-ամյա Սիրենա Ալաճաճյանը (ծնվ. 1910 թ.) պատմել է, թե ինչպես զինադադարից հետո որբահավաքներն իր մեկ քրիստոնեական խաչակնքումով հաստատել են իր հայ լինելն ու տարել հանձնել հայկական որբանոց [Սվ. 2000: Վկ. 227, էջ 367]:

Նիկոմեդիացի մի այլ վերապրող Բարուհի Սիլյանը (ծնվ. 1900 թ.), որի դեմքը նույնպես դաջված էր, նա ևս վկայել է. «12 ամիս անապատում ենք մնացել, ո՛չ հաց, ո՛չ ջուր, ո՛չ տուն, ո՛չ մի բան: 9 հոգինոց ընտանիքեն միայն ես ողջ մնացի. մամայիս սպանեցին աչքիս առջևը, քույրիկիս փախցուցին, մյուս քույրիկս փոքր էր՝ հիվանդացավ, մեռավ, միջնեկը՝ կորավ, իրար չգտանք: Հարսիս փորը պատռեցին. «Գյավուրի փորինը աղջիկ է, թե՞ տղա», - ըսավ մի ասկյար: «Գյավուրը տղա չի՞ ծնիր, տե՛ս», - ըսավ մեկ ուրիշը և սրով փորը պատռեց մեր աչքին առջև: Ես, ուրիշ չորս աղջիկներու հետ, հազիվ փախա անտառները, այնտեղ գետ մը կար, լողալով անցանք: Մի արաբ ինձ տարավ իր տունը, ըսավ. «Աղջիկս, ճիշտ է, ձեր օրենքին

մեջ չկա, բայց արի՛ երեսդ մեղանով ծեծեմ, որ քեզ հայ չկարծեն»: Ես ալ լացի: Նե՛ տեղաշոր ունեմ, նե՛ հագուստ: Երեսս ծեծեցին, հաստ հյուսերս խուզեցին: Տունին գործերը կընեի...» [Սվ. 2000: Վկ. 230, էջ 369]:

Վերապրողներից մեր գրառած հուշերի մեջ բազմաթիվ վկայություններ կան նաև հայ երեխաներին սպանելու և կամ բռնությամբ հավատափոխ անելու մասին, քանի որ կառավարության նախաձեռնած գաղափարական գիծն էր այդ: Ինչպես Թալեաթ փաշան է ասել՝ «Պէտք է մաքրել հայերի հաշիւը» [Անտոնեան 1921: էջ 232]: Պաշտոնական այդ գաղափարախոսությունն էին իրագործում երիտթուրք զինվորական սպայակազմն ու ոստիկանները, ասկյարներն ու չեթեները: Այդ է հաստատում նաև սերաստացի Սաթենիկ Դողրամաջյանի (ծնվ. 1903 թ.) պատմած հուշը. «...Ադ տեղ հրաման էր եկեր, թե՛ «Որքան հայ կա գյուղը, պիտի մուսուլման ընենք, եթե չէ՛ կրակը պիտի դնենք, պիտի վառենք»...» [Սվ. 2000: Վկ. 81, էջ 117]:

Կառավարական հրամանին համահունչ էին նաև մահմեդական շեյխերի քարոզները: Խարբերտցի Գարեգին Թուրուշիկյանը (ծնվ. 1903 թ.) իր հուշի մեջ նշում է. «...Ով որ 7 գյավուր սպանի, - ասել է շեյխ Արըֆը, - ջեննեթ կէրթա...» [Սվ. 2000: Վկ. 119, էջ 232]:

Մալաթիացի Մարի Վարդանյանը (ծնվ. 1905 թ.) ևս նույն փաստի մասին է վկայել. «...Մահմեդական թուրքերն ասում էին. «Ով գյավուր մը սպանի, անոր հոգին դրախտ կերթա»...» [Սվ. 2000: Վկ. 124, էջ 238]:

Բացի այդ պատահում էր նաև այնպես, որ տղաներին փախցնում էին, թլփատում, ստիպում միայն թուրքերեն խոսել, իսկ աղջիկներին՝ բռնաբարում էին և կամ խաչելով սպանում:

¹⁸ Թուրքալեզու երգի մեջ օգտագործված և կրկնված է հայերեն «մայրիկ» բառը:

Այդ մասին է վկայում նաև ժողովրդական երգը.

Երեք խոջաներ գետին փորեցին,

Վա՛յ, աման,

Երիտասարդ հայ տղուն ողջ-ողջ թաղեցին,

Ա՛հ, աման:

Անոր քույրիկը տարին խաչեցին,

Վա՛յ, աման,

Խաչեն վեր առին՝ ծովը նետեցին,

Ա՛հ, աման

[Սվ. 2000: Վկ. 350-351, էջ 415]:

Խարբերդցի Եղսա Խայաջանյանը (ծնվ. 1900 թ.), որն իր հուշը պատմելիս հաճախ ջղաձգվում էր ու դառնորեն լաց լինում, նույնպես վերհիշել է. «...Թուրքը ըսեր է. «Հիմա թուրք պիտի ըլլաք, չէ՛նե՛ հայ»: Տերտերը ըսեր է. «Մեղա՛ք եզ»: Բոլոր քահանաներուն ջահել-ջահել կոտորել են: Հայ բողոքական վարժապետին՝ պր. Գևորգին լեզուն կտրել են, քանի որ հայերեն սորվեցուցեր էր, վերջն ալ գլուխը կտրեր են...» [Սվ. 2000: Վկ. 108, էջ 218]:

Երիտթուրքերի վարած թուրքացման ու բռնի հավատափոխության քաղաքականությանն է անդրադարձել նաև խարբերդցի Ռոբեր Գալընյանը (ծնվ. 1912 թ.) իր պատմած հուշի մեջ. «...Թուրքերը հավատափոխ էին անում փոքրիկ երեխաներին. «Մուհամեդ ուսուլ Ալլահ» էին ասում՝ սյուններ էին անում, այսինքն՝ թլփատում էին, անունները փոխում էին և ստիպում թուրքերեն խոսել...» [Սվ. 2000: Վկ. 118, էջ 231]:

Շապինգարահիսարցի Հակոբ Թերզյանը (ծնվ. 1910 թ.) իր տված վկայության մեջ ներկայացրել է թուրք զինվորականների և հոգևոր պետերի՝ մոլլաների, համատեղ գործակցությունն այդ նույն քաղաքականության իրականացման գործում.

«Ես արդեն 79 տարեկան եմ: Շապին-Գարահիսարեն եմ ես: Երբ կղիմադրեին թուրքերուն, ոմանց ջարդեցին, իսկ մեզ նման երեխաներիս տարին թուրքին որբանոցը: Մեզ մերկացրին, սուրը դրեցին վիզներուս: Զաքիթը սուրը քաշում էր, մոլլան՝ ասում. «Քրիստոնյայի հավատքը թողնում եմ, մահմեդականություն եմ վերցնում»: Մեզ կրկնել կուտային ադ խոսքերը...» [Սվ. 2000: Վկ. 78, էջ 161]:

Ամերիկաբնակ բալուցի Սարգիս Սարոյանին (ծնվ. 1911 թ.) ես պատահաբար հանդիպել եմ 1999 թ. Փարիզում՝ Լուվրի թանգարանի դահլիճներից մեկում և այնտեղ իսկ գրի առել նրա ցավագին հուշերը, որտեղ նա ևս հաստատում և մանրամասնում էր այդ նույն փաստը, թե ինչպես իրեն և մյուս տղամարդկանց բռնի իսլամացրին. «...Մոլլա մը եկավ, իմ անունը Սեֆեր դրավ: Ինձի, հորեղբորս և Հովհաննեսին, որի անունը Հասո դրին, բոլորին թլփատեցին: Կհիշեմ սարսափելի ցավ զգացի: Կրակի պես վառեցին մարմինիս ադ մասը և ադ միսի կտրված կտորը դրին արևի տակ, չորցուցին, որ պահեն որպես փաստ...» [Սվ. 2000: Վկ. 122, էջ 237]:

81 տարեկան ֆրնդընագցի Հարություն Ալբոյաջյանը (ծնվ. 1904 թ.) նույնպես դառնությամբ է հիշել իր տխուր մանկությունը. «...Երբ ծնողներիս սպանեցին, հետո ինձ ու ինձ նման անչափահաս երեխաներին հավաքեցին տարին Զեմալ փաշայի¹⁹ թուրքական որբանոցը՝ թուրքացրին: Իմ ազգանունս «535» էր, իսկ անունս Շյուքրի էր: Հայ ընկերս ալ է՛նվեր դարձավ: Մեզ սյուններ ըրին՝ թլփատեցին: Կային շատեր, որոնք

¹⁹ Զեմալ փաշա (1872–1922) – թուրք պետական գործիչ, «Իրություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխներից, երիտթուրքերի ղեկավար «եռյակի» (Թալեաթ, Էնվեր, Զեմալ) անդամ, հայերի ցեղասպանության գլխավոր հանցագործներից:

թուրքերեն չէին գիտեր, շաբաթներով չէին խոսեր, որ չիմանան, որ հայ են: Չաուշները եթե իմանային, ֆալախա կքաշեին, 20-30-50 գավազան ոտքերում տակը կզարնեին կամ ժամերով արևին նայել կուտային: Մեզ աղոթել կուտային, երեք անգամ պիտի կրկնեինք. «Փաղիշահըմ չո՞ք եաշա» («Կեցցե՛ իմ թագավորը»): Մեզի կհագցնեին թուրքական հագուստ՝ սպիտակ անթարի, վրան սև ջյուբբե: Ունեինք մյուդյուր (տնօրեն), մի քանի խոջախանումներ (ուսուցչուհիներ): Ջեմալ փաշան հրամայած էր մեզի լավ նայել: Քանի որ ան շատ կգնահատեր հայերու խելքը և շնորհքը ու հույս ուներ, որ եթե հաղթեր, հազարներով թուրքացած հայ երեխաները պիտի ապագային ազնվացնեն իր ժողովուրդը, մենք պիտի իր ապագա հենարանը դառնայինք...» [Սվ. 2000: Վկ. 144, էջ 269]:

Ահա թե ինչու՝ հավատափոխ չլինելու, թուրքի կին չդառնալու, թուրք երեխաներ չծնելու համար

...Հայ աղջիկներ ձեռնե ի ձեռ բռնեցին,

Իրենք զիրենց Եփրև (Եփրատ) գետը նետեցին...

[Սվ. 2000: Վկ. 362, էջ 417]

արցունքները սրբելով արտակեղեք երգում էր արժանահիշատակ վերապրող Մարիամ Բաղդիշյանը (ծնվ. 1909 թ.) և, վերհիշելով իր տխուր մանկությունը, շարունակում.

Giden, giden Ermeni kızlar!

Bir gün ölüm bize düşer,

Düşmana avrat olmamaya,

Yepratin içinde ölüm bulayım.

Գնացող-գնացող, հայ աղջիկներ,

Մի օր մահը դեմ կգա մեզ,

Թշնամուն կին չդարձած՝

Եփրատի մեջ գտնենք մահ

[Սվ. 2000: Վկ. 496, էջ 438]:

Նիկոմեդիայից Մուշեղ Հակոբյանը (ծնվ. 1890 թ.) նույնպիսի ծանր տպավորություններով էր հիշում աքսորի ճամփաներին իր աչքերով տեսածները. «...Իմ աչքերով տեսա

40-50 հայ աղջիկներ ձեռք-ձեռքի բռնեցին, Եփրատ գետը նետվեցին, որ թուրքերում ձեռքը չանցնին: ...Փոքր երեխաներին սուրերու վրա կհանեին, կսպանեին...» [Սվ. 2000: Վկ. 228, էջ 369]:

Շապինգարահիսարցի Մկրտիչ Խաչատրյանի (ծնվ. 1907 թ.) հուշերը նույնպես այդ մասին են վկայում. «...Դիվրիկ հասանք, շա՛տ հեռու՝ Վանի մոտ, ուր Եփրատն ու Տիգրիսը իրար էին միանում: Հոն հայ աղջիկները պար բռնելու պես իրար ձեռք բռնեցին, Դիվրիկի ձորով Եփրատ գետը նետվեցին, որ իրենց չբռնաբարեն: ...Մենք մահից չէինք վախենում, մենք թու՛րքից էինք վախենում...» [Սվ. 2000: Վկ. 77, էջ 161]:

Երզնկացի ակամատես-վկա Գառնիկ Ստեփանյանը (ծնվ. 1909 թ.) հուզմունքով է վերհիշել նաև այլ ողբերգական դեպքեր. «Ապրիլյան օրեր էին Դեր Զորի մոտ՝ Հեքիմխանայում, ահավոր բան կատարվեց: Մեր քարավանին միացրել էին զվանցի 30 գեղեցիկ հարսներ: Մի գիշեր դրանց հավաքեցին տարան. մերկացրել էին, ստիպել էին պարել ու զվարճացնել իրենց: Երբ նրանց ետ բերեցին, զգզզված մազերով ու այլանդակված վիճակում, նրանք միմյանց ձեռք-ձեռքի բռնած իրենց գցեցին Եփրատ գետը» [Սվ. 2000: Վկ. 95, էջ 200]:

Էրզրումցի Լորիս Պապիկյանը (ծնվ. 1903 թ.) ավելի մանրամասնորեն է վերհիշել տվյալ փաստը՝ պատկերավոր կերպով նկարագրելով իր տեսածները. «...Թուրք ժանդարմաները խրախճանք էին սարքել կամուրջի մոտ՝ իրենց վրանների շուրջը, ուրախանում էին հայ աղջիկների ու հարսների հետ բռնի կերպով գործադրած առևանգումներով ու իրենց վափաշոտ կրքերին հագուրդ տալու այլ և այլ միջոցներով: Ես ակամատես եղա, թե ինչպես թուրք պաշտոնյաները ջոկել էին հայ

աղջիկներից ամենագեղեցիկներին, մոտ երեսուն հոգու, իրար կապել ու պահակների հսկողության տակ ուզում էին տեղափոխել իրենց մշտական որջերը՝ հետագա ստոր նպատակների համար: Սակայն աղջիկների այդ խումբը՝ հասնելով Եփրատ գետի կամուրջի վրա, կայծակի արագությամբ, որպես մեկ մարդ, ահռելի բարձրությունից նետվեց Եփրատ գետը՝ մեկընդմիջտ ազատվելով հետագա տանջանքներից ու խոշտանգումներից: Աղջիկների նման վարմունքը կատաղության հասցրեց թուրք ժանդարմների ղեկավարներին, որոնք հրամայեցին կենդանի մնացած բոլոր ծերերին, կանանց ու երեխաներին կապել, խումբ-խումբ գցել ջուրը: 200 մետրից ավելի լայնություն ունեցող խոր գետի երեսը ծածկվել էր մարդկային դիակներով, և կարծես արյուն էր հոսում ջրի փոխարեն...» [Սվ. 2000: Վկ. 90, էջ 192]:

Մերսինցի Սողոմոն Եթենիկյանը (ծնվ. 1900 թ.) նույնպիսի հուզմունքով է վերհիշել իր տեսածը. «Թշնամիս թող չտեսնա ան, ինչ որ մեր աչքերը տեսան Դեր Զորի ճամփին: ...Սիրտս կանգ կառնե, որ կհիշեմ ադ բոլորը: ...Աղջիկ-կնիկ, 300-400 հոգի գոտիներնին հանած, իրար կապված, իրար հետևից, յալս՝, Եփրատ գետը կնետվեին, որ թուրքի բաժին չդառնան: ...Ջուրին երթալը չէիր տեսնար, լեշերը դուրս ելած էին, բերդի պես իրար վրա դիզված էին, շուները կատղած էին մարդու միս ուտելն...» [Սվ. 2000: Վկ. 188, էջ 322]:

Հաճընցի Ահարոն Մանկրյանը (ծնվ. 1903 թ.) ևս, վերհիշելով իր տեսածները, հաստատել է նույն փաստը. «...Եփրատի ջուրն ալ արյունոտ էր. խմել անգամ չէիր կրնար, դիակները վրայեն կերթային...» [Սվ. 2000: Վկ. 145, էջ 271]:

Պատմական այդ ահավոր իրողությունը նույնպես գեղար-

վեստական լեզվով արտահայտված չափածոյի է վերածվել.

*Der Zor çölleri taşlıdır, geçilmez,
Yeprat getin²⁰ suları acıdır,
Bir tas içilmez!
Ermeni kan ile su da içilmez.*

Դեր Զորի անապատը քարոտ է՝ անցնել չի լինի,
Եփրատ գետի²⁰ ջրերը դառն են՝
Մի թաս խմել չի լինի,
Հայերի արյունով ջուրը խմել չի լինի

[Սվ. 2000: Վկ. 420, էջ 425]:

Ամենադաժան ձևերով մահատակվում էր հայ ժողովուրդը: Բռնի տեղահանության ու քստրի ճամփաներից շատ քչերն էին հրաշքով վերադառնում.

*Meyvasız ağaçlar meyvaya döndü,
Muhacir gidenin yarısı dönmedi.*

Անպտուղ ծառերը պտղավորվեցին,
Կեսը ետ չեկավ գաղթականների

[Սվ. 2000: Վկ. 434, էջ 426]:

Պատմական այդ իրադարձություններին ականատես-վկա մուսալեոցի Պողոս Սուպկուկյանը - Աշուղ Դեելի (ծնվ. 1887 թ.) Կիլիկիայի տեղահանության մասին իր ցնցող տպավորությունները դեռևս 1956 թ. մեզ է հաղորդել իր իսկ հորինած ինքնաբուխ վիպերգի ձևով.

*Էնվեր վե Թալաաթ տիժը փաշիսէն
Սաբաբ իղուն մըհաջըրլըքէն:*

*Բըթըն մաֆ իրէն էրմանը միլլաթէն:
Լիզվընէն թըղ չիրմիր՝ չվա՝ գաղ անցէն:
Հագուր էնը հարէր դըսնընէն գարէն
Իղուվ փըրթըվիը Կիլիկը էրմանէն,
Չա՝ միդը գունիրէն մախսըմ չուրըխէն,
Մաուվընէն թըղ գորիր քըլըն գիխուղէն,
Չու՝ց միսը բըր մաոնուը էրմանը չուրըխէն,
Ժըրը քարվիցուն հիդվէն քուրվըղէն,
Դիր գայնուղ չիղուվ էրմանը միլլաթէն:*

Էնվեր և Թալեաթ թուրք փաշաները
Պատճառ դարձան գաղթականության.
Լրիվ ոչնչացրին հայ ժողովրդին,
Լեզուները չորանար, ինչու՝ ասացին,
Հագար ինն հարյուր տասնհինգ թվին
Եղավ կոտորածը Կիլիկիո հայության,
Ի՞նչ մեղք ունեին մատղաշ մանուկները,
Թող կոտորվեին սուր բռնող ձեռքերը,
Ինչպե՞ս մոռանաք հայ մանուկներին,
Ջուրը նետվեցին քույրերով միասին,
Տեր կանգնող չեղավ հայ ժողովրդին

[Սվ. 2000: Վկ. 360, էջ 416]:

Եվ իրոք, «տեղ կանգնող չեղավ հայ ժողովրդին», որը անդեկ ու անգնն քշվում էր քստրի ճամփաներով: Երիտթուրքական բռնակալության նախաձեռնած տեղահանությունն ու

²⁰ Թուրքալեզու երգի մեջ օգտագործված է հայերեն «գետ» բառը:

կոտորածը մի քանի ամսվա ընթացքում արդեն ծավալուն բնույթ էր ստացել՝ ընդգրկելով Արևմտյան Հայաստանը, Կիլիկիան և Անատոլիան: Մեկը մյուսի ետևից դատարկվում էին Սվազը, Շապին-Գարահիսարը, Խարբերդը, Մալաթիան, Դիարբեքիրը, Իզմիթը, Բուրսան, Անկարան, Կոնիան և Կենտրոնական ու Արևմտյան Անատոլիայի այլ հայաբնակ վայրերը:

Վանեցի Վարդգես Ալեքսանյանը (ծնվ. 1911 թ.) իր հուշն ավարտել է հետևյալ եզրակացությամբ. «...Մտածում եմ ես հաճախ...ինչու՞ Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան թույլ տվեցին, որ այդքա՛ն հայ սպանվի, որ այդքա՛ն որբեր անտեր, անտիրական մնան: ...Ես եկել եմ Արևմտյան Հայաստանից: Թուրքը ուզեցել է Հայաստանին տեր դառնա, և Գերմանիայի, Ֆրանսիայի, Անգլիայի թույլտվությամբ Արևմտյան Հայաստանը անցավ թուրքին: Հայերը նվաճող չեն եղել: Մի՛շտ նրանք են հարձակվել, սպանել, խեղդել, մահատակել...» [Սվ. 2000: Վկ. 46, էջ 126]:

Սակայն ողբերգական այդ օրերին հայ ժողովրդի հոգում վերազարթնեց դարերի խորքից ժառանգաբար արյան հետ եկող «Մահ իմացեալը» ստրուկ կյանքից նախընտրելու և բռնությանը միահամուռ ուժով դիմադրելու հերոսացման իր խիզախ ոգին:

Երիտթուրքերի կազմակերպած համատարած սպանդի պայմաններում արևմտահայերը երկրի մի շարք շրջաններում անհավասար կռիվ մղեցին թշնամու գերազանց ուժերի դեմ: Սակայն այդ ինքնապաշտպանական մարտերը մղվում էին առանց ծրագրի, տարերայնորեն, մեկը մյուսից անջատ: Բայց, այնուամենայնիվ, հերոսական պայքարի շնորհիվ, Վանում, Շատախում, Մուշում, Սասունում, Շապին-Գարահիսարում և

այլուր տասնյակ հազարավոր կյանքեր փրկվեցին երիտթուրքական դաժանություններից:

Հուլիսի 18-ին ստացվում է Քեսաբի հայության բռնագաղթի հրամանը: Այդ օրերին վերապատվելի Տիգրան Անդրեասյանը Զեյթունից բռնագաղթված թափորներից ճողոպրելով հասնում է հայրենի Մուսա լեռ և պատմում թշվառ հայ տարագիրների կրած անասելի տառապանքների մասին: Տեսնելով, որ հերթն իրենց է հասնելու, հուլիսի 19-ին Մուսա լեռան յոթ գյուղերի գրեթե բոլոր բնակիչները միաբանվելով, որոշում են՝ չենթարկվել տեղահանության կորստաբեր հրամանին:

Մուսա լեռան հերոսամարտի մասնակից, 106-ամյա Մովսես Փանոսյանը (ծնվ. 1885 թ.) իրեն հատուկ երիտասարդական ավյունով մեզ է պատմել այդ դեպքերը՝ վերհիշելով մուսալեռցիների երդումը. «Իս հուս ձննուձ իմ. հու՛ս անլ է բըր միոնիմ, իս չը՛ս ուրթօ եասսէր քիմը դուշմանէն եամրէն վըրքը չարչարանքում միոնիլ. թվունքը ծառիս զը միոնէմ եաս դիղը, թաքա մուհաջըր չը՛ս ըննօ» («Ես այստեղ եմ ծնվել, այստե՛ղ էլ պիտ մեռնեմ, ես չե՛մ գնա ստրուկի նման թշնամու հրամանի տակ չարչարանքով մեռնելու. հրացանը ձեռքիս կմեռնեմ այստեղ, բայց գաղթական չե՛մ դառնա») [Սվ. 2000: Վկ. 156, էջ 282]:

Մուսա լեռան ինքնապաշտպանական-դիմադրողական հերոսամարտի մասնակից մուսալեռցիներ Մովսես Բալաբանյանը (ծնվ. 1891 թ.), Հովհաննես Իփրեջյանը (ծնվ. 1896 թ.), Տոնիկ Տոնիկյանը (ծնվ. 1898 թ.) և շատ ուրիշներ մեզ են պատմել այդ իրադարձության մանրամասները [Սվ. 2000: Վկ. 156-171, էջ 279-306]:

Իսկ Մուսա լեռան հերոսամարտի մասնակից Պողոս

Մուսկուկյանը – Աշուղ Դեւլիհն (ծնվ. 1887 թ.) մուսալեոցու արժանապատվության զգացումով է մեզ հաղորդել իր ստեղծած վիպերգը, որից մեջբերենք մի հատված.

Խուսքը լավիցուվ Թաղուբինց Իսայէն.

«Լիռը թող ընձին, - անուց կեղանդէն,

Վեզ չըթըր ձոհնք մի՞նք մի՞ր դուշմանէն.

Նիդի՛նք. միդըղվի՛նք՝ միո՛հնք մի՞ր խուղէ՛ն»:

Եսայի Թաղությանի խոսքերը հնչեցին.

«Թող լեռ բարձրանան, - ասաց բոլորին, -

Թշնամու առաջ մենք վիզ չե՛նք ծոխ.

Զարկենք, զարկվենք, մեր հողում մեռնենք»

[Սվ. 2000: Վկ. 360, էջ 416]:

Բողոքի ու վրեժխնդրության զգացումը համակում է բոլորին: Այդ ու կին, մանուկ ու ծեր, թողնելով իրենց տունն ու այգին, բարձրանում են Մուսա լեռան անմատչելի գագաթը՝ պաշտպանելու իրենց պատիվն ու արժանապատվությունը, կոչով դիմադրելու թշնամու բազմահազար զորքերին: Բոլորն անխտիր, առանց ժամանակ կորցնելու, կազմակերպված ձևով սկսում են վրաններ լարել, խրամատներ փորել, ամուր պատերով պատնեշներ բարձրացնել՝ ներսից փոքր հրակնատներ թողնելով: Որոշ տեղերում, թշնամուն տեսնելու համար, կտրատում են խիտ անտառները: Նույնիսկ փոքրիկ տղաները՝ *«թելեֆոնի տղաները»*, կապավոր են դառնում: Կանայք կազմակերպում են սնունդը, աղջիկներն ու հարսները հեռվից ջուր են կրում՝ կոփողներին հասցնելու: Թշնամին քայլ առ քայլ մոտենում է մուսալեոցիների դիրքերին, բայց տարբեր կետերից բացված կրակը կատարյալ շրջապատման տպավորություն է ստեղծում, և թուրքերը սարսափահար փախչում են՝ թողնելով հարյուրավոր սպանվածներ:

53 օր համառ մարտեր են մղվում՝ Եսայի Թաղությանի, Պետրոս Դմլաքյանի և վերապատվելի Տիգրան Անդրեասյանի գլխավորությամբ: Այդ ընթացքում Քըզըլջայի, Քուզջըղազի, Դամլաջըքի և Քափլան-Դուզաղի բարձունքներում չորս լուրջ ճակատամարտ է տեղի ունենում: Ըստ այդմ էլ հյուսվել է ժո-

ղովորական խրոխտ երգը.

Մենք մուսալեոցի քաջ կտրիճներ ենք,

Բոլորս ալ վարժ զենք կրողներ ենք,

Թուրքը մեզ կուզե տեղահան անել,

Անապատներում մեզ բնաջնջել:

Մենք չենք կամենար լինել շանսատակ,

Մենք կուզենք թողնել մի լավ հիշատակ.

Փառքով մեռնելը մեզի պատիվ է,

Նահատակվելը ազգին պարծանք է:

Լեռնցի ենք մենք՝ բոլորս ալ քաջ,

Մենք չենք խոնարհվի թշնամու առաջ,

Առյուծի նման կկոպենք քաջ-քաջ,

Ցիր ու ցան կանենք բանակը տաճկաց...

[Սվ. 2000: Վկ. 539, էջ 446]:

Սակայն հակառակորդը նորանոր ուժեր է կենտրոնացնում ըմբոստ հայերին պատժելու համար: Մուսալեոցիների պարենն ու զինամթերքն սպառվում են: Հորդառատ անձրևն անօգտագործելի է դարձնում նրանց ունեցած ընդամենը երեք հարյուր որսորդական հրացանները: Լեռան ծովահայաց կողմից օգնություն ստանալու հույսով նրանք ճարահատյալ սպիտակ սավաններն իրար են միացնում՝ մեկի վրա գրում. *«Քրիստոնյաները վտանգի մեջ են, փրկեցե՛ք»*, իսկ մյուսի վրա՝ Կարմիր խաչի նշան և պարզում լեռան լանջին:

Սեպտեմբերի 5-ին Միջերկրական ծովի խորքով անցնող ֆրանսիական «Կիշեն» մարտանավը նկատում և դանդաղեցնում է ընթացքը: Մետաղյա արկերը վզին, մեջը օտար լեզվով գրված խնդրագրով, ծովն է նետվում Մովսես Գըրըգյանը: Նա լողալով հասնում է նավին, երեսը խաչակնքելով նավա-

պետին Է Գերկայացնում Գամակը: Սեպտեմբերի 14-ին Ֆրանսիական «Ժաննա դ'Արկ» շոգենավը, անգլիական ռազմանավերի ուղեկցությամբ մոտենում է Մուսա լեռան և վերցնելով ավելի քան 4.200 մուսալեոցիներին, փոխադրում է Պորտ Սալիդ, որտեղ նրանք պատսպարվում են բրեզենտյա վրանների տակ:

Պորտ Սալիդում անցկացրած 4 տարիների ընթացքում մուսալեոցիներն իրենց ապրուստը հայթայթում են սանրագործությամբ, գդալագործությամբ, գորգագործությամբ, ասեղնագործությամբ և այլ տոհմիկ արհեստներով:

Վերապրողներն իրենց մանկության հուշերը պատմելիս դեռ հիշում են, թե ինչպես իրենք անապատի հրաշեկ ավազների վրա իրենց մատներով գրել են սովորել մեսրոպյան տառերը, մինչև որ մի քանի վրանների տակ սկսել է գործել Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հիմնադրած Սիսվան վարժարանը՝ կից հիվանդանոցով ու որբանոցով:

Ազատության համար մարտնչած դյուցազնական մուսալեոցիներն իրենց սխրանքը գեղարվեստորեն արտահայտել են հետևյալ երգով.

*Osmanlının askerleri,
Musa dağın yiğitleri,
Bin-binlerce martinleri,
Uyan, musadağlı, uyan!
Nam kaldırdın cümle cihan!*

Օսմանական զինվորները,
Մուսա լեռան կտրիճները,
Հազար-հազար մարթիկները,
Զարթնի՛ր, մուսալեոցի՛, զարթնի՛ր,
Ողջ աշխարհում հռչակվեցիր:

*Osmanlının bombaları,
Musa dağın metarislari,
Bin – binlerce topları,
Uyan, musadağlı, uyan!
Nam kaldırdın cümle cihan!*

Օսմանական արկերը,
Մուսա լեռան դիրքերը,
Հազար-հազար գնդակները,
Զարթնի՛ր, մուսալեոցի՛, զարթնի՛ր,
Ողջ աշխարհում հռչակվեցիր:

*Fransızın vapurları,
Musa dağın duaları,
Gelin, kızlar, çocukları,
Uyan, musadağlı, uyan!
Nam kaldırdın cümle cihan!*

Ֆրանսիական մեծ նավերը,
Մուսալեոցոց աղոթքները,
Հարս ու աղջիկ, մանուկները,
Զարթնի՛ր, մուսալեոցի՛, զարթնի՛ր,
Ողջ աշխարհում հռչակվեցիր
[Սվ. 2000: Վկ. 538, էջ 446]:

Մուսա լեռան հերոսամարտն աշխարհը ցնցեց: Այն ցույց տվեց մարդկությանը, թե ինչի է ընդունակ մի բուռ ժողովուրդ, եթե ունի հերոսական ավանդույթներ և միասնական կամքի ուժ:

Ավստրիացի նշանավոր գրող Ֆրանց Վերֆելն իր «Մուսա լեռան քառասուն օրը» գրքում գեղարվեստական անկրկնելի գույներով է պատկերել մուսալեոցիների սխրանքը: Սակայն իր ժամանակին աշխարհը չանսաց մեծ ավստրիացու ահազանգին, և ծնունդ առավ ավելի մեծ մի չարիք՝ ֆաշիզմը, որի հետևանքով 6 միլիոն անմեղ հրեաներ և միլիոնավոր այլազգ ժողովուրդներ նահատակվեցին:

Դեռևս 1915 թ. մայիսից Ուրֆայի (Եդեսիա) նոր մյութեսերիֆը (կառավարիչ) իթթիհատական Ալի Հայդարը կազմակերպել էր տեղի 40 երեւելիների ձերբակալությունն ու բոլոր հայերից պահանջել 48 ժամվա ընթացքում հանձնել զենքերը: Հուլիսի վերջին ձերբակալվել էր նաև Ուրֆայի հայ թեմի լուսավորչալ առաջնորդ Արտավազդ վրդ. Գալենտերյանը: Օգոստոսին՝ Գուտեմե և Քարաքյոփրի վայրերում ոչնչացվել էին զորակոչված 1.500 ուրֆացի հայ երիտասարդներ: Այնուհետև ձերբակալել էին 100 առևտրականների և նրանց հարազատներից կաշառք հավաքել, թե իբր պիտի ազատեն, բայց բոլորին սպանել էին: Զերբակալել էին նաև 100 հոգու, որոնք նույն բախտին էին արժանացել: Այդ օրերին Ուրֆա են հասնում

իրենց քաջարի երիտասարդներից զրկված, աքսորյալ զեյթուն-
ցիների, ապա՝ Թուրքիայի տարբեր նահանգներից աքսորված
թշվառ հայերի նորանոր քարավանները: Լսելի են դառնում
որդեկորույս մայրերի ողբն ու հեծեծանքը, դեռատի աղջիկների
և անմեղ մանուկների մասին սահմուկեցուցիչ պատմություննե-
րը: Ուրֆայում բնակվող 35.000 հայեր, հատուկ խորհրդակցու-
թյամբ որոշում են մուսալեոցիների պես զենքի դիմել:

Հոկտեմբեր ամսին կազմակերպվում է Ուրֆայի հերո-
սական ինքնապաշտպանությունը՝ Մկրտիչ Յոթնեղբայրյանի
և Հարություն Ռասթելեյանի գլխավորությամբ: Ուրքի է
կանգնում Ուրֆայի ողջ հայությունը: Մահուկ ու ծեր, տղա ու
աղջիկ, բոլորը մեկ մարդու նման ինքնամոռաց կոչվում են 25 օր
ու գիշեր անդադար: Հայոց թաղամասերը բաժանվում են 6
մարտական շրջանների, որտեղ տեղաբաշխված էին 800 մար-
տիկներ: Ուրֆացիները երդվում են. «Մենք պատրաստ ենք
մեռնելու զենքը ձեռքներիս» [Սահակեան 1955: էջ 818]:

Սակայն թուրք ոստիկաններն ու խուժանն անցնում են
նոր հարձակման. գրավում են հայ կաթուղիկ եկեղեցին: Ուրֆա-
ցիները թշնամուն թույլ են տալիս ներխուժել հայկական թա-
ղամասը և, դարանակալելով, ոչնչացնել: Ասելիք էր դարձել
նրանց խիզախությունը.

*Urfa büyük, ayırlmaz,
Dibi gayım, dağılmaz,
Urfanın yiğitleri
Hiç bir yerde bulunmaz.*

Ուրֆան մեծ է՝ չի բաժանվի,
Հիմքն ամուր է՝ չի փլվի,
Ուրֆայի կտրիճները
Ոչ մի տեղում չի գտնվի

[Սվ. 2000: վկ. 542, էջ 447]:

Հանդիպելով համառ դիմադրության, Ֆախրի փաշայի
հրամանատարությամբ Ուրֆա է ուղարկվում 6.000 կանոնա-
վոր զորք, որին միանում են 12.000 հրոսակներ: Ուրֆայի ինք-

նապաշտպաններն զգալի կորուստներ են պատճառում թուրք
ջարդարարներին: Կատաղած Ֆախրի փաշան մտահոգ ասում
է. «Ի՞նչ կլինի մեր վիճակը, եթե այս ծանր օրերին մի քանի
Ուրֆաներ մեր դեմ այսպես ծառանան» [Արզումանյան 1969: էջ
453]:

Ծնկից ծանր վիրավոր Մ. Յոթնեղբայրյանը պատգա-
րակով դիրքից դիրք էր անցնում, ոգևորում կոպողներին: Ֆախ-
րի փաշան Մ. Յոթնեղբայրյանի մոտ բանազնաց է ուղարկում
գերմանացի գործարանատեր Մ. Էքարտին, որը նրան հորդո-
րում է դադարեցնել կռիվը և հանձնվել: Սակայն հերոսական
Ուրֆայի որդին պատասխանում է. «Եթե ձեր մէջ քաղաքա-
կիրթ եւ քրիստոնյա մարդու զգացում կայ՝ փրկեցէք անապատ-
ներուն մէջ կոտորուող անմեղ հայ ժողովուրդը» [Յուշամա-
տեան Մեծ եղեռնի 1965: էջ 804]:

Հաջորդ օրն իսկ թշնամին ավելի է սեղմում պաշարման
օղակը և հուժկու թնդանոթաձգությամբ ոչնչացնում հայկական
թաղամասը: Հայերի դրությունն օրըստօրե ծանրանում է: Հոկ-
տեմբերի 23-ին թուրքերը ներխուժում են հայկական թաղամա-
սը և դաժան հաշվեհարդար տեսնում Ուրֆայի անձնվեր հե-
րոսների հետ: Իսկ մերձակա հայաբնակ Կամուրջ գյուղի կեն-
դանի մնացած 800 ընտանիքներին քշում են Դեյր-Էլ-Ջոր և մեծ
մասին անխնա կոտորում:

Պատմական այդ իրադարձությունների մասին են մեզ
պատմել ուրֆացի վերապրողներ Խորեն, Խաչեր (ծնվ. 1893 թ.)
և Նվարդ (ծնվ. 1903 թ.) Աբլաբուտյաններն իրենց հուշերում
[Սվ. 2000: վկ. 132-134, էջ 246-254]:

Այսպիսով, տեղահանությունն ու կոտորածն արդեն
ընդգրկել էր ամբողջ Օսմանյան Թուրքիան: Երիթուրքական

կառավարության վարած անմարդկային, հայաջինջ քաղաքականության հետևանքով Հայոց ցեղասպանությանը զոհ դարձան ավելի քան 1,5 միլիոն հայեր:

Իրենց տունն ու տեղը, ունեցվածքը, սիրելի հարազատներին կորցրած, տեղահանության ու ցեղասպանության բոլոր դառնությունները ճաշակած, մահվան ճամփան անցնող հայ աքսորականները ճարահատված իրենց գայրույթն անեծքով են բանաձևել.

*Şu muhacirlik icat eden
Cennet yüzü görmesin!*

Այս գաղթականությունը հնարողը
Թող չարժանանա դրախտի
[Սվ. 2000: Վկ. 433, էջ 426]:

Եվ կամ՝

*Şu sürgünlüğü icat eden
Cehennem yoluna kurban olsun!*

Այս աքսորը հնարողը
Դժոխքի ճամփին թող զոհվի
[Սվ. 2000: Վկ. 434, էջ 426]:

Հայ ժողովուրդն անիծել է նաև երիտթուրք կառավարության ղեկավարներին՝ հատկապես Թալեաթին և Էնվերին, որոնք ծրագրված կերպով կազմակերպեցին հայ ժողովրդի այդ հրեշավոր նախճիրը.

*Atımı bağladım delikli taşla,
Kör olasin sen, Enver paşa!
Sen olmayaydın, sen gebereyidin,
Şun²¹-Talat paşa!
Ermenileri doğuttın dağlarda taşla.*

Նժույզս կապեցի ծակ քարին,
Կուրանա՛ս դու, Էնվե՛ր փաշա,
Դու չծնվե՛իր, դու սատակե՛իր,
Ծու՛ն²¹-Թալեաթ փաշա.
Հայերին ցրեցիր լեռ ու անապատ
[Սվ. 2000: Վկ. 449, էջ 428]:

Բացի երգերից, ականատես-վկա վերապրողներն իրենց հուշերում ևս անդրադարձել են իթթիհատ կառավարության ղեկավարներին, որոնք կազմակերպեցին զանգվածային

այդ սպանողը: Հանրնցի Երվանդ Քարամյանի (ծնվ. 1903 թ.) կարծիքով. «1915 թ. Թալեաթ, Ջեմալ, Էնվեր փաշաները խոսքերնին մեկ ըրած՝ իրենց պլանը մշակած էին: Այնպես որ, երբ մեզի աքսոր հանեցին, հասնողը սկսավ մեզի թալանել, մեր ունեցվածքը խլել: Խանչալներով հարձակվում էին, անխղճորեն սպանում բոլորին...» [Սվ. 2000: Վկ. 146, էջ 271]:

Զեյթունցի վերապրող Սամվել Արքիկյանը (ծնվ. 1907 թ.), քննադատելով երիտթուրք կառավարության կազմակերպած տեղահանությանը, ասել է. «...Թալեաթ, Ջեմալ և Էնվեր փաշաները կազմակերպեցին, որ խանչալներով բոլոր հայերին սպանեն: Ես 7 տարեկան էի, երբ Զեյթունից դուրս եկանք: Օսմանյան կայսրությունն առանց կոշիկի, առանց հացի աքսոր դուրս բերեց հայերին...: Սպանող, թալանող, կողոպտող մի կառավարություն էր այդ» [Սվ. 2000: Վկ. 142, էջ 267]:

Անդրադառնալով իթթիհատ կառավարության գործելակերպին՝ սեբաստացի վերապրող Խորեն Գյուլբենկյանը (ծնվ. 1900 թ.) ավելացրել է. «Կառավարությունը ժողովրդին լարել էր հայերի դեմ ասելով, թե իբր հայերը անհավատներ են, նրանք աչք ունեն մեր հողերին..., հետևաբար նրանց հոշոտելը և սպանելը մեղք չէ» [Սվ. 2000: Վկ. 87, էջ 182]:

Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուն տակավին իր պաշտոնավարության ընթացքում (1913-1916 թթ.) հայերի նկատմամբ շարունակվող հալածանքները դադարեցնելու մասին իթթիհատ կառավարության Ներքին գործերի նախարար Թալեաթին դատապարտելով, ասել է. «...Հայերու դեմ ձեր հալածանքներն անխափած կզգան Ամերիկացիները: Դուք ձեր սկզբունքները պետք է հիմնեք մարդկայնասիրության (humanitarianism) վրա, ո՛չ թե ցեղային խտրականության,

²¹ Թուրքալեզու երգի մեջ օգտագործված է հայերեն «շուն» բառը:

եթե ոչ՝ Միաց.- Նահանգները՝ ձեզ բարեկամ և հավասար չպիտի նկատեն: ...Դուք ամեն կողմ հանրային կարծիքը ձեզի դեմ պիտի գտնեք, մանավանդ Միաց.- Նահանգներուն մեջ: Մեր ժողովուրդը երբեք չպիտի մոռնա այս ջարդերը: Ամերիկացիները միշտ ոխ պիտի պահեն Թուրքիայի մեջ քրիստոնյաներուն միահաղույն բնաջնջումին համար: Անոնք զայն ուրիշ բան չպիտի նկատեն, բայց եթե կամավոր ոճրագործություն և լրջորեն պիտի դատապարտեն բոլոր այն մարդիկը՝ որոնք անոր պատասխանատուներն են: Դուք կարող չպիտի ըլլաք ինքզինքնիդ պաշտպանել՝ ձեր քաղաքական կանոնագիրին ապավինած և ըսել թե՝ դուք իբր մերքին գործերու նախարար գործեցիք և ո՛չ իբր Թալեաթ: Դուք կարհամարհեք արդարության ամեն գաղափար, այն իմաստով՝ որով մենք կըմբռնենք զայն մեր երկրին մեջ...» [Ամերիկյան դեսպան 1990: էջ 278-279]:

Իսկ Թալեաթ փաշան հոխորտալով հայտարարել է. «Հայկական խնդիրը լուծելու տեսակետով երեք ամսվան մեջ ես ավելի շատ գործ կատարեցի, քան Աբդուլ Համիդ 30 տարվա մեջ» [Ամերիկյան դեսպան 1990: էջ 284]:

Այդ մասին է վկայում նաև մալաթիացի ականատես-վկա Վերգինե Նաջարյանը (ծնվ. 1910 թ.). «...Թուրքերը ո՛չ երեխա, ո՛չ մեծ էին հաշվի առնում: Թուրքերը ասում էին. «Մենք պիտի ջնջենք հայ ազգը, որ միայն թանգարանում մեկ հայ մնա...» [Սվ. 2000: Վկ. 125, էջ 240]:

Ինչպես տեսնում ենք երիտթուրք կառավարության որդեգրած հայատյաց քաղաքականությունն իր արձագանքն է գտել նաև հասարակության որոշ խավերի տրամադրությունների վրա: Այդ են վկայում նաև այդ ժամանակ Թուրքիայում

քրիստոնյաների և հատկապես հայերի նկատմամբ շրջանավոր աճաբանապատ արտահայտությունները. “Ters gâvur” (Վատ գյավուր), “Namkôr gâvur” (Ապերախտ գյավուր), “Gâvura iyilik yaramaz” (Գյավուրին լավություն պետք չէ), “Gâvura ne kadar keser sin, o kadar sık biter” (Գյավուրին ինչքան կտրես, այնքան խիտ կաճի): Եվ կամ՝ ժողովրդական խոսակցականի մեջ տեղ գտած առած-ասացվածքները. “It derisinden kürk olmaz, Türk Ermeniye dost olmaz” (Ծան կաշին մուշտակ չի դառնա, թուրքը հային բարեկամ չի դառնա) և այլն [Սվազլյան Անձնական արխիվ, Անտիպ նյութեր]:

Սակայն քիչ չէին նաև թուրք ժողովրդի այն անհատները, որոնք, իրենց կյանքը վտանգի ենթարկելով, փրկել են մեծ ու փոքր հայերի: Այդ մասին պատմական զրույցներ մենք գրի ենք առել 1996 և 1997 թվականներին Թուրքիայի հայ համայնքի երախտագետ ներկայացուցիչներից [Սվ. 2000]:

Անդրադառնալով պատմական իրադարձություններին՝ հարկ է նշել, որ դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի օրերին՝ 1916 թ., դաշնակից տերությունների՝ Անգլիայի և Ֆրանսիայի ներքին պայմանավորվածությամբ (Սալքս-Պիկո), Թուրքիայի պարտության դեպքում, 2.600.000 հեկտար մշակովի, բերքառատ հողեր ունեցող Կիլիկիան անցնելու էր Ֆրանսիայի հսկողությանը: Անգլիայի և Ֆրանսիայի իշխանությունները Հայկական Ազգային պատվիրակության հետ նախապես համաձայնվել էին, որ եթե հայ կամավորները կովեն Թուրքիայի դեմ, հաղթանակից հետո հայերին կտրվեն քաղաքական լայն հնարավորություններ, և հայ կամավորները կդառնան նորակազմ Ինքնավար Հայկական Կիլիկիայի քաղաքապահ զին-

վորներ:

Ուստի թուրքական բանակից, աքսորի ճամփաներից ու տարբեր վայրերից, նույնիսկ հեռավոր Ամերիկայից ժամանած հայ երիտասարդները (մուսալեոցի, այնթապցի, մարաշցի, քեսաբցի, հաճընցի, հուսենիկցի, չնգուշցի, սեբաստացի, խարբերդցի, արաբկիրցի և այլն) զինվորագրվում են ֆրանսիական բանակին՝ ստեղծելով Արևելյան (Հայկական) լեգեոնը: Հայ կամավորներն իրենց միլիոնավոր անմեղ մահատակ հարազատների վրեժով լցված, արհամարհելով մահը, պարտության են մատնում թուրք-գերմանական զորքերին՝ նվաճելով Արարայի փայլուն հաղթանակը Նաբլուսի՝ Պաղեստինի մոտ: Պատմական այդ իրադարձությունները ևս իրենց գեղարվեստական արտացոլումն են գտել ժողովրդական թուրքալեզու երգերի մեջ.

*Birer-birer saydım dört sene oldu,
Ermeni askeri Nablusu aldı,
Ermeni askeri bin beş yüz kişi,
İngiliz, Fransız şaşdı bu işe.*

Մեկիկ-մեկիկ հաշվեցի չորս տարին,
Հայկամավորները Նաբլուսը գրավեցին.
Հայերը հազար թիճգ հարյուր հոգի էին.
Անգլիացին, ֆրանսիացին ապշեցին
[Սվ. 2000: Վկ. 451, էջ 428]:

Եվ իրոք, հայ քաջարի լեգեոնականներն արժանանում են ֆրանսիական հրամանատարության դրվատանքին: Գեներալ Ալեմբին, 1918 թ. հոկտեմբերի 12-ին, Հայ Ազգային պատվիրակության նախագահ Նուբար փաշային հղած հեռագրում գրել է. «Ես հպարտ եմ իմ հրամանատարութեան տակ հայկական զորամաս ունենալուս համար: Նրանք կոուեցին փայլուն կերպով եւ մեծ բաժին ունեցան յաղթանակի մէջ» [Քելեշեան 1949: էջ 592]:

Երբ երիտթուրքերի իշխանությունը տապալվեց, նրանց գործունեությունն ընդհանրապես և հակահայկական ոճրագոր-

ծությունները մասնավորապես դատապարտվեցին ինչպես Թուրքիայում, նույնպես և ամբողջ աշխարհում: Անտանտի տերություններին ենթակա Թուրքիայի նոր իշխանավորները սկսեցին դատապարտել երիտթուրքական ղեկավարներին:

Հայ վաստակաշատ պատմաբան, քաղաքական գործիչ, Հայաստանի Արտաքին գործերի երբեմնի նախարար Ջոն Կիրակոսյանն իր «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» գրքում հիշատակում է թուրք և օտար թերթերի ու քաղաքական գործիչների վկայություններ, ինչպես նաև թուրքական արխիվային փաստաթղթեր, որոնք ևս հաստատում են ժողովրդական մեր ականատես վերապրողների հաղորդած վկայությունների բացարձակ ճշմարտացիությունը: Մեջբերենք մի քանիսը.

«...Արդեն 1918-ի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Կ.Պոլսի մամուլի էջերը լի էին ճշմարտությունը պարզելուն նպաստող հարուստ վկայություններով: Թերթերի էջերում հրապարակվեցին Թալեաթի, Բեհաէդդին Օաքիրի, Նազըմի հակահայկական հրամանների, շրջաբերականների պատճենները: Դրանցից մեկում ասված էր. «Կեստ առ կեստ գործադրեցեք հայերը սպանելու մասին Ձեզի տրված հրամանները» («Ժամանակ», Ստամբուլ, 11.12.1918): Այդ թերթի նույն համարում տպագրված էր նաև Բեհաէդդին Օաքիրի մի ծածկագիր շրջաբերականը, գրված չափածո և հղված մահաճապատներին որպես ազդանշան.

*Silah patlamasin,
Asker yapmasin,
Ermeni kalmasin:
Büyükleri kesmeli,
Güzelleri seçmeli,
O birleri sürmeli.*

Թող զենք չպայթի,
Թող զինվորը չանի,
Թող հայ չմնա.
Մեծերին մորթոտել,
Գեղեցիկներին ընտրել,
Մնացածներին քշել:

Ահա թե ինչպես էր արտահայտվում 1918 թ. «Ալեմդար» թերթը Թալեաթի ու նրա գործընկերների մասին. «Կախեցին, սպանեցին, աքսորեցին, մորթեցին և միևնույն ժամանակ հայերը մորթել, աքսորել և սպանել տվին: Նրանք կրկնակի մարդասպաններ են, որովհետև հրամաններ արձակեցին սպանելու և սպանեցին» («Ռենեսանս», Ստամբուլ, թիվ 127, 30.04.1919):

Թուրքական «Իսթիքլալ» թերթը խոստովանում էր, որ «համաշխարհային առաջին պատերազմը մեր մեջ առաջացրեց անասնության և անբարոյականության ոգի: Ուրանալ դառն ճշմարտությունը, ճշանակում է ուրանալ արևի լույսը» («Ռենեսանս», Ստամբուլ, թիվ 173, 22.06.1919):

Պառլամենտի սենատի նախագահ, երիտթուրքական նախկին գործիչ Ահմեդ Ռիզան 1918-ի դեկտեմբերի 2-ին հայտարարել է. «Պատերազմի մեր մասնակցությունից (30 հոկտեմբեր, 1914) մինչև Թալեաթ փաշայի կառավարության անկումը (7 հոկտեմբեր, 1918) կառավարության կողմից գործված սխալների և ոճիրների, ջարդի, հրապարակային ոճրագործությունների..., կալվածների ու շենքերի բռնագրավումների..., հարստահարությունների ... համար դատախազությունից պահանջել եմ դատ բացել և ժամ առաջ երևան հանել ոճրագործներին և արդարադատության հանձնել»: Այս հարցադրմանը համապատասխան սենատն ընդունեց մի հատուկ թագրիր (որոշում – Վ. Ս.), որը հանձնվեց գործադիր իշխանությանը («Ժամանակ», Ստամբուլ, 05.11.1918): Ահմեդ Ռիզայի հարցադրմանն ի պատասխան արդարադատության նախարար Ալի Բեյը գտնում է, որ «տարագրության ժամանակ կուսակալներ, թե զինվորականներ, ամեն պարագայում սովորական ան-

ձերի նման պարզ դատարանների առջև պիտի դատվեն» («Ժամանակ», Ստամբուլ, 25.07.1918): Երբ սկսեցին ձերբակալել կուսակալներին, պաշտոնատար այլ անձանց, «Թասֆիրի էվքեար» թերթը մի հոդված տպագրեց «Պալատից դեպի բանտի զնդան» վերտառությամբ: Այնտեղ ասված էր. «Իսկապես ցավալի է տեսնել, որ այս անձերից շատերը սրանից երկու ամիս առաջ բոլորի կողմից փառքի ու պատվի էին արժանանում մեր նահանգների մեջ և այսօր բանտ են տարվում իբրև հասարակ ոճրագործներ: Դժվար է հասկանալ, թե ինչու այս անձերը չմտածեցին, թե մի օր իրենք պետք է հաշիվ տային Թալեաթ փաշայի կառավարության կողմից կատարված բոլոր ոճիրների համար, նույնիսկ եթե պատերազմից մենք հաղթական դուրս գայինք» («Ռենեսանս», Ստամբուլ, թիվ 7, 15.12.1918): «Չենք տարակուսում, որ ցանկության դեպքում Ստամբուլի, թե Անկարայի զրադարաններից թուրք պետական գործիչներին իսկույն կտրամադրեն «Ռենեսանս», «Թասֆիրի էվքեար» ու մյուս թերթերի հավաքածուները: Թող կարդան, ուսումնասիրեն իրենց իսկ երկրի պատմությունը ... ու չստեն այլևս», - եզրակացնում է Ջոն Կիրակոսյանը և շարունակում, - «...1918-ի ավարտին «Իթթիհատ» կուսակցությունը, [և] երիտթուրքերը Թուրքիայում հայտարարվեցին օրենքից դուրս: Եվրոպական հասարակական կարծիքը խիստ հակաերիտթուրքական էր: Ականավոր արևելագետներ՝ գերմանացի Յոզեֆ Մարկվարտը և ֆրանսացի Ժակ դը Մորգանը հրապարակավ պահանջեցին միջազգային տրիբունալի դատին հանձնել հայաստան քաղաքականության գլխավոր հանցագործներին: Գերմանացի գիտնական Յոզեֆ Մարկվարտը 1919-ի հունվարին արտասանած ճառում իր կառավարությունից պահանջեց ջանքեր գործա-

դրել. գտնել էնվերիճ, Թալեաթիճ և մյուս չարագործներին, նրանց հանձնել Անտանտիճ՝ միջազգային դատարանի միջոցով նրանց դատելու համար:

...Համաշխարհային հասարակական կարծիքը հետևում և լայնորեն արձագանքում էր պատերազմի ավարտից հետո թուրքական կյանքի երևույթներին: Թերթերի էջերում տպագրվում էին ականատեսների վկայություններ երիտթուրքական չարագործների հակահայկական քաղաքականության մասին:

...Արդեն 1918-1919 թթ. Արևմուտքում լույս տեսան բազմաթիվ գրքեր, որոնց հեղինակները ոչ միայն դատապարտում էին հանցագործներին, այլև պահանջում էին նրանց դատական պրոցեսը կազմակերպել Անտանտի և ԱՄՆ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ:

...1919-ի հուլիսի 13-ին «Նյու-Յորք թայմս»-ը հաղորդեց, որ «Թուրքիան դատապարտում է ուղղակի ժամանակի իր պարագլուխներին», որ զինվորական տրիբունալը մահվան է դատապարտել էնվեր փաշային, Թալեաթ փաշային և Ջեմալ փաշային. «երեքն էլ փախուստի մեջ են»: Թերթը հաղորդում էր, որ Ջավիդ բեյը և մի քանի ուրիշներ (այդ թվում նախկին Օեյսա ուլ իսլամը) դատապարտվել են տասնհինգ տարվա տաժանակրության:

...Դատարանի նիստերը շարունակվեցին ամիսներ: ...Երիտթուրք ղեկավարներին ներկայացվել էր երկու մեղադրանք. Թուրքիայի ներքաշումը պատերազմի մեջ և հայ ժողովրդի բնաջնջումը: Սա արդեն պաշտոնական ճանաչումն էր հրեշավոր ոճրագործության, որ կատարել էին երիտթուրքական պետական մարմինները», - եզրակացնում է Ջ. Կիրակոսյանը [Կիրակոսյան 1983: էջ 163, 170-171, 176, 208]:

Պատերազմից հետո կնքված Սևրի պայմանագրով Կիլիկիայի վրա հաստատվելու էր Անտանտի երկրների հսկողությունը, և թուրքական զորքերն իբր արդեն դուրս էին բերվելու Կիլիկիայից: Դեյր-էլ-Ջորի, Ռաս ուլ Այնի և այլ կենդանի գերեզմանոցներից հրաշքով փրկված, ուժասպառ, հյուծված և ունեզրկված հայ աքսորականները աստիճանաբար գալիս, տեղավորվում էին Կիլիկիայում: Նրանք, ապագայի նկատմամբ վառ հույսով ու հավատքով, սկսում են վերականգնել ավերվածը, մշակել խոպանացած այգիները: Սակայն թուրքերին հաջողվում է լեզու գտնել դաշնակից տերությունների հետ և ստիպել ֆրանսիացիներին՝ իրենց խաղաղապահ զորքերը դուրս բերել Կիլիկիայից:

Ֆրանսիական զինվորական վարչությունը ոչ միայն լուրջ միջոցներ չի ձեռնարկում հայերի անվտանգությունն ապահովելու ուղղությամբ, այլև տեղերում իշխանությունը թողնում է թուրք զինվորական պաշտոնյաների ձեռքին, և նրանք չեն զինաթափվում:

Չճանաչելով Սևրի պայմանագիրը և օգտվելով ֆրանսիական զինվորական վարչության անվճռականությունից և թուլությունից, թուրքական զորքերն ու տեղի չեթեններն իրենց գեներն ուղղում են Կիլիկիայի հայության դեմ:

1920 թ. հունվարից թուրքական զորքերը գրոհում են Կիլիկիայի հայկական բնակավայրերը: 22 օր տևող կատաղի մարտերում Մարաշ քաղաքի 11.000 հայեր կոտորվում են ու մոխրացվում:

*Maraşa Maraş derler, yaman, yaman!
Maraş, bu nasıl Maraş derler?
Maraşın içinde kilise yanar,
Kilise içinde ermeni yanar!*

Ավա՛ղ, Մարաշին Մարաշ են ասում,
Մարա՛շ, քեզ ինչպե՞ս են Մարաշ ասում,
Երբ քո մեջ եկեղեցի են հրկիզում,
Եկեղեցու մեջ՝ հայեր մոխրացնում
[Սվ. 2000: վկ. 456, էջ 429]:

Մարաշից մազապուրծ ականատես-վկա Վերգիեն Մայիկյանը (ծնվ. 1898 թ.), դառնորեն վերապրելով իր անցյալը, հանգամանորեն պատմել է իր տեսած սարսափելի իրողությունները. «...Քառասուն Մանկանց եկեղեցին, որը եկեղեցիներեն ամենամեծն էր և ամենաապահովը, քանի որ պարիսպով շրջափակված էր: Հոն փոխադրեցին մեր շրջանի բոլոր կիները, հարսնացու աղջիկները և երեխաները, ամբողջը՝ երևի 2.000 հոգիեն ավելի մարդ: Ասեղ նետելու տեղ չիկար: Խորանը, գավիթը, վերնատունը՝ ամբողջ լեփ-լեցուն էր: Մեր ֆեդայիները ամեն կողմեն կհսկեին: Բայց թուրք խուժանը կատաղած էր և հայու արյունի ծարավ էր. ամեն կողմեն կլսվեին թուրքերուն ձայները. «Հանու՛ն Մուհամեդի սրբազան ուխտի, պիտի ջարդենք բոլոր հայերուն»: Քառասուն Մանկանց եկեղեցիին շուրջը թուրք զինված խուժանը շղթայի պես շրջապատեց և օդակի մեջ առավ. դռները բացել անգամ չթողեցին, ասում էին՝ իբր գիշերը պիտի դուռը բացեն, հրամանն այդպես է: Քառասուն Մանկանց եկեղեցին շինված էր բարձունքի վրա: ...Եկեղեցիին մեջը լցված հայերը կսպասեին, որ գիշերը պիտի դուռը բանան, բայց գիշերվա ժամը տասը, տասնմեկ, տասներկու եղավ, դուռը բացող չկա: Հայ ժողովուրդը մեջը լիքը. ո՛չ ջուր կա, ո՛չ լույս, ամեն ինչ մեջը՝ ալ կեղտոտություն. մեկը՝ կուլա, մյուսը՝ կողբա, մեկալը՝ կաղոթե: Մեկ խոսքով, չտեսնված իրարանցում: Անոնց ձայները մենք լսում էինք մեր տունին մկուղեն, ուր մենք ալ պահմտած էինք: Մեյ մըն ալ պզտիկ լուսանցքեն տեսանք, որ գիշերվա ժամը մեկ անց կեսին քանի մը թուրք եկեղեցիին կամարածն կտուրին վրա են բարձրացած, նավթոտած վառվող շորի կտորները նետում են եկեղեցիին գմբեթեն ներս: ...Խանձահոտը աշխարհը բռնեց: Եկեղեցիեն եկող ձայները մարդու սիրտն էին փլուծ: ...Հրեշներն իրենց

ընելիքը ըրեր էին: Այլ ոչ ոք ողջ կար եկեղեցու և մեր տուներուն շրջակայքում: Եկեղեցիին մեծ քարերով սալահատակված տաճարությունը, որը մի քանի հարյուր մետր էր, կարծես օճառի հաստ շերտով էր ծածկված. մոտ երկու մաստ հաստությամբ մարդկանց ճարպը հալեր, հոսեր էր ու թանձրացեր... Առաջին գացողներուն ոտքերուն հետքերը ծեփվում էին այդ ճարպի շերտի վրա, ինչպես ձյունի վրա... Մեյ մըն ալ տեսանք, որ թուրքի կնիկները ձեռքերնին մեկ-մեկ մաղ առած՝ դեպի եկեղեցի են վազում: Մենք հեռվից դիտում էինք, բայց ես չդիմացա, ուզեցի երթալ, տեսնալ հոն կատարվածը: Հագա ֆարաջայի պես բան մը, գլխուս ալ չարշաֆ մը անցուցի, քիթս-բերանս փակեցի, արդեն թուրքերեն շատ աղեկ կխոսեի և վստահ էի, որ ինքզինքս չեմ մատներ: Ես ալ էլա ճամփա ընկա դեպի մեր Քառասուն Մանկանց եկեղեցին, որի մրոտված պատերն էին մնացել կիսավեր վիճակում, իսկ դռան տակից մարդկանց հալած յուղը հոսել էր բարձունքն վար... ոտքս կոխում եմ՝ կպնում է, մյուս ոտքս կոխում եմ՝ կպնում է...: Վերջապես տեսա քովես թուրք կին մը գնում է՝ մաղը ձեռքին, ինձ տեսնալով, ըսավ. «Բաջի՛, ինչու՞ հետդ մաղ չես վերցուցած»: Ես առանց շփոթվելու ըսի. «Կվերադառնամ, կվերցնեմ»: Նա էլ ծիծաղելով ըսավ. «Վերադարձե՛ղ վերջ ալ ի՞նչ կմնա...» Արդեն երրորդ օրն էր, բրուտի փուռի պես կարմրած պատերը դեռ տաք էին: Ներս մտա եկեղեցի, ի՞նչ տեսնամ: Թուրք կնիկները ամեն մեկը մի տեղամաս էին զավթել ու իրար չէին թողնում միմյանց սահմանը մտնել ու իրար վրա բղավում էին. «Ով իմ սահմանը մտնա, կսպանե՛մ...» Ինձի հետ եկող թուրք կնիկը ինձ դառնալով ըսավ. «Եթե գյավուրը պիղծ է, անոր ոսկին մաքուր է...»: Տեսնալը արժեր, թե այդ հրեշի կերպարանքով կնիկները ինչպե՛ս էին ուրախանում, երբ մաղված մոխիրի մեջեն հա-

լած ոսկիի կտոր մը կգտնային...» [Սվ. 2000: Վկ. 148, էջ 274]:

Մարաշի կոտորածին զոհ են գնում շուրջ 20.000 հայեր: Այնուհետև ողջ մնացած 8.000 մարաշցիներ, Ուրֆայի 6.000 հայ բնակչության հետ, հարկադրված բռնում են գաղթի ճամփան՝ դեպի՝ Հալեպ, Դամասկոս, Բեյրութ, Երուսաղեմ, Բաղդադ և Անատոլիայի հունական շրջաններ:

1920 թ. ապրիլի 1-ին թուրքերը պաշարում են Այնթապը: Պատերազմի ավարտից և զինադադարից հետո այնտեղ վերաբնակված շուրջ 10.000 այնթապցիների և 8.000 սերաստացի հայ գաղթականների հազիվ խաղաղված կյանքը նորից է փոթորկվում: Այնթապի հայերն անցնում են ինքնապաշտպանության: Տեղում Ազգային միության կից ստեղծվում է Զինվորական կենտրոնական մարմին՝ Ադուր Լևոնյանի գլխավորությամբ: Վերջինս հաշվառման է ենթարկում եղած 750 կոլոդների զենքն ու զինամթերքը և կազմակերպում ուսմբեր պատրաստելու գործը:

Պատմական այդ իրադարձությունների մասին այնթապցի Գևորգ Հեքիմյանը (ծնվ. 1937 թ.) ներշնչանքով է մեզ պատմել իր մորից լսածները. «1920 թ. Ալի Քըլընջն ահռելի զորքով հարձակվեց Այնթապի վրա: Այնթապի ինքնապաշտպանության ղեկավարն էր Ադուր Լևոնյանը: Ան այնթապցիներու կերակուրի պղինձներն անգամ հալեցնել տվավ, որ բոմբաներ շինեն: Ան իր կամավորներով հարձակվեցավ թշնամու վրա և դուրս եկավ պաշարումեն: Ալի Քըլընջի 24.000-ի հասնող զորքը մեկ գիշերվա մեջ սարսափահար ետ փախավ՝ «Գլավուրըն գօզի քան դօլդու» (Հայու աչքն արյուն լցվեց) գոռալով, որը կնշանակե՝ հայերը վրեժով լցվեցին: Մեր Այնթապում Ադուր Լևոնյանի վրա այս երգը հանել էին, - ասում էր մայրս ու երգում:

*Adur paşa! Kalk seni,
Çam çıkarı, yak seni!
Türkler hücum ediyor,
Kamavorlar,²² arş edin!*

Ադուր փաշա, ոտքի՛ ելիր,
Մարխիդ կրակը վառի՛ր,
Թուրքերը գրոհում են՝
Կամավորներ²², արշավե՛ք
[Սվ. 2000: Վկ. 545, էջ 448]:

Այդ ընթացքում Կիլիկիայի գրավման ընդհանուր հրամանատար Գողան օղլու Դողան բեյն իր բազմահազար զորքով պաշարում է Հաճըն քաղաքը, որի 35.000 հայ բնակիչներից Մեծ եղեռնից փրկվել էին միայն 6.000:

*Doğan bey de geldi girdi Hacına...
Yazık oldu sana, koca Hacı...
Orada kapıştı epeyi bizim malımız...
Ayak altına gitti sahabsiz ermeni!*

Դողան բեյն էլ եկավ, մտավ Հաճընը...
Ափսո՛ւ եղավ քեզ, հսկա՛ Հաճըն...
Այնտեղ թալանեցին մեր ունեցվածքը...
Ոտնատակ գնաց անտե՛ր հայը

[Սվ. 2000: Վկ. 549, էջ 450]:

Հակառակորդի կարծիքով «Կիլիկիոյ հայկական միջնաբերդը՝ Հաճընը, հիմնովին կործանելն ու բնաջնջելը մեկ ժամույս գործ էր եւ աննշան յարձակումով մը պիտի կրնան թաղել 6.000 հայութիւնը» [Թերզեան 1956: էջ 241]: Սակայն հաճընցիները լի էին վճռականությամբ: Նրանք իրենց կառավարիչ փաստաբան Կարապետ Չալյանի ղեկավարությամբ կազմում են Հաճընի ինքնապաշտպանության բարձրագույն խորհուրդը: Պաշտպանության հրամանատար են ընտրում Զորավար Անդրանիկի զինակից սպա Սարգիս Ծեպեճյանին: Կազմակերպում են 4 վաշտ, 60 հեծյալից բաղկացած էսկադրոն: Հաճընն ու իր շրջակայքը բաժանում են պաշտպանական 4 շրջանների: Փորում են խրամատներ, մարտական տրամադրությունը համակում է բոլորին: Զենք կրելու ընդունակ 16-50 տարեկան 1.200 տղամարդկանց բաժանվում է եղած-չեղած 132 հրա-

²² Թուրքալեզու երգի մեջ օգտագործված է հայերեն «կամավոր(լար/ներ)» բառը:

ցանը: Հետագայում ձեռք է բերվում մահ 300 հրացան, սակայն այդ ևս խիստ անբավարար էր բոլշևիկյան անսպառ ուժամթերքով զինված թուրքական բանակի դեմ կռվելու համար: Ի դեպ այդ փաստն է հաստատել մահ զենթունցի ականատես-վկա Հովսեփ Բշտիկյանը (ծնվ. 1903 թ.) իր պատմած հուշի մեջ [Սվ. 2000: Վկ. 138, էջ 260]:

Ահա թե ինչու զենքի խիստ կարիք զգացող հանրուցի-ներն անհամբերությամբ սպասում էին Ադամայի Ազգային մի-ության միջոցով դրսից ակնկալվող օգնությանը, որի շնորհիվ ոչ միայն զենք ու զինամթերք, այլև կռվող մոր ուժեր պիտի հասնեին: Սակայն ոչ մի օգնություն չի հասցվում և հանրուցի-ների վիճակը դառնում է հուսահատական, քանի որ ֆրանսիա-կան զինվորական բարձրաստիճան մերկայացուցիչները վա-րում էին երկդիմի քաղաքականություն: Թեպետ մրանք խոս-տացել էին ինքնապաշտպանության համար տրամադրել սննդամթերք, զենք ու զինամթերք, սակայն իրենց խոստումը ոչ միայն չեն հարգում, այլև թուրքերին տեղեկացնում են հայերի ինքնապաշտպանության կազմակերպման մասին: Հանրուցի ազատամարտիկները մեծ դժվարությամբ գրավում են թշնամու հսկա թնդանոթը, սակայն արկեր չեն գտնվում, որ կրակեն ու պաշտպանվեն: Սովը նեղում է հանրուցիների. «Ժողովուրդը կստիպուի ուտել կատու, մուկ, շուն, կաշի, ծառի կեղեւ, տրեխ» [Ասպետ 1961: էջ 242]: Այս փաստի մասին է վկայել մահ հանրուցի ականատես-վկա Ահարոն Մանկրյանը (ծնվ. 1903 թ.) իր պատմած հուշի մեջ [Սվ. 2000: Վկ. 145, էջ 271]:

Թշնամին նորանոր թնդանոթներով ու անհամար կանո-նավոր զորքով համալրում է իր ուժերը: Ութամսյա երկարատև ու համառ դիմադրությունից հետո թուրքերին հաջողվում է

հրետանու խաչածև կրակոցների հեղեղով ավերել ու հրկիզել մահ Հանրուցի քարաշեն տները: Հարյուրավոր քաջարի մար-տիկներ ընկնում են դիրքերում, հազարավոր հանրուցիներ անխնա կոտորվում են: Միայն 380 հոգու հաջողվում է կռվելով ճեղքել թշնամու պաշարման շղթան և դուրս գալ ահավոր հրդեհի շրջապատումից:

Հանրուցի ինքնապաշտպանական հերոսամարտի մասին ևս հյուսվել են երգեր, որոնք մինչև օրս երգվում են ժողովրդի կողմից.

*Երեք հարյուր հայ քաջերով,
Բոլոր զինված մոսիմներով,
Դողան բեյին մենք ջարդ տալով,
Հանրն ինկալ՝ «Վրե՛ժ» գոռալով*

[Սվ. 2000: Վկ. 553, էջ 451]:

«Վրե՛ժ» գոռալով ընկնում են մահ ընդհատումներով 314 օր հերոսաբար դիմադրած Այնթապը, հինավուրց քաղաքա-մայր Սիսը, քաջարի արծվաբույն Ջեյթունը, պատմական անց-յալ ունեցող Տարսոնը, առևտրի կենտրոն Ադաման և հայերով բնակեցված Կիլիկիայի այլևայլ բնակավայրեր:

Մարաշցի Վերգինե Մայիկյանը (ծնվ. 1898 թ.) իր պատմած հուշի մեջ անդրադառնում է մահ այդ ժամանակվա քաղաքական իրադարձություններին, որոնք հուսախաբ արե-ցին հայերին. «...Ֆրանսիական ու հայկական թերթերը միշտ գրում էին, որ Ֆրանսիան հավիտյան Կիլիկիայում կմնա, որով-հետև Ֆրանսիայի հեղինակությունն Առաջին համաշխարհա-յին պատերազմեն վերջը բարձրացել էր, իսկ Թուրքիային՝ ընդհակառակը: Բայց այդ խաղաղությունը, ափսո՛ւ, երկար չտևեց: Կամաց-կամաց զգացինք, որ թուրքերը կսկսեն ատել մեզի: Օր մըն ալ ելանք, որ ֆրանսիացիները իրենց ձիերուն սմբակներուն տակը քեչեն (թաղիք) կապեր են և սուս ու փուս

հեռացեր են Մարաշեն: Առտուն էլանք, զարմացանք, քանի որ ոչ ոք լուր չունեի այդ մասին: Նույնիսկ հայտնի Հակոբ աղա Խրլախյանին անգամ, որ ամբողջ ֆրանսիական բանակին պարենը ձրի ինքն էր մատակարարում, ժեներալ Դյումոնը ոչինչ չէր հայտնել իրենց հեռանալու մասին: Այնպես որ, 1920-ի սեպտեմբերին ֆրանսիական զորքն այլևս Մարաշում չէր...» [Սվ. 2000: Վկ. 148, էջ 273-274]:

Ֆրանսիական կառավարությունը, դրժելով իր դաշնակցային պարտավորությունները, 1921 թ. հոկտեմբերի 20-ին, Անկարայում կնքված պայմանագրով, Կիլիկիան հանձնում է թուրքերին՝ կոտորածի վտանգի մատնելով Կիլիկիայի հայությանը:

Թեպետ թուրքական կառավարությունը դաժանորեն ընկճում էր տարբեր վայրերում ծայր առած դիմադրողական-ինքնապաշտպանական հերոսամարտերը, սակայն իրենց մարդկային տարրական իրավունքների և ազգի ֆիզիկական գոյության համար մարտնչող անձնուրաց հայ հերոսները փայլուն հետք թողեցին հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմության մեջ:

Այդ ժամանակ է, որ Հայոց ցեղասպանության միլիոնավոր զոհերի վրեժը լուծեց ազգային հերոս Սողոմոն Թեհլերյանը՝ Բեռլինում սպանելով մեծ ոճրագործ Թալեաթ փաշային:

1921 թ. հունիսի 2-3-ին Բեռլինի շրջանային դատարանը, լսելով Թալեաթին սպանող Սողոմոն Թեհլերյանի գործը, արդարացրեց հայ վրիժառուին, քանի որ նա ի կատար էր ածել թուրքական տրիբունալի կայացրած մահապաշտոնը:

Հայ ժողովուրդն այդ ցնցող իրադարձությանը ևս բանաստեղծական շունչ է հաղորդել.

Թալեաթ փաշան փախավ Բեռլին.
Թեհլերյանը հասավ ետին,
Ջարկավ ճակտին՝ փոեց գետնին.
Գինի լի՛ց, ախպեր ջա՛ն,
Գինի լի՛ց, խմողաց անու՛շ:

Թալեաթ փաշան դրին հողը,
Հուրը դրկին ցնկած մորը,
Կեցցե՛ գերման դատավորը.
Գինի լի՛ց, ախպեր ջա՛ն,
Գինի լի՛ց, խմողաց անու՛շ

[Սվ. 2000: Վկ. 554, էջ 452]:

Թեպետ «գերման դատավոր»-ները, ըմբռնումով մոտեցան և արդարացրին հայ վրիժառուին, սակայն դրանով չբարվոքվեց արևմտահայության վիճակը:

1921 թ. Կիլիկիայի հայության պարպումից հետո հերթը հասել էր Անատոլիայի հայերին, որոնց մեծ մասն արդեն Եղեռնի ժամանակ անխնա կոտորվել էր, իսկ հրաշքով փրկվածներն իրենց գոյությունը շարունակում էին հունական գերիշխանության տակ գտնվող որոշ հայաբնակ վայրերում և հատկապես նավահանգիստ Ջմյուռնիայում (Իզմիր):

1922 թ. հրո ճարակ են դառնում նաև Ջմյուռնիայի հայկական և հունական թաղամասերը՝ քրիստոնյաներին քշելով ծովափ: Այդ ահասարսուռ իրադարձությունը ժողովրդի հիշողության մեջ մնացել է որպես «Իզմիրի աղետ»:

Երզնկացի վերապրող Գառնիկ Ստեփանյանի (ծնվ. 1909 թ.) հավաստմամբ. «...1922 թ., երբ Մուստաֆա Բեմալի զորքերը Իզմիրը վառեցին՝ բենզին, նավթ լցրին և եկեղեցիների մեջ լցված հայերին ու հույներին վառեցին...» [Սվ. 2000: Վկ. 95, էջ 201]:

Հուզումով վերհիշելով այդ ահավոր տեսարանները, աֆիոնգարահիսարցի վերապրող Արփինե Բարթիկյանը (ծնվ. 1903 թ.) ևս վկայել է իր տեսածները. «...Մեյ մըն ալ սկսավ միլիական (ազգայնական) շարժումը: Իզմիրը կրակի տվին: Առաջին կրակը Հայնոցը տվին: Ս. Ստեփանոս եկեղեցին այրեցին: Քանի որ բոլոր հայերը այդ եկեղեցին մտած էին, որ պաշտպանվեն: Վերջը հայերս փախանք, գնացինք ծովեզերք: Ծովին վրա լի՞քը նավակներ էին, բայց թուրքերը նախօրոք բոլոր նավակները ծակել էին, որ ջուրը լցվի ու հայերը չկրնան ազատվիլ: Նավակ էին նստում խեղճ հայերը, քիչ մը կլողար նավակը, վերջը՝ լը՛կ-լը՛կ, ջուրը կլեցվեր մեջը, բոլորը ծովի մեջ շուտ կուզային: Ծովի վրա լի՞քը ուռած մարմիններ էին: Մեզի տարան Բալչովա: Ծովում եզերքը փայտե բարաքներ կային, հոն լեցուցին: Սկսան մեզի աչքն անցնել: Սիրում աղջիկներում բռնում, քաշում, քաշքշում, տանում էին: Ես մանր-մունր պզտիկ աղջիկ էի՝ փեշերում տակը պահմտա: Մեր Մարիին երեսը մուր քսած էին ու մազերը խուզել էին. այլանդակ տեսք մը առած էր, նայեցին, չհավնեցան՝ եարամազ դրը (անպետք է) ըսին, ձգեցին, այսինքն՝ գործի չի գար, ոչ մեկին պետքը չէ: Անդիեն կլավեին թուրքերում ձայները, որ դանակները սրում էին, որ մեզի մորթեն: Հայ աղջիկ մը տեսավ, որ հերթը իրեն պիտի հասնի՝ ինքզինքը պատուհանեն վար նետեց, բայց չմեռավ: Վարը թուրք զինվորներ կան եղեր ... քանի մը օրեն ետքը բերին՝ արդեն անճանաչելի վիճակի մեջ...» [Սվ. 2000: Վկ. 197, էջ 334]:

Դերգորյան արքայի դրվագներից մեզ արդեն ծանոթ աֆիոնգարահիսարցի Սմբյուլ Բերբերյանը (ծնվ. 1909 թ.) նույնպիսի հուզումով և արցունքներով է վերհիշել նաև Իզմիրի աղետի ժամանակ իր աչքերով տեսածները. «...Հայերում, հույ

ներում ծովն էին գցում: Զահել, ահել, երեխա, մայր չէին նայում: Թուրք զինվորները խշտիկներով ծակծկում էին բոլորին, երեխաներին բռնում՝ գցում, մեծերին շարտում էին ծովը: Ծովին վրա լիքը դիակներ էին, ջուրը չէիր տեսնար: ...Հետո ուրիշ թուրք զինվորներ եկան, մեզ գտան: Բոլորիս կանգնեցրին, մեզնից երկու մարդու առանձնացրին, պառկեցուցին գետնին, սկսան անոնց կաշին քերթել և խնդալով՝ ըսել. «Կով ենք մորթում»: Մարդոց կաշին դժվարությամբ հանեցին: Էդ խեղճ մարդիկ բանգըր-բանգըր կբռնային: Վերջապես անոնց մաշկահան արեցին: ...Մի տեղ թուրքերը մեծ կրակ էին արել, մեջը հայերում էին գցում: Մամայիս բռնեցին, կրակի մեջ գցեցին, մենք՝ ես ու քույրս, սկսանք պոռալ, չկրցանք մորս կրակի միջից ազատել:...» [Սվ. 2000: Վկ. 200, էջ 336-337]:

Այնուհետև վերապրողը նույն հուզումով, արցունքներով ու հեկեկոցներով սկսել է երգել իր հորինած երկարապատում եղերերգը, որից մեջբերում ենք մի հատված.

Աֆիոնեն դուրս էկանք,
Իզմիր քաղաքը մտանք,
Ազիզ մորս չգտա.
Հոնգու՛ր-հոնգու՛ր լաց էղա:

Ա՛խ, մամա՛ ջան, խաբեցին,
Ինձի քեզնից բաժնեցին,
Քեզ ալ կրակը նետեցին.
Չըթը՛ր-չըթը՛ր այրեցին...

[Սվ. 2000: Վկ. 467, էջ 433]:

Դրությունն օրհասական էր ու անել. ետևը՝ հուր, առաջը՝ ջուր: Թո՛հ ու բո՛հի այդ գեհեմից ազատվում էին միայն նրանք, ովքեր իրենց մնացած վերջին ոսկեդրամներն ու զարդերը տալիս էին թուրքերին՝ իրենց կյանքը փրկելու համար,

իսկ նրանք, ովքեր ոչ մի միջոց չունեին, արհամարհելով մահը, նետվում էին ծովի հուժկու ալիքների մեջ՝ լողալով հասնելու հեռվում խարիսխ գցած եվրոպական դրոշմեր կրող շոգենավերին, որոնք հայ անտունիներին տանելու էին ուր որ պատահեր.

Անկե փախանք Հունաստան,

Ծառ շատերն ալ՝ Ֆրանսա,

Մեկալները՝ Եգիպտոս.

Սապես ցրվանք ամեն կողմ

[Սվ. 2000: Վկ. 468, էջ 433]:

Եվ ստեղծվեց Հայ Սփյուռքը որպես պատմական իրողություն:

Պապենական հողից արմատախիլ եղած հայ գաղթականներն անծանոթ երկրներում, անտեղյակ օտար լեզուներին ու օրենքներին, միայն էժան աշխատուժ էին, ինչքան էլ որ օտարների հիացմունքին արժանանային հայկական տոհմիկ արհեստավորների վարպետությունը և կամ՝ բազմաշնորհ հայ կանանց նրբագեղ ձեռագործներն ու գորգերը: Այնինչ ձուլումի, այլասերումի և մանավանդ գործազրկության սարսափը հանգիստ չէր տալիս աստանդական հայերին.

Օտարության մեջ ինկեր ենք,

Կուլամ կարոտո՛վ-կարոտո՛վ,

Հայ խնդիրը լուծվեր շուտով.

Համբերե՛, հոգի՛ս, համբերե՛:

Ուրախացիր, մի՛ չար տխուր,

Ուրքիդ վրա կայնի՛ր ամուր,

Ծուտով կլսես ներգաղթի լուր.

Համբերե՛, հոգի՛ս, համբերե՛

[Սվ. 2000: Վկ. 567, էջ 456]:

Ներգաղթի իրարահաջորդ քարավաններով սկսվում է անտուն ու անհայրենիք մնացած արևմտահայերի հայրենա-

դարձությունը դեպի Արևելյան Հայաստան. նախ՝ 1920-1930-ական թթ. Կոստանդնուպոլսից, Ֆրանսիայից և Հունաստանից: Ապա՝ 1946-1948 թթ.՝ զանգվածային հայրենադարձությունը Սիրիայից, Լիբանանից, Եգիպտոսից, Իրաքից, Ֆրանսիայից, Հունաստանից, բալկանյան երկրներից և հեռավոր Ամերիկայից...

Արևմտահայերը, վերաբնակվելով իրենց կորցրած պատմական Հայաստանից 10 անգամ փոքր հողատարածքի վրա, թեպետ ստեղծում են իրենց պատմական բնօրրանի հիշատակները խորհրդանշող ավաններ ու թաղամասեր, սակայն երբեմնի ավերակված տան, հանգած օջախի մրմուռը շարունակում է միսալ նրանց հիշողության մեջ, ու կորցրած Երկրի երազանքը հոգու կանչ դարձած՝ ավանդվում սերնդից սերունդ.

Երբ որ բացվին դռներն հույսի,

Եվ մենք Երկիր դառնանք կրկին,

Չքնաղ երկիր մեր Հայրենյաց,

Որ բռնությամբ առին մեզ մից:

Ցանկամ տեսնել իմ Կիլիկիան.

Օղը՝ մաքուր, ջուրը՝ զուլալ,

Ցանկամ տեսնել իմ Կիլիկիան.

Վանքեր, բերդեր հոնտեղ շա՛տ կան:

Երբ որ լուծվի Հայոց Հարցը,

Եվ մեզ տրվի նախնյաց հողը,

Մենք կվարենք մեր արտերը.

Կշենացնենք մեր գյուղերը:

Ցանկամ տեսնել Սասուն ու Վան,

Զեյթուն, Հաճըն և Մուսա Դաղ,

*Տարսոն, Մարաշ, Սիս ու Այնթապ,
Կծաղկացնենք մենք անպայման*

[Սվ. 2000: Վկ. 562, էջ 454]:

Հայրենադարձները Խորհրդային Հայաստան էին գալիս լի հույսերով ու հավատով: Գալիս էին հայրենադարձների խումներամ քարավանները՝ ոգեշնչված Երկրորդ Աշխարհամարտում Խորհրդային Միության նվաճած հաղթանակով և մանավանդ նրա 1945 թ. նոյեմբերի 1-ին Թուրքիային առաջադրած հայկական ու վրացական հողերի պաշտոնական պահանջով...: Ու մեծ հույսերի հետ բերնից բերան հյուսվում էր նաև ժողովրդական երգը.

*Հայաստան երթալ կուզեմ,
Երևան տեսնալ կուզեմ,
Արարատի գագաթին
Դրոշակ պարզել կուզեմ*

[Սվ. 2000: Վկ. 570, էջ 457]:

Եվ ժողովրդի երգը հնչում է որպես պահանջատիրություն.

*Կուզե՛նք զայն, կուզե՛նք զայն.
Մերն է Կարսն ու Արդահան...
Կարս-Արդահանը մեզի
Պիտի շուտով դարձվի,
Որ այդ հողերն ամայի
Փոխակերպենք դրախտի*

[Սվ. 2000: Վկ. 575, էջ 457]:

Սակայն թուրքական դիվանագետները, հանցավոր մոռացության մատնելով մոտիկ անցյալում կատարված պատմական այդ բոլոր իրադարձությունները, պատասխանում են. «Ոչ ոքի պարտք ունինք թուրք հողերէն ու իրավունքներէն: Պիտի ապրինք իբրեւ պատուաւոր մարդիկ, պիտի մեռնինք իբրեւ պատուաւոր մարդիկ» [Լազեան 1946: էջ 372-373]:

Այնինչ, ինչպես վկայում են Հայոց ցեղասպանության պատմական ստույգ փաստերը, ականատես վերապրողներից մեր գրառած 600 և բազմահազար այլ վկայությունները, օսմանյան Թուրքիայի անցյալը երբեք էլ «պատվավոր» չի եղել:

Ինչպես որ խարբերոցի ականատես-վկա Հակոբ Հոլոբիկյանը (ծնվ. 1902 թ.), մանրամասնորեն նկարագրելով իր և իր հայրենակիցների կրած տառապանքները, եզրակացրել է. «...*Թուրք իթթիհատականների կողմից կատարված այս ոճրագործությունը երբեք չի՝ մոռացվի և չպե՛տք է ներվի*» [Սվ. 2000: Վկ. 109, էջ 222]:

Իսկ ծագումով կարսեցի նկարչուհի Ելենա Աբրահամյանը (ծնվ. 1912 թ.) իր տխուր հուշը արցունքներով պատմելուց հետո եզրակացրել է. «...*Թուրքերը չեն ընդունում, որ հայերին կոտորել են: ...Թուրքը թուրք է: Նա ինչ շապիկ էլ հագնի, նույն թուրքն է: Նա, որ չի ընդդունում հայոց ցեղասպանությունը, հապա էդ ինչե՛ր են, որ մենք մեր աչքերով տեսել ենք, մեր ականջներով լսել: Դեռ իմ տեսածները մի կաթիլ է թուրքի արածների դեմ: Թուրքիան դեռ 1920 թ. իրեն բոլշևիկ էր ձևացնում: Բայց թուրքը թուրք է: Եթե թուրքը չընդունի իր արածները, ոչ մի հաշտության չի կարելի գնալ նրա հետ*» [Սվ. : Անտիպ հուշեր]:

Իր պատմած հուշի ավարտին իգդիրեցի Էվելինա Կանայանը (ծնվ. 1909 թ.) հուզված, բայց ինքնավստահ հայտարարել է. «...*Եթե նույնիսկ ՄԱԿ-ից գան, ես կպատմեմ իմ տեսածները...*» [Սվ. 2000: Վկ. 54, էջ 136-137]:

Իսկ Մուկեից Ղուկաս Կարապետյանը (ծնվ. 1901 թ.) ընդհանրացնելով ասել է. «...*Այն ինչ կատարվել է 1915 թվին, երբեք չի մոռացվի: Թուրքերը ուզում են մոռացվի այդ բոլորը և չեն ընդունում, բայց Աստված թող լինի օգնական և արդար*

դատավոր մեզ՝ հայերիս համար» [Սվ. 2000: Վկ. 52, էջ 130]:

Մինչդեռ այսօրվա թուրքական քարոզչությունն ու պատմագիտությունը ջանք չեն խնայում խեղաթյուրելու պատմական ստույգ փաստերը, սերունդներից խնամքով թաքցնելով թուրքական պետության իրագործած Հայոց ցեղասպանությունը: Նրանք փորձում են շրջանցել պատմական այն ճշմարտությունը, որ թուրքական պետական մարմինները դեռևս 1919 թ. սկզբից իրենք իսկ ձեռնամուխ են եղել երիտթուրքական ոճրագործների դատավարությունը կազմակերպելուն: Իսկ ավելի ուշ, երբ բացահայտվեց արդեն Թուրքիայի Հանրապետության Առաջին Նախագահ դարձած Մուստաֆա Քեմալի դեմ երիտթուրքերի կազմակերպած դավադրությունը, “Los Angeles Examiner” թերթին (1926 թ. օգոստոսի 1) տված հարցազրույցում ինքը՝ Քեմալ Աթաթյուրքը, նույնպես դատապարտել է. «Նախկին երիտթուրքական կուսակցության այդ մնացորդները, կուսակցություն, որը պետք է պատասխան տար մեր միլիոնավոր քրիստոնյա հպատակների կյանքի համար, որոնք անգթորեն քշվեցին զանգվածաբար իրենց բնակավայրերից և ոչնչացվեցին...» [Փափազյան 2000: էջ 87]:

Ցավոք միջազգային հանրությունը ևս ժամանակին չսաստեց և ըստ արժանվույն չդատապարտեց 20-րդ դարում իրագործված առաջին՝ Հայոց ցեղասպանությունը (Armenian Genocide) և, որպես տրամաբանական շարունակություն, ծնունդ առավ ֆաշիզմը (Fascism), իսկ մեր օրերում՝ միջազգային ահաբեկչությունը (Terrorism) իր անկանխատեսելի դրսևորումներով և համաշխարհային աղետալի վտանգավորությամբ, քանի որ անպատիժ մնացած հանցագործությունները

կրկնվում են ի վնաս մարդկության:

Այսպիսով, անհետ կորստից փրկված, սերունդներին ավանդվող ականատես վերապրողների հաղորդած հուշերն ու պատմական բնույթի երգերն իրենց պատմաճանաչողական արժեքով դառնում են Հայոց ցեղասպանությունը և դրան հաջորդած պատմական իրադարձությունները ժողովրդական պարզ լեզվով լուսաբանող վկայություններ, հավաստի, առարկայական և փաստագրական վավերագրեր, որոնք ոչ միայն անցյալի վկայությունն են, այլև՝ ապագայի նախազգուշացում:

Ահա թե ինչու առանձնապես կարևորվում է Հայոց ցեղասպանության պատմական ողջ ընթացքի, անմեղ նահատակների ու կորցրած Երկրի մասին ականատես վերապրողների փաստավավերական, ժողովրդական վկայությունները սույն ուսումնասիրությամբ լույս աշխարհ հանելն ու գիտական շրջանառության մեջ դնելը, քանզի ցեղասպանությունը ոճիր է, որը բացահայտվելու է նաև վկաների օգնությամբ: Իսկ ամենամեծ վկան ինքը՝ Ժողովուրդն է, որը, ցավագնորեն վերապրելով, պատմել ու դեռ շարունակում է պատմել՝ վկայելով իր ողբերգական անցյալը: Անցյալ, որը հայ ժողովրդի անցյալն է, նրա պատմությունը, նրա պատմական հավաքական հիշողությունը, որը պետք է ներկայացվի աշխարհին ու մարդկության արդար դատին:

Ուստի ժամանակն է, որ առաջադիմության ճամփան բռնած ներկայիս Թուրքիայի Հանրապետության կառավարությունը և քաջությունն ունենա ընդունելու ինչպես գրավոր, նույնպես և բանավոր փաստերով հիմնավորված, ապացույման կարիք չունեցող, պատմական այս բացահայտ ճշմարտությունը, որը կոչվում է Հայոց ցեղասպանություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը և հայկական եղեռնի գաղտնիքները, Երևան, 1990:

Անդրեասեան Տիգրան, *Ջէյթունի տարագրությունը և Սուեշիոյ ապստամբությունը*, Հալէպ, 1935:

Անտոնեան Արամ, *Մեծ ոճիրը*, Բոսթոն, 1921:

Արամ Ասպետ, *Դրուագներ Հաճընոյ հերոսամարտէն*, Պէյրութ, 1961:

Արզումանյան Մակիչ, *Հայաստան. 1914-1917*, Երևան, 1969:

Բարսեղյան Լավրենտի, *Հայոց ցեղասպանության հրապարակայնորեն դատապարտման և ճանաչման ժամանակագրություն (1915-2000 թթ.)*, Երևան, 2001:

Գալուստեան Գրիգոր, *Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Ջէյթուն*, Նիւ Եորք, 1934:

Գուշագճեան Մարտիրոս, *Յուշամատենան Մուսա Լերան*, Պէյրութ, 1970:

Թէմիրեան Ա., *Բեսապ (1909-1946)*, Պէյրութ, 1956:

Թէրզեան Ս. Յ., *Հաճընի ութամսեայ դիւցազնամարտը*, Պուենոս-Այրես, 1956:

Թորոսյան Շմավոն Թ., *Կիլիկիայի հայերի ազգային ազատագրական շարժումները 1919-1920 թթ.*, Երևան, 1987:

Թումանյան Հովհաննես, *Երկերի ժողովածու*, հ. 6, Երևան, 1959:

Լազեան Գաբրիէլ, *Հայաստան եւ Հայ դատը (վավերագրեր)*, Գահիրէ, 1946:

Կարապետյան Մհեր, *Հայոց 1915-1916 թվականների ցեղասպանության հարցերը հայ պատմագրության մեջ*, Երևան, 1998:

Կիրակոսյան Զոն, *Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը*, Երևան, 1965:

Կիրակոսյան Զոն, *Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ*, Երևան, 1983:

Համբարյան Ազատ Ս., *Արևմտահայերի 1915 թ. կոտորածները և ինքնապաշտպանական մարտերը*, Երևան, 1990:

Հայկազ Արամ, *Շապին-Գարահիսարն ու իր հերոսամարտը*, Նիւ Եորք, 1957:

Հայկունի Սարգիս, *Կորած ու մոռացուած հայեր. Տրապիզոնի հայ-մահմետական գիւղերն ու նրանց աւանդութիւնները*, «Արարատ», Վաղարշապատ, 1895, էջ 297:

Ծիգմէճեան Մանուկ, *Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց 1890-1925*, Ֆրէզնո, 1930:

Մեսրոպ Լեւոն, *Տէր Զոր*, հ. Ա, Բ, Փարիզ, 1952, 1955:

Յիշատակարան նուիրուած Վասպուրականի 1890-ի և 1915-ի հերոսամարտերուն, Հիւս. Ամերիկա, 1945:

Յուշամատենան Մեծ եղեռնի, Պէյրութ, 1965:

Ներսիսյան Մկրտիչ, *Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու)*, Երևան, 1991:

Պապիկեան Յակոբ, *Ատանայի եղեռնը*, «Տեղեկագիր», Կ. Պոլիս, 1919:

Պողոսեան Կ. Պ., *Հաճընի ընդհանուր պատմությունը*, Լոս Անճելէս, 1942:

Պողոսյան Հայկազ Մ., *Ջէյթունի պատմությունը*, Երևան, 1969:

Սահակեան Ա., *Դիւցազնական Ուրֆան և իր հայորդիները*, Պէյրութ, 1955:

Սահակյան Ռուբեն Գ., *Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ.*, Երևան, 1970:

Սարաֆեան Գեորգ, *Պատմություն Անթեպի հայոց*, հ. Ա և Բ, Լոս Անճելես, 1953:

Սվազյան Վերծինե, *Մուսա լեռ*, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 16, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1984:

Սվազյան Վերծինե, *Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը*, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 1994:

Սվազյան Վերծինե, *Մեծ եղեռն. Արևմտահայոց բանավոր վկայություններ*, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 1995:

Սվազյան Վերծինե, *Մեծ եղեռնը արևմտահայոց հուշապատումներում և թուրքալեզու երգերում*, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1997:

Սվազյան Վերծինե, *Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ*, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000:

Սվազյան Վերծինե, *Անձնական արխիվ*, Անտիպ նյութեր: Տատրեան Վահագն, *Հայկական ցեղասպանությունը յետպատերազմեան օսմանեան խորհրդարանին մէջ*, «Պայքար», թիւ 4, Երևան, 1995:

Փափազյան Ավետիս, *Ծեղասպանություն և գոյատևման պայքար*, Երևան, 2000:

Քելլեշեան Միսաք, *Սիւ-Մատեան*, Պէյրութ, 1949:

Свазьян Вержине. *Геноцид в воспоминаниях и туркоязычных песнях западных армян*. Ереван, Изд. "Гитутюн" НАН РА, 1997.

Adalian, Rouben. *Remembering and Understanding the Armenian Genocide*. Yerevan, 1995.

Akçam, Taner. *The Genocide of the Armenians and the Silence of the Turks*. Toronto, 1997.

Armenian Genocide Resource Guide. Washington, 1988.

Bardakjian, Kevork B. *Hitler and the Armenian Genocide*. Cambridge, 1985.

A Crime of Silence. The Armenian Genocide. Cambridge, 1985.

Dadrian, Vahakn. *Documentation of the Armenian Genocide in Turkish Sources*. London, 1991.

Dadrian, Vahakn. *The History of the Armenian Genocide. Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus*. Providence, Oxford, 1995.

Fein, Hellen. *Denying Genocide: From Armenia to Bosnia*. London, 2001.

Hovannisian. Richard G., ed. *The Armenian Genocide in Perspective*. New Brunswick, Oxford, 1988.

Hovannisian, Richard G. *Denial of the Armenian Genocide With Some Comparisons to Holocaust Denial*. Australia, 1997.

Hovhannisyan, Hikolay. *The Armenian Genocide: Armenocide. Causes, Commission, Consequences*. Yerevan, 2002.

Kloian, Richard D. *The Armenian Genocide. News Accounts From the American Press (1915-1922)*. Berkeley, 1985,

Pinon, René. *La suppression des Arméniens. Méthode allemande - travail turc.* Paris, 1916.

Svazlian, Verjine. *The Armenian Genocide in the Memoirs and Turkish-Language Songs of the Eye-Witness Survivors.* Yerevan, "Gitutian" Publishing House of the NAS RA, 1999.

Véou, P. du. *La passion de la Cilicie. 1919-1922.* Paris, 1954.

ВЕРЖИНЕ СВАЗЛЯН
ГЕНОЦИД АРМЯН И ИСТОРИЧЕСКАЯ
ПАМЯТЬ
(Резюме)

За последние годы еще более возрос интерес к Геноциду армян. Это обусловлено прежде всего признанием факта Геноцида армян (1915-1922 гг.) со стороны многих государств. Однако турецкая историография продолжает искажать достоверные исторические события.

В этом смысле, помимо опубликованных на разных языках официальных материалов, важный историко-фактологический интерес представляют также создававшиеся под непосредственным впечатлением названных событий народные свидетельства, которые по разным причинам не были записаны и исследованы.

Ведь армянский народ сам являлся объектом данного массового преступления. И точно так же, как при раскрытии любого преступления определяющим является показания свидетелей, и в этом случае следует опираться на показания очевидцев-свидетелей.

Каждое из этих показаний имеет доказательственное значение для справедливого решения Армянского Вопроса и признания Геноцида армян.

Вследствие депортации и геноцида значительная часть западных армян была уничтожена (более чем 1.5 миллиона), а чудом спасшиеся расселились в различных странах мира, создав Армянскую Диаспору как историческое явление.

Многие из очевидцев-свидетелей этих трагических событий периодически репатриировали в Советскую Армению и поселились во вновь отстроенных селениях, символизирующих их некогда былую колыбель.

В настоящем исследовании представлены исторические события Геноцида армян, которые дополнены, обоснованы и подтверждены свидетельствами и историческими песнями (на армянском и турецком языке) очевидцев, депортированных из 70 местностей Западной Армении, Киликии и Анатолии и проживающих в Армении и Диаспоре (Греция, Франция, Италия, Германия, США, Сирия, Ливан, Ирак, Египет, балканские страны, Турция).

Эти фактологические свидетельства правдиво

отображают организованные младотурками воинские призывы и военные сборы во время Первой мировой войны, а также массовые высылки и бойни армян.

Народоведческие материалы цитируются по нашей книге: Вержине Свазлян. *Геноцид армян. Свидетельства очевидцев*. Ереван, Изд.-во "Гитутюн" НАН РА, 2000, 500 стр. (на арм. языке).

В течение 50 лет нами записанные (на бумаге, а также на аудио- и видеокассетах) народоведческие материалы (600 единиц) своей самобытностью и историко-познавательной ценностью становятся достоверными, объективными, фактологическими, документальными свидетельствами, простым народным языком отображающими события Геноцида армян.

VERJINÉ SVAZLIAN
LE GÉNOCIDE DES ARMÉNIENS ET LA
MÉMOIRE HISTORIQUE

(Résumé)

Durant ces dernières années l'intérêt envers le Génocide des Arméniens (1915-1922) a augmenté grâce, en premier lieu, au fait de la reconnaissance de cette évidence historique par de nombreux États. Cependant, l'historiographie turque continue à dénaturer ces faits historiques certains.

Dans ce sens, les impressions immédiates de ces événements qui nous ont été communiquées sont, outre les documents officiels publiés en langues diverses, d'un intérêt historique et factologique important; pourtant, ils n'ont pas été inscrits et étudiés pour des raisons différentes.

Puisque la nation arménienne elle-même est l'objet de ce crime massif et, comme dans l'élucidation de chaque crime les témoignages des témoins oculaires sont décisifs, dans ce cas également, les témoignages des témoins-survivants sont d'une importance primordiale, d'autant que chacun de ces témoignages a une valeur probante dans la solution équitable de la Cause Arménienne et dans la reconnaissance du Génocide des Arméniens.

Par suite de la déportation et du génocide, la majeure partie des arméniens de l'Arménie Occidentale (plus de 1.5 million) a été exterminée et ceux qui ont été miraculeusement sauvés, se sont dispersés dans différents pays du monde, créant ainsi la Diaspora Arménienne en tant qu'un fait historique.

Plusieurs des témoins-survivants de ces événements tragiques ont été rapatriés périodiquement de la Diaspora en Arménie Soviétique et se sont établis dans de bourgs nouvellement construits qui portent le nom de leurs berceaux natifs.

La présente étude représente les événements historiques du Génocide des Arméniens, qui ont été complétés, argumentés et confirmés par les témoignages et les chants de caractère historique (en langues arménienne et turque) communiqués par les témoins oculaires sauvés par miracle du Génocide des Arméniens, forcement déportés des 70 localités de l'Arménie Occidentale, de la Cilicie et de l'Anatolie établis en Arménie et dans la Diaspora (Grèce, France, Italie, Allemagne, Etats-Unis, Syrie, Liban, Iraq, Egypte, les pays Balkaniques, Turquie).

Ces témoignages factologiques reflètent d'une façon véridique le recrutements des soldats, la collection des armes, ainsi que les déportations massives et les massacres des Arméniens organisés par les Jeunes Turcs pendant la Première Guerre mondiale.

Ces matériaux ethnographiques ont été rapportés de notre ouvrage: Verjiné Svazlian. *Le Génocide des Arméniens. Témoignages des Survivants*. Érévan, Éditions "Guitoutiun" ANS RA, 2000, 500 p. (en arménien).

Les matériaux populaires que nous avons inscrit, enregistré sur bande magnétique et bande vidéo (600 unités) pendant près de 50 ans deviennent, par leur originalité et leur valeur historique et cognitive, des témoignages objectifs, factologiques, certains et authentiques élucidant, dans un langage simple et populaire, le Génocide des Arméniens.

VERJINÉ SVAZLIAN
THE ARMENIAN GENOCIDE AND THE
HISTORICAL MEMORY

(Summary)

During the past few years, interest toward the Armenian Genocide (1915-1922) has grown, due, primarily, to the fact of the recognition of this historical evidence by numerous States. Turkish historiography, however, continues to distort the true historical facts.

In this respect, the popular testimonies created under the immediate impressions of the said events and communicated to us are also, besides the official documents published in various languages, of an important historico-factual interest; nevertheless, they had not been written down and studied for different reasons.

Inasmuch as the Armenian nation itself is the object of that massive crime and, as in the elucidation of every crime the testimonies of the eyewitnesses are decisive, similarly in this case, the testimonies of the eyewitness-survivors are of prime importance, since each one of these testimonies has an evidential significance in the equitable solution of the Armenian Case and in the recognition of the Armenian Genocide.

As a result of the deportation and the genocide, a

considerable part of the Western Armenians (more than 1.5 million) was exterminated, while those who were miraculously saved were dispersed in different countries of the world, creating the Armenian Diaspora as a historical reality.

Many of the eyewitness-survivors of these tragic events have periodically been repatriated from the Diaspora to Soviet Armenia and settled in the newly-built localities symbolizing their former native cradles.

The present study represents the historical events of the Armenian Genocide, which have been completed, substantiated and confirmed by the testimonies and the songs of historical nature (in Armenian and Turkish) communicated by the eyewitness-survivors of the Armenian Genocide, forcibly deported from 70 localities of Western Armenia, Cilicia, Anatolia and established in Armenia and the Diaspora (Greece, France, Italy, Germany, USA, Syria, Lebanon, Iraq, Egypt, the Balkan countries, Turkey).

These factual testimonies authentically reproduce the mobilization, the arm-collection, as well as the massive deportations and the massacres of the Armenians organized by the Young Turks during the First World War.

These ethnographic materials have been quoted from our book: Verjiné Svazlian. *The Armenian Genocide. Testimonies of the Eyewitness-Survivors*. Yerevan, "Gitutian" Publishing House NAS RA, 2000, 500 p. (in Armenian).

The popular materials we have written down, audio- and video-recorded (600 units) during about 50 years become, with their originality and their historico-cognitive value, objective, factual, reliable and authentic testimonies elucidating in simple, popular language the Armenian Genocide.



ՆԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ բանահավաք, բանագետ, ժողովրդագետը ծնվել է 1934 թ. Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում, Նայոց ցեղասպանությունից մազապուրծ, գրող-հասարակական գործիչ Գառնիկ Սվազլյանի ընտանիքում:

1947 թ. ծնողների հետ հայրենադարձվել է Մայր Նայասփան:

1956 թ. «Գերազանցությամբ» ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան Նայկական պետական մանկավարժական ինստիտուտի Նայոց լեզվի և գրականության բաժինը:

1955 թվականից անձնական նախաձեռնությամբ սկսել է գրի առնել և անհետ կորստից փրկել Արևմտահայաստանից, Կիլիկիայից և Անապոլիայից փառագրված հայրենադարձների

փարբեր բարբառներով հաղորդած բանահյուսական նշիւարներն ու Նայոց ցեղասպանությունից վերապրած ականափես-վկանների պատմած հուշերն ու պատմական բնույթի երգերը:

1955 թվականից աշխատել է Նայասփանի գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտում: Ասպիրանտական ուսումնառության ընթացքում եղել է Մ. Աբեղյանի անվան անհատական թոշակառու:

1961 թվականից աշխատում է ՆՏ ԳԱԱ Ննագիտության և ազգագրության ինստիտուտում, իսկ 1996 թվականից՝ նաև ՆՏ ԳԱԱ Նայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում:

1965 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1995 թ.՝ դոկտորական թեզերը:

Մասնակցել է հանրապետական և միջազգային մի շարք գիրաժողովների՝ հանդես գալով բանագիտությանը, ժողովրդագիտությանն ու Նայ Դարին առնչվող թեմաներով:

Նեղինակ է նաև բազմաթիվ գիրական հրատարակությունների, որոնք լույս են տեսել Նայրենիքում և Սփյուռքում:

Աշխատությունները.

«Սարգիս Հայկունի. *Կյանքն ու գործը*», Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 4, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1973:

«Արցախ-Ուտիք», Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 6, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1973:

«Տարոն-Տուրուբերան», Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 12, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1984:

«Մուսա լեռ», Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 16, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1984:

1985 թ. նա արժանացել է ՀՍՍՀ ԳԱ Նախագահության «Գրականագրին»:

Նույն թվականին «Մուսա լեռ» Հայրենակցական Ընդհանուր միությունը նրան շնորհել է «Պատուաւոր Մուսալեոցի» Ոսկե մեդալ:

«Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 1994:

Նույն թվականին «Զեյթուն» Պատմա-մշակութային միությունը նրան շնորհել է «Պատվավոր Զեյթունցի» կոչում:

«Մեծ Եղեռն. Արևմտահայոց բանավոր վկայություններ», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 1995:

«Մեծ Եղեռնը արևմտահայոց հուշապատումներում և թուրքալեզու երգերում», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 1997:

“Геноцид в воспоминаниях и туркоязычных песнях запавных армян.” Изд. “Гитутюн” НАН РА, Ереван, 1997.

«Վան-Վասպուրական», Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 15, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 1998:

1999 թ. «Վան-Վասպուրական» Հայրենակցական միությունը նրան շնորհել է «Պատվավոր Վասպուրականցի» կոչում:

“The Armenian Genocide in the Memoirs and Turkish Language Songs of the Eye-Witness Survivors.” “Gitutiu” Publishing House of the NAS RA, Yerevan, 1999.

«Պոլսահայոց բանահիւսութիւնը», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2000:

«Հայոց Ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2000:

2000 թվականի ապրիլի 24-ին, Հայոց Ցեղասպանության 85-ամյակի առթիվ նա արժանացել է ՀՀ ԳԱԱ Նախագահության «Պատվոգրին» Հայկական Հարցի, Հայոց Ցեղասպանության և Սփյուռքահայության պատմության ուսումնասիրության բնագավառում գիտական հետազոտությունների համար, որոնք կարևոր ներդրում են հայ պատմագիտության մեջ:

2002 թվականին արժանացել է Թեքեյան Մշակութային Միության «Հայկաշէն Ուզունեան» գրական-բանասիրական մրցանակին:

2003 թվականին ՀՀ ԳԱԱ Նախագահությունը և «Ճշմարիտները հայերի համար» միջազգային կոմիտեն նրան շնորհել են Ֆրիտյոֆ Նանսենի անվան «Հուշամեդալ» Հայոց ցեղասպանության դատապարտման և մարդասիրական սկզբունքների հաստատման ուղղությամբ ծավալած գիտական և հասարակական գործունեության համար:

ՎԵՐԺԻՆԵ ԳԱՌՆԻԿԻ ՍՎԱԶԼՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ
ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Համակարգչային շարվածքը՝

Քնարիկ Ավագյանի

Համակարգչային ձևավորումը՝

Նաիրա Միքայելյանի

Տպագրված է ՀՀ ԳԱԱ տպարանում: Տպաքանակ՝ 500:

PHOTOGRAPHS OF THE EYEWITNESS SURVIVORS OF THE ARMENIAN GENOCIDE



Senekerim Kozmanian
(1882, Sebastia)



Movses Panossian
(1885, Moussa Dagh)



Vardan Mazmanian
(1886, Ardvin)



Azniv Agha-Chrakian
(1886, Constantinople)



Yeghiazar Karapetian
(1886, Sassoun)



Paydsar Yerkat
(1887, Kayseri)



Poghos Soupkoukian
(1887, Moussa Dagh)



Hovhannes Paronian
(1890, Eskişehir)



Mushegh Hakobian
(1890, Nicomedia)



Movses Balabanian
(1891, Moussa Dagh)



Dolorés Zohrap-Lipman
(1892, Constantinople)



Khacher Ablapootian
(1893, Urfa)



Kamsar Khachatrian
(1898, Bayazet)



Verginé Mayikian
(1898, Marash)



Tonik Tonikian
(1898, Moussa Dagh)




Khoren Ablapootian
(1893, Urfa)



Tonakan Tonoyan
(1893, Moosh)




Ovsanna Abikian
(1893, Nicomedia)



Hambartsum Sahakian
(1898, Sebastia)



Verjin Taghavarian
(1898, Sebastia)



Harutyun Martikian
(1899, Harpoot)



Harutyun Tsulikian
(1896, Kayseri)



Hovhannes Ipredjian
(1896, Moussa Dagh)



Endsa Jemberjian
(1898, Amassia)



Gevorg Karamanukian
(1900, Ayntap)



Khoren Gyulbenkian
(1900, Devrik)



Gyurdji Keshishian
(1900, Zeytoun)



Sghomon Yetenekian
(1900, Mersin)



Barouhi Silian
(1900, Nicomedia)



Artavazd Ktradsian
(1901, Adabazar)



Hazarkhan Torossian
(1902, Balou)



Arakel Tagoyan
(1902, Derjan)



Hovhannes Gasparian
(1902, Eskishehir)



Sokrat Mkrtchian
(1901, Bitlis)



Shogher Tonoyan
(1901, Moosh)



Petros Safarian
(1901, Moussa Dagh)



Nerses Galbakian
(1902, Konia)



Zabel Vardian
(1902, Marash)



Souren Sarkisian
(1902, Sebastia)



Asatoor Soupoukian
(1901, Moussa Dagh)



Geghetsik Yessayan
(1901, Nicomedia)



Andranik Simonian
(1902, Alashkert)



Nouritsa Kyurkdjian
(1903, Ayntap)




Arpiné Bartikian
(1903, A.-Garahissar)



Nvard Ablapootian
(1903, Urfa)



Hovsep Bshtikian
(1903, Zeytoun)



Sedrak Gaybakian
(1903, Zeytoun)



Karapet Tozlian
(1903, Zeytoun)



Gyulinia Moossoyan
(1903, Kessab)



Mikael Keshishian
(1904, Adana)



Garnik Svazlian
(1904, Kayseri)



Eva Chulian
(1903, Zeytoun)



Loris Papikian
(1903, Erzroom)



Sarkis Khachatrian
(1903, Harpoot)



Sedrak Harutyunian
(1904, Moosh)



Aghassi Kankanian
(1904, Van)




Hovhannes Kyoroghlian
(1904, Tigranakert)



Grigor Gyoazian
(1903, Moussa Dagh)



Arshakouhi Petrossian
(1903, Yozghat)



Hovhannes Abelian
(1903, Kessab)



Harutyun Alboyadjian
(1904, Fendedjak)



Anooosh Gasparian
(1905, Ardvin)



Arshaluys Ter-Nazaretian
(1905, Babert)



Marie Vardanian
(1905, Malatia)



Davit Davitian
(1905, Moussa Dagħ)



Andreas Gyulanian
(1905, Shatakħ)



Sarkis Yetarian
(1907, A.-Garahissar)



Stepan Stepanian
(1907, Harpoot)



Angele Tekeyan
(1907, Kayseri)



Hayrik Mouradian
(1905, Shatakħ)




Varsik Abrahamian
(1905, Van)



Sirak Manassian
(1905, Van)



Veronica Berberian
(1907, Yozghat)



Mkrtich Khachatryan
(1907, Sh.-Garahissar)



Gevorg Zoolalian
(1907, Chanakkale)



Petros Kikishian
(1906, Arabkir)



Yebrouhi Djertekhian
(1906, Hadjn)



Patrik Saroyan
(1906, Van)



Ghazar Gevorgian
(1907, Van)



Ardsrun Harutyunian
(1907, Van)



Yervand Shirakian
(1907, Van)



Makrouhi Sahakian
(1907, Van)



Haykouhi Azarian
(1908, Adabazar)



Davit Davtian
(1908, Bursa)



Kadjberouhi Shahinian
(1908, Van)



Vardouhi Potikian
(1908, Van)



Loussik Martirossian
(1909, Alashkert)



Mariam Ter-Mkrтчian
(1908, Erzroom)



Levon Evrengedjian
(1908, Marash)



Hrant Gasparian
(1908, Moosh)



Srbouhi Kikishian
(1909, Arabkir)



Aghavni Mkrтчian
(1909, Bitlis)



Avetis Norikian
(1909, Bursa)



Hovhannes Chaderdjian
(1908, Sebastia)



Nshan Abrahamian
(1908, Van)



Silva Byuzandian
(1908, Van)



Garnik Stepanian
(1909, Yerznka)



Gayané Atoorian
(1909, Zeytoun)



Ishkhan Haykazian
(1909, Erzroom)



Sirarpi Svazlian
(1909, Constantinople)



Aram Momdjian
(1909, Marash)



Mariam Baghdishian
(1909, Moussa Dagh)




Massis Kodjoyan
(1910, Babert)



Dsaghik Chinimian
(1910, Igdır)



Peproné Tumassian
(1910, Kars)



Gevorg Chiftchian
(1909, Van)



Varazdat Harutyunian
(1909, Van)



Marie Yerkat
(1910, Adabazar)



Verginé Nadjarian
(1910, Malatia)



Mesrop Minassian
(1910, Samsun)



Hovhannes Dudaklian
(1910, Moussa Dagh)



Nvard Gevorgian
(1910, Alashkert)



Nektar Gasparian
(1910, Ardvin)



Stepan Hovakimian
(1910, Ardvin)



Ardsvik Terzian
(1910, Van)



Rehan Manukian
(1910, Taron)



Karapet Mkrtchian
(1910, Tigranakert)



Sarkis Saroyan
(1911, Balu)



Srbouhi Mouradian
(1911, Bitlis)



Hrant Khondkarian
(1911, Igdir)




Parandzem Ter-Hakobian
(1912, Kars)



Tagouhi Halabian
(1912, Marash)



Derenik Saroyan
(1912, Van)



Asatoor Makhoolian
(1911, Moussa Dagh)




Vardges Alexanian
(1911, Van)



Shoghik Mkrtchian
(1911, Van)



Marie Voskerchian
(1913, Izmir)



Aghassi Karoyan
(1913, Kars)



Sahak Bazian
(1913, Shatak)



Yeranouhi Chaparian
(1912, Adana)



Nvard Mouradian
(1912, Bitlis)



Khanuma Djalil
(1912, Kars)



Emma Asatrian
(1914, Kars)



Shaké Zoolalian
(1914, Constantinople)



Vardouhi Petikian
(1916, Constantinople)

**PHOTOGRAPHS OF THE
FOLLOWING GENERATION OF THE
EYEWITNESS SURVIVORS**



Zohrap Ghassabian
(1919, Constantinople)



Hakob Ter-Poghossian
(1920, Deurtyol)




Mariam Ghassabian
(1921, Bursa)



Grigor Ekizian
(1921, Malatia)



Adriné Alajajian
(1921, Constantinople)



Kirakos Danielian
(1923, Balou)



Yervand Albarian
(1923, Beirut)



Vahe Kitapjian
(1924, Alexandria)



Nazeni Satamian
(1926, Beirut)




Artashes Balabanian
(1926, Moussa Dagh)



Mariam Mirzayan
(1927, Tomarza)



Gevorg Hekimian
(1937, Aleppo)



Map illustrating the Armenian genocide, showing the Ottoman Empire and surrounding regions. The map highlights the main directions of displacement (red arrows) and the locations of concentration camps (black dots). Key cities and regions are labeled, including Constantinople (Istanbul), Ankara, and various provinces like Cilicia, Syria, and Mesopotamia. The map also shows the Black Sea, Mediterranean Sea, and Persian Gulf.

Legend:

- Border of Eastern provinces
- State border
- Concentration camps
- Centers of displacement and genocide
- ⊙ Crossroad points of displacement
- Final points for displacement
- Additional points for displacement
- Main directions of displacement
- ⊕ Railways
- ⊕ Monasteries and churches

Compiled by H.G. Sargsyan

Compiled by **H.G. Sargsyan**

